



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Чтобы не забыть  
Несколько воспоминаний

1904

491.99-8  
U-44

50 K.

Cepedezuela

b/

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго  
Учебнаго Округа

2. ԱՀԱՑԵԱՆՑ

400р


491.39-3  
Q-44

ՈՒՍՈՒՄՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻԻ

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի, Գանովսկի փող. № 3.

Tipografiia M. Vartanianca, Ganovsk. ul. d. № 3.

1904

06 FEB 2013

Пересорбционе

04 MAY 2010

## ԱՐԱՋԻՆ ՎԱՐԺԱՐԻԹԻՒՆ

ԺԻԺԵՐԱԿԻ ՑԻՇԱՀՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
Առաջւան բոյնն էր յիշում:

Մէկ անգամ էր նա բոյն շինել,  
եւ շատ անգամ կարկատել,  
Բայց այս անգամ վերադարձին՝  
Բոյնն աւերակ էր գտել:

Այժմ նորից բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
Առաջւան բոյնն էր յիշում:

Նա յիշում էր անցած տարին  
իր մնուցած ձագերին,  
Որոնց ճամպլին յափշտակեց  
Արիւնաբռու թշնամին:

Բայց նա կրկին բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
Առաջան բոյնն էր յիշում:



3359

40

ՄԱՂԹԱՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ

Արի դու, արի,  
Քո գալըդ բարի,  
Սիրուն նոր Տարի,  
Նոր օրեր բեր մեզ:  
Զիւն տուր սարերին,  
Անձրև՝ արտերին,  
Կարկուտը՝ չարին,  
Զով արել՝ մեզ:  
Անթուփ ծաղիկից,  
Աներկ կարմրուկից,  
Բարի ցաւերից  
Ազատ պահիր մեզ:  
Մայրական գըթով,  
Գրկաբաց ձեռքով,  
Ուրախ ժպիտով  
Առ քո գիրկը մեզ:

ԳԻՒԼԵԱԶ ՏԱՏԸ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԹՈՒՑՆՈՒԽՄ ԻՌ  
ԹՈՒՆԵՐԻՆ

Մէկ անգամ Գիւլնազ տատին շրջապատեցին իր  
թոռները և ստիպեցին, որ տատը թոչնիկներ շինէ  
իրանց:

Տատն էլ վեր առաւ փոքրիկներից մէկին, դրաւ  
ծնկան վրայ, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր  
թափ տալով երգեց.

ՂՌԼ—ՂՌԼ—ՂՌԼ,  
Ա դու—ՂՌԼ.  
Նակ, նակ,  
Ա—դու—նակ,  
Թը՛ռռռ...

Երեխան թուաւ, գետնի վրայ կանգնեց և ծիծա-  
ղելով ասաց:—Ուր է, տատիկ, ես աղունակ շըդառայ:  
Տատիկը պատասխանեց.

—Վնաս չունի, հոգիս, դեռ փոքրիկ ծիտիկ ես,  
երբ որ կըմեծանաս, աղունակ կըդառնաս:

Ցետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի գիրկը և ասաց.

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաշաղակ շինես...

Տատիկը նրան էլ դրաւ ծընկներին և առաջւան  
պէս երգեց.

Հա—Հա—Հա,  
Կա—Հա—Հա  
Ղակ, ղակ,  
Կա—Հա—Ղակ  
Թը՛ռռռ...

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շի-  
նես, ասաց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր  
թոցնելով երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլւլում եմ,  
Ճիկ, ճիկ, ճիկ.

Ոստոստում եմ, թոշկոտում եմ,

Տիկ, տիկ, տիկ.

Արի, թերիկ,

Արի, փետրիկ,

Որ ես դառնամ

Փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ.

Պիծիկ, միծիկ,

**Թը ոռո...**

**ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՇ**

**Գառալ.**

ՃՌԵ—ՃՌԵ—ՃՌԵ—ՃՌԵ, իմ վառիկներ,

Սիրուն ճուտեր, հաւ մարիկներ,

Ոսկեփետուր աքլարիկներ,

Եկէք կերէք ձեր հատիկներ:

**Մանուկներ.**

Արամ, Աշխէն, Վարդան, Խորէն,

Սանդուխտ, Ճուշան, Հայկակ, Սուրէն,

Գնանք, տեսնենք հաւերն ուր են:

**Տեսէք, տեսէք, չալ չալ հաւեր**

**Հեռու քաշել, կուտեն, որդեր.**

Այստեղ փոքրիկ, փամփլիկ թմրիկ,

Պղտիկ ճուտիկ կուտիկ կուտիկ.

Զար փիշիկը մօտ է գալիս,

Սև ձագին է մարիկ տալիս.

Թաթը մեկնեց,

Վզից բռնեց.

Աքաղաղներ, հաւ մարիկներ,

Պահպանեցէք ձեր ճուտիկներ:

**Աքաղաղներ.**

Հասէք, հասէք, օգնեցէք,

Զար փիշիկին պատժեցէք:

**Հաւեր.**

Ժողովւենք, միանանք,

Զար կատուին վրայ տանք:

**Բոլորը.**

Տեսաք, տեսաք ինչ եղաւ,

Գող կատուն որ մեզ տեսաւ,

Խիստ վախեցաւ ու փախաւ.

Ուրեմն ապենք միասին,

Որ մօտ շրգայ թշնամին:

**ՎԻԾԱԿԻ ԵՐԳԵՐ**

Եղբայրս ծառի տակին,

Սաղմոսը կուն տակին.

Սաղմոսն անգիր է արել,

Լեզուն բիւրիւ է դառել:

Իմ եղբայրը սարումն է,  
Ճըւին գօտկածալումն է.  
Եղբայր ջան, շըւիդ ածա,  
Քոյըլդ Լուսա քարումն է:

Սարէն կըգայ ձիաւոր,  
Մեր առնը չարդախաւոր,  
Հրէս եկաւ եղբայրս,  
Երեք օրւան թագաւոր:

ՏԱԻԱՐԱԾԻ ԾԱՇՀ

Մի խամ տաւարած, բաւական քաղցած, աղրըի  
մօտ նստած, ուտում էր չոր հաց:  
—Ցամաք մի ուտիլ, ասաց ընկերը:  
—«Բա ինչով ուտեմ, ուրիշ բան չունիմ»:  
—Դանակով, եղբայր, դանակով..  
—Այդ լաւ ասացիր. դանակով կտրեմ, ջրումը  
թրջեմ, էլ ցամաք չուտեմ:

ՀՈՎԻԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջը մահճակալ,  
Զեշոտ քարը զլխակալ,  
Մի հին կարպետ ուսերին՝  
Այս է հովի անկողին:

Երբ անձրի է կաթկաթում,  
Եւ կարպետը թըլսկթըլխկում,  
Հովին անուշ քնի մէջ,  
Քաղցը երազ է տեսնում,  
Եւ խնդում,  
Ծիծաղում...  
Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ, քունդ անուշ..

ԶԱՂԱՅՊԱՆԻ ՆՆԶԱՐԱՆԸ

Երեք-չորս հատ ջաղացաքար՝ կարգով շարւած  
պտտում են, իրանց ահեղ գըրգուոցով ամրող շէն-  
քը դըղըրդում են, շանշախների շըխչըխկոցից մարդի  
ականց խլանում է, բայց ջաղացպանն ալրաթաթախ  
խոր քնի մէջ խորմիում է...

ՊԱՐԶԱՄԻՏԻՑ ՀՈՎԻԻ

Օգոստոսին էր, թէ յուլիս ամսում, լաւ շեմ յի-  
շում,—մի անմեղ հովիւ, քաղաք չըտեսած, իր ոչ-  
խարակալ երկայն մահակը ուսին դրած՝ մտաւ բա-  
զարը խլըշկոտալով, զարմանալով:

Խրտնած պախրի պէս շատ դէս-դէն ընկաւ, վերջը  
կանգ առաւ մրգավաճառի խանութի առջև և աշքը  
ձգեց լիք թարախներին, հասուն մրգերին:  
Ի՞նչ պտուղ ասես՝ որ նա չըտեսաւ, չըհիացաւ—  
տեսակ-տեսակ տանձ ու խնձոր, դեղձ ու խաղող, թուզ

ու սալոր, նուռ, սերկեմիլ, ունար ու հուն, կարմիր,  
փայլուն...

Հովիւը նայեց մրգավաճառին ու մնաց ապշած,  
որ այնչափ հասուն մրգերի միջին, ձեռք չէր դիպցնում  
մէկին կամ միւսին։ «Մա կոյր կըլինի», ինքն իրան  
ասեց և փորձել ուզեց։ Մահակը մեկնեց դէպի բախ-  
կալը և քիչ էր մնում աշքն էր կոխում։

— էյ, ինչ ես անում, գլուց բախկալը սաստիկ  
բարկացած։

— Բա, հէնց իմացայ, դու կոյր կըլինիս. եթէ  
դու կոյր չես և լաւ ես տեսնում, բա այդ մրգերից  
ինչի չես ուտում։

## ՀՈՐՍ ԵՂԱՍԱԿ

### I

Օրը տաքցաւ, ձիմը հալւեց արկից.  
Քըշքըշալով զուր է հոսում դռներից,  
Մար ու ձորեր զարդարւեցին կանաչով,  
Դաշտը ծածկւեց ոչխարների հօտերով։  
Հա—հա—հա, — գարուն է.  
Տիսէր, ինչպէս սիրուն է։

### II

Մաստիկ շոգ է. ցորեն գարի հասել են,  
Հնձողները խոտը քաղել, դիզել են,  
Բոլոր ծառեր ծածկըւել են տերեսով,  
Պտուղները «ճիթ» են անում ժպտալով։

Հօ—հօ—հօ, ամառ է,  
Արեր խիստ կըվառէ...

### III

Ջոգերն անցան. պտուղները քաղեցին,  
Հացով, մրգով ամբարները լցըցին,  
Երկինքն ամպեց, բարակ անձրև է մաղում,  
Մերկ դաշտերը և ծառերը ողողում։

Էյ—էյ—էյ, — աշուն է,  
Տիսէր, ինչպէս նախշուն է։

### IV

Օրը կարճ է, արև չըկայ, շատ ցուրտ է.  
Ճերմակ ձիմը ըուլա-քուլա կըբրդէ.  
Մարդ, անասուն բուր բորանից գախեցած,  
Տաք-տաք տներ, խոր-խոր բներն են մտած։  
Օյ—օյ—օյ, ձմեռն է,  
Անտանելի մի բեռն է...



### ԵՐԿՐԱԴՈՐԾ

Ո՞հ, երկրագործ, երկրագործ,  
Քանի սիրուն է բո. գործ։  
Սրեր չըծագած՝ մաճն է քո ձեռքիդ, եօթը զոյդ  
եղ, գոմէշ լծած գութանիդ, ծըռում ես, պատուում դու  
կոշտ ու խոպան, լեռներ ու ձորեր, անդ ու անդաստան։  
Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի, հաճար ու վար-

սակ, բրինձ ու բամբակ: Ելում են, ծաղկում ճակտիդ  
բըտինքով քո վարած գաշտեր, որ լի էր փշով:

~~Ենցնում է գարուն, ոսկեզօծ հասկեր լցւում, ծած-~~  
~~կում են քո սիրուն արտեր: Քամին փշում է, արտը~~  
~~տատանում, կարծես նոր-նարս է, հօրանց է գնում:~~

~~Համնում է ամառ. մանգաղը ձեռքիդ, հնձում ես,~~  
~~հնձում, խուրձեր կապոտում, խուրձերը բարդ-բարդ~~  
~~սայլով ու ձիով կրում ես, բերում կալումդ դիզում:~~  
~~Հաշան ես անում, կասում ու բամում, մարուր ցորենը~~  
~~տանըդ ամբարում, իսկ չոր գարմանը՝ ձմեռւան պա-~~  
~~շար՝ անամոց համար մարաքը լցնում:~~

Եւ երբ փշում է ցրտաշունչ ձմեռ, խըճիթումնըս-  
տած, քո խոփն ես սրում, արօր ու գութան սարքում,  
պատրաստում, և դարնան գալուն նորից սպասում:

Ա՞հ, երկրագործ, երկրագործ,  
Քարի սիրուն է քո գործ . . .

Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացւում է շուտ արտը գնամ,  
Պատուեմ սուր խոփով ես կուրծքը հողի,  
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ,  
Մինչեւ օրերը ամրան արկի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդը քեզ հետ,  
Թէ Աստւած ուզեց գու կանաչեցիր,  
Թող դարդը մեռնի գետնի տակ անհետ,  
Դու ինձ մխիթար կրկին տուն գարձիր:

Եւ ջերմ աղօթքով ծիրամօր առջեն  
Ես մոմ կըվառեմ, ես խունկ կըծխեմ,  
Որ քեզ պարզեէ մի առատ անձրե,  
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին, մեղքերիս համար,  
Երժանի շըլնիմ, ծով կըդարձնեմ  
Ես տաք բըտինը ճակտիս արեառ,  
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ շըթողնեմ:

Ծլիք, կանաչիք, ոսկի սաւանով  
Ժածկիր իմ արտը ողջ ալեծածան.  
Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով  
Տուր ջարդւած սրտիս մի քուն հանգստեան:

Հ Ա Տ Ի Կ

Ամպեր են վազում բարձր լեռներից խիստ բամու  
ձեռից. փախչում, գնում են, կարծես խրտնում են  
ծարաւ արտերից:

«Կացէք, այ ամպեր. ինչու էր փախչում, անձրե  
չէք թափում, մեր ծարաւ արտեր՝ օրեր համբելով,  
ձեզ. են սպասում:»

«Քամի, զու քամի, խղճա արտերին, թող այդ  
ամպերին, թող կանգնեն թափեն անձրեկի շիթեր,  
շրեն մեր արտեր:»

Քամին հանդարտւեց, մեղմ անձրե թափեց, ար-  
տերը ջրեց: Երտը բարձրացաւ, ցօղուն արձակեց ու  
հասկեր բռնեց: Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,  
խնդաց ու ասաց.

«Փառք Քեզ, ով Աստւած,  
Որ տուիր մեզ հաց,  
Հըթողիր քաղցած»

Եղիսթի ՀԱՆԱՔԸ

(Առասպել)

Մէկ օր Եղիան վերսից կանչեց և մարդկանց  
յայտնեց, թէ այսուհետեւ ձեզ չեմ օգնելու, անձրև չեմ  
տալու: Եյս ասաց թէ չէ՝ Երկինքը կապւեց. Էլ ոչ մի  
կաթիլ անձրև շրկաթեց:

Եւ այնուհետեւ աղբիւրը լռեց, առուն ցամաքեց,  
վարդը թառամեց, անտառը գեղնեց, դաշտը սեացաւ,  
արտը չորացաւ, անսառւն և մարդ, թռչուն և զաղան  
անջուր մնալով՝ ուշաթափ եղան:

Եղիան որ տեսաւ, թէ ինչ բան եղաւ, ծիծաղը  
եկաւ և ծիծաղեցաւ. բայց ինչպէս ծիծաղ... այնպէս  
որոտաց, որ Երկինք գետինք թնդաց, դղբրդաց, սև ամ-  
պերն իրար այնպէս զարկւեցին, որ փայլակ, կայծակ,  
շանթեր հանեցին: Երկինքը մթնեց, յորդ անձրև թա-  
փեց, նըւաղածներին թրջեց, ողողեց և ուշբի բերեց:

Եւ այնուհետեւ սար ու ձոր զարթնեց, աղբիւրը  
քլըլաց, շուշանը ծաղկեց, առուն բըշըշաց, արտը  
կանչեց, արտուտը երգեց, աքլարը կանչեց, հաւը  
ձու ածեց, մաքին զառ ծնեց. զառը մորթեցինք Ե-  
ղիայի համար, որ մեզ խնայի, էլ հանաք չանի:

ՀՆՁԻՌՆԵՐ

(Խաղ)

Ահա եկաւ խոտ հարողը  
Ուսին զրած գերանդին,  
Բոլոր խոտը սա հարել է,  
Բան չի թողել մեր հանդին:

—Այ խոտ հարող, ասա տեսնենք,  
Դու ինչպէս ես խոտ հարում:  
«Այսպէս ահա, լաւ նայեցէք,  
Ես այսպէս եմ խոտ հարում—

Հէպ, հօպ,  
Հէպ, հօպ...

—Այս, ինչ լաւ է, եկէք սովորենք,  
Մենք էլ այսպէս խոտ հարենք—  
Հէպ, հօպ,  
Հէպ, հօպ...

Ահա եկաւ արտ հնձողը  
Զեռքին փայտէ մատնոցներ,  
Պատրաստել է սուր մանգաղը,  
Պէտք է հնձէ մեր արտեր:  
—Հնձող եղբայր, ասա տեսնենք,  
Դու ինչպէս ես հունձ անում,  
«Այսպէս ահա, լաւ նայեցէք,  
Ես այսպէս եմ հունձ անում—

Հէպ, հօ՛պ, հէպ,  
Հէպ, հօ՛պ, հէպ:  
Ա՛խ, ինչ հեշտ է, եկէք սովընը,  
Մենք էլ այսպէս հունձ անենք—  
Հէպ, հօ՛պ, հէպ,  
Հէպ. հօ՛պ, հէպ..

ՈՍԿԻ ԶԿՆԻ

1

Մի ծերուկ ձկնորս և իր պառաւ կին  
Բընակում էին Մեծ ծովի ափին:  
Ծերը գնում էր ձուկ բռնում ծովից,  
Պառաւն էլ տանը թել մանում բըթից.  
Այսպէս միասին՝ մի հին գետնատան,  
Երեսուն երեք աարի ապրեցան:

Եհա մէկ օր էլ ծերը զնաց ծով,  
Որ ձուկը որսայ իր մաշւած ցանցով.  
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,  
Առաջին անգամ միայն տիղմ հանեց:  
Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,  
Ցանցը զուրս եկաւ ծովային խոտով:  
Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց,  
Որ կարէ ասել, թէ ինչ դուրս հանեց.  
Նա բերաւ իր հետ մի ոսկի ձկնիկ՝  
Զկանց արքայի դուստը գեղեցիկ,  
Ծերի ցանցն ընկաւ, իրը խեղճ գերի  
Ոսկի ազդիկը ձուկ-թագաւորի,

Խեղճ ոսկի ձկնիկ, ինչպէս է խնդրում,  
Մարդկային լեզով ծերին ազաշում.  
«Թող ինձ, թող, ծերուկ, թող ինձ անվտանգ,  
Քեզ կըվճարեմ թանգագին փրկանք.  
Ինչ սիրուդ ուղի, ինչ որ կամնաս,  
Ուղիղն եմ ասում, ինձնից կստանաս»:  
Վախեցաւ ծերը, մաց զարմացած:  
Նա այնքան տարի ձկնորս էր եղած,  
Բայց ձկան մասին երբէք չէր լսել,  
Թէ նա մարդու պէս կարող է խօսել:  
«Դիա, Տէր ընդ քեզ, ասաց ծերունին,  
Ինձ չէ հարկաւոր փրկանք թանգագին.  
Դիա քեզ համար զու ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»:

2

*ՅԱՅ* գէպից յետոյ ծերը տուն գարձաւ,  
Պատմեց պառաւին՝ թէ ինչ բան տեսաւ.  
Այսօր ես ծովից, զիտես ինչ, ա կնիկ,  
Բռնեցի յանկարծ մի ոսկի ձկնիկ,  
Ոսկի եմ ասում և ոչ քու զիտցած,  
Այսպիսի հրաշք ոչով չի տեսած:  
Նա խօսել զիտէր ուղիղ մեր լեզով,  
Ազաշանք արաւ, որ յետ ձգեմ ծով.  
«Թող, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ,  
Քեզ կըվճարեմ թանգագին փրկանք».  
Բայց ես ոչ մի բան չըպահանջեցի,  
Ոչինչ չեմ ուզում, գնա, ասացի,



Գնա՞ քեզ համար դու ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրիլ աղատ, ապահով»...  
Պառաւը երբ որ այս բանը լսեց,  
Խեղճ ալեորին շատ յանդիմանեց,  
Թէ ինչու ձկնից փրկանք չի ուզել,  
Ու այնպէս ձրի յետ ծովին է ձգել:  
«Այ յիմար անմիտ, հայհոյեց ծերին,  
Գոնէ կասէիր դու ոսկի ձըկին՝  
Մի նոր տաշտակ տուր տանեմ իմ կնկան,  
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...  
Դարձաւ ծերունին ծովի ափ գնաց.  
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանւած)...

Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.  
Ծերը զլուխ տրւաւ ու պատասխանեց.  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Ինձ նախատում է իմ պառաւ կնիկ,  
Հանդիստ չի թողում խեղճ ալեորիս,  
Վըրաս մըթմըրթում, ուշունց է տալիս.  
Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան,  
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...  
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց,  
«Գնա՞ Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.  
Թող լինի այնպէս՝ ինչպէս կամենաք,  
Գուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»..

Յ

Յետ դարձաւ ծերը դէպի իր տնակ,  
Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ,  
Բայց կինը գոհ չէր. նա այս անդամ՝ էլ  
Ըսկսեց ծերին սաստիկ նախատել.  
«Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,  
Ինչու մի ուրիշ բան չըխնդրեցիր.  
Յետ զնա՞ շուտով, անմիտ անասուն,  
Գլուխ տուր նըրան և ուզիր մէկ տուն»...  
Ծերունին դարձաւ ծովի ափ գնաց,  
(Այս անդամ տեսաւ ծովը պղտորւած)...

Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.  
Ծերը զլուխ տրւաւ ու պատասխանեց.  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Ինձ շատ նախատեց իմ պառաւ կնիկ.  
Խեղճ ալեորիս հանդիստ չի թողնում,  
Հիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»...  
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց  
«Գնա՞ Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.  
Թող լինի այնպէս՝ ինչպէս կամենաք,  
Գուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»...  
Ծերը ետ դարձաւ կրկին դէպի տուն՝  
Էլ նա չըգտաւ իր հին գետնատուն.  
Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով.  
Կըտուրից հանած ծըխահաններով,  
Պատ ու վառարան մաքուր սըւաղած,

Կըով ու կաւճով սիպտակացրած.  
Վարպետի տաշած, կաղնի տախտակից,  
Մեծ զուռն էր կախած լայն բակի կողմից:  
Պատուհանի տակ կինն ուռած նստել՝  
Իր չարութիւնից ուզում է տրաքել.  
Ի՞նչ անէծք ասես աշխարհիս տակին՝  
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.  
Վերջը երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,  
Մոռթը կախած՝ ծերունուն դարձաւ.  
«Անշնորհ ծերուկ, տնակ ուզեցիր,  
Երեխ ըռ մէջ մեծ բան կարծեցիր.  
Յետ դարձիր, անխելը, յետ դարձիր գնա,  
Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա,  
Որ էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կին,  
Ուզում եմ լինել գերազնիւ տիկին»...

4

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց,  
(Այս անգամ տեսաւ ծովը վրդովւած)...

Էսկսեց կանչել ոսկի ձկնիկին,  
Չուկը լողալով մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցըն.  
Ծերը վլուխ տրւաւ ու պատասխանեց.  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Հանդիստ չի տալիս ինձ իմ շար կնիկ,  
Ել չի կամենում մնալ գեղջուկ կին,  
Ուզում է լինել գերազնիւ տիկին.  
Չը գիտեմ՝ զլուխն ինչ բամի մտաւ,  
Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
«Գնա, Տէր ընդ քեզ, մի տիրիլ, ասաց.  
Թող ըռ պառաւը հինց այսօրւանից  
Ազատ համարւի իր գեղջկութիւնից»...

Յետ դարձաւ ծերը, և ինչ է տեսնում.  
(Կարծեց ցնորք է աչքին երեւմ).  
Մի տուն հոյակապ, վերնասրահում  
Պառաւն է կանդնած ինչպէս նոր խանում.  
Հազին սամուրէ բաճկոնակ սիրուն,  
Գլխին դիպակէ չարդալթ զոյնգոյն,  
Վիզը զարդարած մարդարիտներով,  
Մատերին մատնիք անզին քարերով,  
Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան,  
Միւս հազուտներն էլ մետաքս պատւական:  
Ծառաներ ունի մի բանի տասնեակ,  
Բոլորն էլ իրան հըլու հպատակ:

Մարդին որ տեսաւ՝ պառաւը կատղեց,  
Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց.  
(Երեխ ուզեց ցայց տալ իր մարդին,  
Որ հիմա ինքն է գերազնիւ տիկին).  
Հայոյանք թափեց ամենքի վըրայ,  
Տեղի անտեղի քօթկեց անխնայ.  
Մէկի մազերից բռնեց քաշըշեց,  
Միւսին էլ մի լաւ ապտակներ զարկեց,  
Ծերը մօտեցաւ դող դող քայլերով՝  
Ասաց պառաւին՝ խոր զլուխ տալով՝  
«Բարնվ գերազնիւ խանում-խաթունիս,  
Հիմա խօմ գ՞ն ես, հանգիստ կըլինիս»...

Պառաւ տիկինը այնպէս բղաւեց,

Որ խեղճ ծերունու լեղին պատառեց:  
Նըրան հրամայեց, որ խսկոյն զընայ  
Գոմն աւլէ, քերէ ու այնտեղ մնայ:

5.

Մէկ-երկու շաբաթ հազիւ անցկացաւ,  
Պառաւ խանումը նորից կատղեցաւ.  
«Ճուտ կանես կերթաս, ասում է մարդին,  
Ու իմ կողմանէ կասես ձկնիկին,  
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Այս խօսքի վրայ ծերունին սոսկաց,  
Եւ աղաշելով պառաւին ասաց.  
«Դժւել ես, ա կնիկ, ես չեմ հասկանում,  
Արդեօք դու դիտե՞ս՝ ի՞նչ ես ցանկանում,  
Մէկ նայիր վըրադ, շէնք ու շնորհքիդ,  
Լըրլըրան լեզւիդ, ծուռումուռ քայլքիդ,  
Ախըր ի՞նչ ունիս թագուհու վայել,  
Որ խելքիդ այդպէս քամի է փչել.  
Արի լսիր ինձ, մի անիլ այդպէս,  
Ամբողջ աշխարհին կը ծիծաղեցնես»...

Էլ շհամբերեց մեր պառաւ տատը,  
Որ վերջացնէր մարդն իր խըրատը.  
Նա այնպէս զոռաց, այնպէս որոտաց,  
Որ ամբողջ տռւնը հիմնովին թնդաց.  
«Ի՞նչպէս թէ այդպէս, յանդուզն, ըստահակ,  
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ,  
«Համարձակում ես, զոեհիկ անդէտ,  
Վիճել ինձ նման ազնիւ տիկնոց հետ.

Քեզ հրամայում եմ պատւաւոր խօսքով,  
Որ խսկոյն գնաս ըո յօժար կամքով.  
Եթէ ոչ՝ ահա ժողովւած կշաիդ,  
Սրանը կըտանեն՝ խփելով վզիդ»:  
Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.  
(Այս անդամ տեսաւ ծովը սեացած),  
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Զուկը լողալով մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերով», հարցրեց.  
Ծերը զլուխ տըւաւ ու պատասխանեց.  
«Թղորմած լինիս, Թագուհի Զկնիկ,  
Էլի է կուռում իմ պառաւ կնիկ.  
Ներիր ինձ, խնդրեմ, ես ամաշում եմ,  
Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.  
Բայց ո՞ր զուրն ընկնիմ, հանգիստ չի թողում.  
Կըակն է զցել, այրում խորովում.  
Գնա, ասում է, — ախ, նզովեալ կին —  
Ճուտ զնա ասա ոսկի ձկնիկին,  
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
Ուզում եմ ազատ թագուհի լինել».  
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
«Գնա, Տէր ընդ բեզ, մի տխրիլ, ասաց,  
Թող ըո պառաւի ուզածը լինի,  
Թող զնա դառնայ ազատ թագուհի»:

6.

Ով կարէ պատմել թէ ծերն ի՞նչ տեսաւ,  
Ելր ձկան մօտից տուն վերադարձաւ.

Ել ինչ տուն, ինչ բան... ուռ արքայական  
Ապարանք ասա, կամ հսկայական  
Մեծ մեծ պալատներ շարիշար կանգնած՝  
Բարձր բուրդերով չոքս կողմը պատած.  
Ճքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,  
Մարդ կըշըշկլէր, եթէ մէջն ընկնէր:  
Ծերը բարձրացաւ մարմար սանդուղքով.  
Մի դահլիճ մտաւ խիստ պատկառանքով.  
Առջեր բացւեց մի նոր տեսարան,  
Երբ այնտեղ գտաւ իր պառաւ կնկան.  
Նա հիմա աղատ թագուհի զառած՝  
Առօք ու փառօք ճաշի է նստած.  
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէղեր,  
Ոտի են կանգնած որպէս ծառաներ,  
Թագուհու համար զինի են ածում  
Եւ ահուղողով աչք-ունքին նայում.  
Ճէմքում կանգնել են ահեղ զինուրներ,  
Ուսերին բռնած կացնաձև սրեր,  
Մեհակ պառաւն էր սեղանին բազմել,  
Ո՞վ կը յանդգնէր նրա հետ նստել.  
Բայց կերակուրներն այնքան շատ էին,  
Որ հարիւր հոգի կըկտացնէին...  
Եւ բանի տեսակ անծանօթ բաներ,  
Ի՞նչ անուշեղէն, ինչ տապականեր...  
Պառաւն ուսում էր մեծ ախորժակով,  
Ու զինին դարտկում լիքը բաժակով,  
Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,  
Որ քաղցրացնէ շըթունք ու բերան։  
Ծերն այս տեսնելով մնաց շփոթւած,

Բնկաւ պառաւի ոտքերն ու ասաց.  
«Բարնվ քեզ, բարնվ, ահեղ թագուհի,  
Քո մեծութիւնը յաւիտեան լինի»:  
Այս խօսքից յետոյ կամաց շըշնչեց,  
Ու փափառով պառաւին հարցրեց.  
«Հիմա որ բախտի վերին ծայրումն ես,  
Խօմ բաւական ես, ա կնիկ, ինչ կասես»...  
Թագուհի դառած պառաւն այս անգամ  
Մարդի երեսին շընայեց անգամ.  
Հրաման մոմուաց նա բթի տակին,  
Որ զուրս վոնդեն մեր անկոչ հիւրին:  
Հէնց որ լսեցաւ թագուհու հրաման,  
Հնազանդ երեալ ամենքն ուզեցան.  
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէղեր,  
Ինչպէս որսորդի արնախում շներ,  
Խփելով ծերի շնքակոթին՝  
Ճքեղ դահլիճից զուրս վոնդեցին.  
Ճէմքումը կանգնած պահապաններն էլ  
Իրանց կացիններն էին պատրաստել,  
Վրայ վագեցին ամենքը մէկէն,  
Ու քիչ մնաց որ՝ խեղճին խողխողեն։  
Ինչպէս որ եղաւ, մի կերպ զուրս պըծաւ,  
Գուրսն էլ ամբոխի ծաղըի տակն ընկաւ,  
Որ կարծես նրան լինէր սպասում  
Անձրեի տակին, ցեխոտ փողոցում.  
— «Այ թէ լաւ արին, ծերուկ զու անզէտ,  
Ում հետ ես մեկնում անճոռնի ոտներդ,  
Թող այդ քեզ համար լինի լաւ խրատ,  
Որ էլ չըցանես մանը կտաւհատ»...

7.

Այս գէպքից յետոյ շատ օրեր չանցան,  
Պառաւի այծերն էլի մօտ եկան.  
Ուղարկում է նա իր իշխաններին,  
Որ գտնեն բերեն արտաքսած ծերին:  
Եկաւ ծերունին: Պառաւն սկսեց.  
«Դու պէտք է գնաս ձկան մօտ, ասեց.  
Կերթաս, խոր զլուխ կըտաս դու նրան  
Ու իմ փափաղը կը յայտնես իրան.  
Կասես՝ չեմ ուզում մնալ թագուհի,  
Ուզում եմ լինել ծովի տիրուհի.  
Ուզում եմ ովկեան ծովումը կենալ,  
Ոսկի ձկնիկին ծառայ ունենալ,  
Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,  
Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարի»...

Պառաւին լսեց ծերը լուռ ու մունջ,  
Առանց յայտնելու որ և է արտունջ:  
Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց,  
(Այս անգամ ծովը խիստ էր փոթորկւած,  
Փրփրած ալիքները սարեր դառնալով  
Իրար են զարկում ահեղ գոռալով)...

Ողբաձյն կանչեց ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ, հարցընց,  
Ծերը զլուխ տըւաւ ու պատասխանեց,  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Իսպառ գժւել է իմ պառաւ կնիկ,  
Ի՞նչ անեմ արդեօք այդ նզովեալին,

Մինչև երբ տանջւիմ քալթառի ձեռին.  
Էլ չի կամենում թագուհի լինել,  
Այլ տես անիծածն ինչ է միտք արել՝  
Իշխել է ուզում բոլոր ջրերին  
Ու իշխանուհի դառնալ ծովային.  
Ուզում է Ովկեան ծովումը կենալ,  
Ոսկի ձկանդ ծառայ ունենալ,  
Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս,  
Ու ինչ ուզենայ, շուտ կատարում տաս»...

Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,  
Բայց էլ ծերունուն շրպատասխանեց,  
Ջրի երեսին շրբմիեց պոչով  
Ու անցաւ գնաց գէպի խորին ծով...  
Ճատ մնաց ծերը և շատ նայեցաւ,  
Բայց ոսկի ձկնիկն էլ չերեցաւ,  
Գնաց զլխակոր որ յայտնէ կնկան,  
Թէ ինչ փորձանքի մէջ զցեց իրան...  
Եւ գնաց տեսաւ... (բայց ինչ տեսնի լաւ,  
Որ արդար լինի և ոչ անիրաւ),  
Հին խուղի շէմքում պառաւը նստած,  
Կոտրած տաշտակը առաջն ընկած...

---

## ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Ս Պ Խ Ա Կ Ն Ե Ռ

Մի ճարպիկ թռչնորս գարնան օրերում անտառների մէջ սոխակ էր որսում, վանդակում դնում: Խեղճ սոխակները վանդակում փակւած՝ ճռողում էին ճարները կտրած, թէև ի հարկէ՝ նրանք կուղէին, որ անտառներում ազատ ման գային. բանտում փակւածներն ինչ սիրտ կունենան, որ գեռ երգեն էլ կամ զբարձանան:

Բայց էլ ինչ անէին, որ գոնէ չերգէին և իրանց սև օրը միասին չողբային: Նրանցից միայն մէկը չէր երգում, նա իր սիրելու կարօտն էր քաշում: Արտաւաթոր աշքերով նա դաշտերին էր նայում, դիշեր ցերեկ տանջւելով՝ ընկերունուն էր յիշում: Իր ընկերունուց խեղճն անջատած, հալում, մաշտում էր վանդակում փակւած:

Անբախտ սոխակը վերջը մտածեց. «Այսպէս չի լինիր, ինքն իրան ասեց. «անխելք մարդիկն են շարունակ տիրում, իսկ խելօրները հնար են վնտրում, որ դժբախտութեան մի կերպով վերջ տան: Կարծեմ ես ինքս էլ, եթէ աշխատեմ, իմ թշւառութեան մի ճար կը դտնեմ: Մեզ խօմ չեն բռնել, որ մեր միսն ուտեն, այլ որ մենք երգենք, իրանք էլ լսեն: Մեր այս պարոնը, ինչպէս կերեի, երգեր լսելու սաստիկ սէր ունի. եթէ

իմ ձայնով ես սրան դիւը գամ, փոխարէնն անշուշտ պարզեկըստանամ, ևնա վերջ կըտայ իմ ստրկութեան»:

Այսպէս յոյս տըւաւ սոխակն ինքն իրան, և ոգեորւց, երգել սկսեց. և անուշ ձայնով, սիրուն երգերով նա իր պարոնին զմայլեցրեց:

Պարոնն էլ հէնց այդ կուգէր, և միայն նրան հաւանեց և լաւ խնամեց, իսկ միւսներին՝ վատ երգողներին իսկոյն արձակեց:

Եւ այնուհետև մեր խեղճ սոխակին  
Աւելի ամուր ու պինդ փակեցին...+

Թ Ռ Զ Ո Ւ

Մի ձմռան օր էր. փշում էր քամին,  
Զիմի քուլէքը ամեն տեղ ծածկում,

Մարդ և անասուն ցրտի երեսից

Փախչում էր մտնում տան մէջը փակւում:

Իմ պատուհանին, որ պինդ փակւած էր,  
Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թռչուն.

Նա դողդողում էր, թևերը շարժում  
Եւ իր կտուցով խփում ապակուն:

Տեսնելով թռչնի այդ դառն վիճակ,  
Յուղւեց իմ սիրտը, զթացի վրան,

Չըթողի երկար տանջւել այն ցրտում,  
Իսկոյն սենեակս առի ես նըրան:

Քաղաքեց ձիմնը, հանդարտեց քամին,  
Իմ սիրուն թռչնակը նորից ուժ առաւ,

Ուղղեց թևերը, սաւառնեց օղում,  
Եւ մի քաղցր երգ երգել ըսկսաւ:

Անուշ էր երգը, մեզմ ու զբաւիչ,  
նա շարժեց իմ սիրտ, ազդեց իմ հոգուն,  
Բոնեցի նրան, դրի վանդակում  
Որ զոհ չըգնայ կատաղի քամուն:  
Բայց մի ժամշանցած, նա տխուր, տրտում,  
Գլուխը կախեց, արձակեց մի ճիշ.  
Մօտեցայ նրան, նա յետ-յետ քաշւեց,  
Կասես ես նրան լինէի դահիճ: X  
«Այո՛, դժւար է, ասացի նրան,  
Աննման երգիչ, սիրելի թռչնակ,  
Ընկերից բաժնւած, քո բնից հեռու  
Վարել քեզ այսպէս բանտարկեալի կեանք:  
Ահա կըբանամ քո բանտի դուռը,  
Թռիը դէպի դաշտ և կամ խոր անտառ,  
Գտիր ընկերիդ, սիրէ քո բունը.  
Մահ ու գերութիւն մի է քեզ համար»:

---

ԴԺԻԱՐ ՀԵՏՐՈՒԻԹԻՒՆ

I

ՄԵծ բաղաքներից մէկում կենում էր իր գործին  
լաւ հմուտ մի կօշկակար, Օհան անունով: Վարպետ Օհա-  
նը ինչքան ցանկանում էր հարստանալ, չէր լինում,  
չէր յաջողում: Ինչ զործ որ տալիս էին, շատ գեղեցիկ  
կատարում էր, և զնողները շատ անզամ ասում էին,  
թէ նրա պատրաստած կօշիկները հարիւր տարի կը-  
հազնիք քատ պատէրներ էր ստանում, ամենքը լաւ

դին էին վճարում, բայց վարպետ Օհանը դարձեալ  
չէր կարողանում փող դիզել:

Սրա պատճառն այն էր, որ ամեն տարի վարպետ  
Օհանին Աստւած մի տղայ կամ աղջիկ զաւակ էր  
պարզեցում և բոլոր երեխայրը մեծանում էին առողջ,  
զըւարթ և խաղում այնպէս, ինչպէս ձկները ջրի մէջ:

Իններորդ զաւակից յետոյ վարպետ Օհանի կինը  
մեռաւ և նա մնաց իր իննը երեխանների հետ որք: Սա  
հեշտ բան չէր: Երեխաններից մի քանիսը արդէն դպրոց  
էին գնում. նա մէկին պէտք է մանղալ սովորեցնէր,  
միւսին զրկած ման ածէր, մէկէլին կերակրէր իր ձեռ-  
քով, չորքորդին մի բանով զբաղեցնէր, հինգերորդի  
երեսը լրւանար, մի խօսքով—բոլորի համար պիտի  
հոգս քաշէր, իսկ այս քիչ նեղութիւն չէ: Երբոր ան-  
կողինները ձգում էին, ամբողջ սենեակը դառնում էր  
ննջարան և ամեն տեղ երևում էին մեծ ու փոքր շէկ  
ու թուխ զլուխներ, և խըլլլտում էին ձկների նման:  
Վարպետ Օհանը մինչև կէս զիշեր նստում էր, շինում  
իր բանը և միենոյն ժամանակ շտկում էր այս ու այն  
երեխայի վերմակը, որ բաց չըմնան, չըմրսն և շատ  
անզամ ասում էր ինքն իրան:

—Աստւած ինձ իննը երեխայ է տրւել, փառք  
իրան, ես պատճառ չունիմ տրտնչալու: Բոլոր երե-  
խայքս առողջ են, զեղեցիկ են և բարի:

2.

Չընայած վարպետի խեղճ ապրուստին ու նրա որ-  
դոց քաշած ամեն տեսակ զրկանքին, այնու ամենայնիւ

Նրանք օրէցօք ամրապնդում էին, յուրտը նրանց վնաս-  
չէր տալիս, ցամաք հացը շատ անուշ պատառ էր թւում:

Բայց ահա Զատկի թաթախման երեկոյին, երբ  
վարպետ Օհանը՝ սաստիկ յոգնած՝ տուն էր վերադառ-  
նում, տեսաւ խանութներում զատիկւայ համար շատ-  
զանազան ընծաներ շարւած, մի քիչ կանգնեց ու  
մտածեց.

— Ես էլ պէտք է մի բան առնեմ երեխաներիս հա-  
մար: Բայց ինչ առնեմ, միթէ բոլոր իննի համար մի-  
անգամից: Ո՞չ, այդ իմ կարողութիւնից վեր է. եթէ  
միայն մէկի համար առնեմ, այն ժամանակ միւսները  
պիտի նախանձեն նրան: Ո՞չ, թէ որ պիտի զըւարճանան,  
թող ամենքը միասին զըւարճանան: Ես նրանց մի այն-  
պիսի բան պիտի տամ, որ ոչ ոք նրանցից չըկարողանայ  
լուել, մի լաւ ու թանգագին բան, որ երբէք չըկորցնեն:  
Եւ վարպետ Օհանը մմնելով տուն՝ ասաց.

Երեխէք, ամենքդ էլ տանն էք: Գիտէք, այսօք  
Զատիկ է: Այսօք պէտք է զըւարճանանք, չենք բանե-  
լու, այս երեկոն պիտի ուրախ անց կացնենք:

Երեխայրը վեր թռան տեղերից և վագեցին մօտը:  
— Սպասեցէք, ես ձեզ մի լաւ երդ կըսովորեցնեմ,  
թող այդ երդը լինի ձեզ համար զատիկւայ ընծայ:

Հէնց որ հայրը վերջացրեց այս խօսքը, երեխայրը  
նրան շրջապատեցին, փաթաթւեցին զգին, և խնդրե-  
ցին, որ երդէ խոստացած երդը:

Վարպետ Օհանը կարգով շարեց մանուկներին, իսկ  
երկու ամենափորբիկներին նստացրեց ծնկների վրայ:

— Դէ, այժմ հանդարտ: Ես կերպեմ, իսկ դուք  
կըկրկնէք:

Եւ նա մեզմ ձայնով սկսեց երգել Զատկի երգը.

«Հողմը հնչեց ի հարաւէն,  
Ազատւեցան դաշտք ձիւներէն,  
Բերկութիւն է ամեն տղոց,  
Քըլիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մեծերը ձայն էին պահում ու հետն ասում, իսկ  
փոքրերը գժւարանում էին և սխալում: Վերջապէս  
երգը բերան արին, և ինչքան ուրախացան, երբ տե-  
սան, որ ամենքը խմբովին կարողանում են կանոնա-  
ւոր երգել:

Այսպէս ուրախանում էին նրանք իրանց միակ և  
անշուր սենեակում, մինչդեռ նոյն միջոցին չարացած  
էր և տխուր նոյն տանը իննը սենեակում մենակ ապ-  
րող մի պարոն:

### 3

Ուրախ չէր իննը սենեակում մենակ ապրող աղան:  
Նա մի սենեակումը նստում էր, երկրորդումը ճաշում,  
երրորդի մէջ պառկում, չորրորդումը ման էր գալիս,  
իսկ թէ միւսներն ինչո՞ւ համար էին, — Աստւած զիտէ:

Այս երեկոյին հարուստ աղան ութերորդ սենեա-  
կումն էր նստել, և մեծ բանի վրայ էր. նա մտածում  
էր, թէ ինչո՞ւ նոյն օրւայ կերակուրները տասի տեղ ինն  
էր, մէկն ինչո՞ւ էր պակաս, և ինչո՞ւ էին անհամ բո-  
լորն էլ. ինչո՞ւ սենեակների զերմութիւնը սովորակա-  
նից աւելի կամ պակաս էր մի երկու աստիճանով:  
Ահա այդ տեսակ մտածմունքների մէջն էր, որ նրա

ականջը հասաւ վարպետ Օհանի երդելու ձայնը: Աղան  
երկար ականջ դնելուց յետոյ՝ ասաց ինքն իրան.

— Պատճառն ինչ է արդեօք, որ ես այսքան հա-  
րուստ եմ և տիսուր ու անմիտիթար, իսկ աղքատ  
Օհանը միշտ ուրախ է և զըւարթ: Մէկ գնամ տես-  
նեմ, դրանք ինչով են զըւարձանում այդքան:

Այսպէս մտածելուց յետոյ՝ աղան զնաց Օհանի մօտ:  
Վարպետը նրան պատով ընդունեց և իր աթոռի վրայ  
նրան նստեցրեց, որովհետև էլ ուրիշ աթոռ չունէր:

— Դու ես կօշկակար Օհանը, հարցրեց հարուստ  
աղան:

«Այո, ծառադ եմ: Գուցէ կօշիկ էք ուզում զնել»:

— Ո՞չ, ես դրա համար չեմ եկել: Դու շատ որդի  
ունիս:

«Այո, ծառադ եմ, շատ կան. Աստած տըւել է,  
չի խնայել, գոհանամ Աստուծոյ. ահա, ինչպէս տես-  
նում էք, կան մեծեր էլ, փոքրեր էլ: Եւ այս բոլոր  
բերանները հաց են ուզում և Աստած կերակրում է  
սրանց, փառք իրան:

— Եւ այդ բոլոր բերանները միաձայն երգում են  
ուրախ ու զըւարթ, աւելացրեց աղան ժպտալով: Դիտես  
ինչ կայ, վարպետ, ես ուզում եմ քո երեխաներից մէկին  
վեր առնել և բախտաւորեցնել: Ես կըորդեզրեմ նրան  
և կըկրթեմ իմ հարազատ գաւակիս նման, ինձ հետ  
արտասահման կըտանեմ, հարուստ աղայ կըդառնայ և  
կօգնէ իր միւս եղբայրներին և քոյլերին:

4

Զարմացաւ վարպետ Օհանը: Իր զաւակներից մէկը  
կարող է հարուստ մարդ դառնալ, դրանից լաւ բան  
էլ ինչ կարող էր լինել:

— Ընտրիր որին կամենում ես, ասաց աղան:

Վարպետ Օհանն սկսեց ընտրել, ասելով՝

«Սրա անունն Արամ է: Սրան չեմ տալ. սա գեղե-  
ցիկ կարդում է, ժամումը փոխ է ասում, ժամանակին  
լաւ քահանայ կըդառնայ: Որանից փոքրը աղջիկ է. աղ-  
ջիկը ձեզ հարկաւոր չէ: Յետոյ գալիս է Տիգրանը. սա  
ինձ օգնում է. առանց սրան իմ բանը դժւար կրիմի:  
Սա էլ իմ Օհանիկս է. իմ անւանակիցս է, չեմ կարող  
տալ: Հիմա գանք սրան. սա էլ իմ Յովսէփն է. սա իր  
հանգուցեալ մօր սիրելին էր. եթէ ձեզ տամ, սրա մօր  
հոգին կըվշտանայ. իսկ այս երկուսը այնքան փոքր են,  
որ բարի աղային պէտք չեն գալ:

Այսպէս ջոկջըկեց Օհանը իր բոլոր որդիքը, բայց  
ոչ մէկին չըկարողացաւ ընտրել: Յետոյ դարձաւ երե-  
խաներին և ասաց:

«Երեխէք, ձեզանից մէկն ու մէկը թող ընտրել.  
ով է ցանկանում աղայ դառնալ, կառքերով պտըտել.  
դէ, ասացէք, ինչո՞ւ էք լուսմ, ով ուզում է, թող ասէ:»

Որդիքը պատասխանի տեղ փաթաթւեցին իրանց  
հօրը և պինդ կպան. որը ձեռքը բռնեց, որը զոգնոցը,  
որը ոտքը, որը թաք կացաւ փեշերի տակին, որ ոչ  
որ չըփախցնէ: Օհանը զրկեց ամենքին և ջերմ ար-  
տասուքները անձրեսի պէս թափեց ամենի զլխին. լաց

եղան և բոլոր երեխաները և ուրուր տեսած հաւի ձագերի նման մտան իրանց ծնողի դիրկը:

—Ո՞չ, ազնիւ պարոն, շնորհակալ եմք քո բարեսըրտութեան համար: Տեսնում ես ահա, որ ոչ ես և ոչ իմ զաւակներս յօժար չենք այդ բանին»:

—Տեսնում եմ, տեսնում, պատասխանեց հարուտը: Դէ որ այդպէս է, գոնէ մի երգ երգեցէք խմբովին և ահա դրա համար ձեզ մի հազար ոսկի:

### 5.

Վարպետ Օհանը իր կեանքում «հազար ոսկու» միայն անունն էր լսել, բայց աչքով տեսած չէր, իսկ այժմ իր ձեռքի տակին ունէր «հազար ոսկի»: Երբ որ հարուտ աղան տուն գնաց, վարպետը տնտղեց ոսկիքը և ահ ու զողով թաքցրեց պահարանումը: Այնունետե նա լոեց, լոեցին և որդիքը: Էլ չըկարողացան երգել: Մեծ երեխաները լուռ ու մունջ նստեցին և փոքրերին էլ շուտ-շուտ ասում էին, որ էլ կարելի չէ երգել, հարուտ աղան կըլսէ ու կընեղանայ: Ինքը վարպետն էլ սկսեց տխրել, և երբ իր հանգուցեալ կնոջ սիրելին խնդրեց, որ կըկնէ երգը, նա հրելով՝ ասաց. «Հըպիտի երգենք»:

—Ինչո՞ւ, հայրիկ, ինչո՞ւ չպիտի երգենք, հարցրեց երեխան...

Անմեղ երեխայի այս հարցմունքը վարպետ Օհանի աշքը կարծես քնած տեղից բաց արաւ: «Իրաւ, ինչո՞ւ շըպիտի երգենք, ի՞նչ եմ անում այս ոսկիքը, եթէ սա պիտի մեր ուրախութեանը վերջ տայ, և ո՞վ գիտէ ի՞նչ

փորձանքի մէջ պիտի ձգէ ինձ»: Այսպէս մտածելուց յետոյ, շուտով վերկացաւ տեղիցը, վեր առաւ ոսկիքը և վազեց աղայի մօտ:

«Ազնիւ պարոն, ասաց Օհանը, խնդրեմ ձեր փողերը յետ վերցնէք, որ ես կարողանամ երգել իմ ուղած ժամանակը: Իմ երեխաների ուրախութիւնն ինձ համար աւելի թանգ արժէ»:

Այս ասելով՝ ոսկու քսակը դրաւ աղայի սեղանի վրայ և շուտով վերադարձաւ տուն այնպէս ուրախ, ինչ պէս մի մեծ պարագից կամ գերութիւնից ազատւած: Եւ այնուհետեւ երգի ձանը կրկին բարձրացը ին խմբովին:

### ԵՐԿՈՒ ՔՈՅՇ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,  
Հոգով դեռ արի, գլխով ալեոր.

Մեծ ծով էր պատել նրա աշխարհը.  
«Ոսկի» ասացին գիտունք այն դարը:

Ունէր նա երկու մատաղաս աղջիկ,  
Մինը խիստ տղեղ, միւսը գեղեցիկ:  
Մի օր տղեղը ասաց գեղեցկին.  
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»:

Միրունը գնաց առաջից տրտում,  
Տգեղը հետքից ոխ պահած սրտում.  
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,  
Իր սիրուն քըրոջ գլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.  
«Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից,

«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,  
Առ, էն քեզ լինի, պարզե՞ ինձ կեանը»...

Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:  
«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չի բաւական,  
Կըտամ քեզ ոսկի պսակ պատւական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:

«Փոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ,  
Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտունչ»:  
Տղեղի սիրտը դառել էր լեռ քար,  
Քըրոջ ինդիրը թողեց անկատար:

Զկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,  
Բոնեց մարմինը սիրուն աղջրկան:  
Ջրիցը հանեց, դրեց ափի մօտ,  
Ճատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:  
  
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջրկան,  
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,  
Տարաւ իրաւ տուն այդ անգին զիւտը,  
Հորացը նորա մարմնու դիփ հիւթը.  
Դեղեցիկ տաւիղ շինեց ոսկըրից,  
Քաղցրածայն լարեր հիւսեց մազերից:  
  
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին.

Գնաց արքունիք տաւիղը ձեռքին.  
Երբ մտաւ դահլիճ շրեղ զարդարած,  
Տեսաւ տղեղին փեսի մօտ կանգնած.

Բացեց բերանը, լարերին խփեց,  
Հիւրերի առջև քաղցրածայն երգեց.

«Հնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,  
«Հարազատ քոյրըս խլեց իմ պսակ.  
«Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական,  
«Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան:

«Լսէ, ժողովուրդ, լսէ անխոռվ,  
«Հարազատ քոյրըս զլորեց ինձ ծով»:

Միւս օրը գահինք խարոյկ շինեցին,  
Մահապարտ ըլլորդ մէջը զլորեցին.  
Հուրը պրլպլաց, աղջիկը կանչեց.  
«Իմ մեղքի համար Աստւած ինձ պատժեց»:

### ՀՆԱՐԱԴՀՑ ՋՈՒՂՅԱԿ

(Աւանդութիւն)

Ճահ-Աբասի ժամանակ հեռու աշխարհից գէրւիշի  
հագուստով մի մարդ է զալիս Սպահան քաղաքը: Քա-  
ղաքի ընդարձակ հրապարակի մէջ այդ դերւիշը մի մեծ  
շրջան է քաշում փայտով, ինքն էլ կշտին նստում լուռ  
ու մունջ: Ենց ու զարձ անողները նայում են և զար-  
մանալով հարցնում, թէ դու ով ես, այս ինչ բան է  
որ դու քաշել ես. արդեօք մի թալիսման չէ սա, և մեզ  
համար բարի, թէ չար թալիսման է... Դէրվիշը բնաւ  
չի խօսում: Ամբողջ քաղաքը վարանման մէջ է ընկնում,  
թէ սա ինչ կընշանակէ արդեօք: Վերջը իմաց են տա-  
լիս Ճահ-Աբասին, թէ այսպէս մի դէրվիշ է եկել...  
Ճահ-Աբասը իր գիտնականներից մէկին ուղարկում

է, որ տեսնէ ինչ բան է, ինչ է դէրւիշի ուզածը,  
ինչու է ժողովրդին սարսափի մէջ դցել:

Դիտնականը դնում է և ասում դէրւիշին.

—Ո՛վ մարդ, ես հասկանում եմ քո միտքը: Քո շրջանը նշանակում է երկինք: Դատարկ է մէջը: Այդ դատարկութիւնը նշանակում է, որ գուռ ուզում ես երկինքը կապել, որ ոչ մի ամպ չըլինի այնտեղ, որ էլ անձրես չըդայ, սովոր ընկնի մեր աշխարհքը: Դիտեմ, զիտեմ, որ դու կարող ես այդ բոլորն անել. բայց խղճա մեզ, այդպէս բան մի անիր, ինչ-որ ուզես, ըեզ կըտայ թագաւորը ..

Դէրւիշը բնաւ չըխօսեց և զիտնականի երեսին անդամ չընայեց: Բայց ժողովուրդը լսելով զիտնականի բացատրութիւնը, աւելի մեծ երկիւղի մէջ ընկաւ: Էլ չէին ասում, թէ դուցէ սխալ էր զիտնականի բացատրութիւնը, այլ գըտ հակառակ՝ լուն ուղտ շինելով, պատմում էին իրար, թէ «Բա չէք ասիլ, դէրւիշը մի ամենազօր մարդ է, այս ինչ երկրում հեղեղ և կարկուտ է թափել, բոլոր բնակիչներին կոտորել. այն ինչ տեղ եօթը տարի շարունակ կապել է երկինքը, ոչ մի կաթիլ անձրես չի եկել, սովէ է ընկել երկիրը, բոլորեքեանք կերել են միմեանց»...

Միւս օրը Զահ-Աբրամն ուզարկեց մի ուրիշ զիտնական:

—Գիտեմ, զիտեմ, ով ես դու, մարդը Սստուծոյ,  
ասում է զիտնականը: Քո շրջանը նշանակում է երկիրս: Դատարկ է մէջը: Դրանով ուզում ես ասել, որ ժանտախտով պիտի դատարկես մեր երկիրը: Խնայիր մեզ. ինայիր, ի սէր Ամենակալին, այդպէս բան մի անիր. ինչ-որ ուզենաս, քեզ կըտանք...

Դէրւիշը դարձեալ մնաց լուռ: Աւելի ևս սաստկացաւ ժողովրդի երկիւղը և նորանոր առասպեսալներ տարածւեց քաղաքի մէջ:

Բոլոր զիտնականները յաջորդաբար գնացին դէրւիշի մօտ և բոլորն էլ ունքը շինելու տեղ աշքն էլ հանեցին՝ վոխանակ ժողովրդի կասկածը փարատելու, նըան աւելի երկիւղի ու սնահաւատութեան մէջ գցեցին:

Թագաւորը կարծում էր, որ դէրւիշի արածը մի հասարակ հանելուկ պիտի լինի, և իրան համար շատ ամօթ էր համարում, որ այդ հասարակ հանելուկը լուծող մի զիտնական չունի: Այսպիսի մտատանջութիւնով նա մէկ օր ծառտած ման էր գալիս Սպահանի Հայոց թագումը, ուր հանդիպեցաւ մի տարօրինակ բանի: Մի տանիքի վրայ ցորեն կար փուած աղունի համար. ոչ ոք չըկար մօտը, բայց մի երկայն եղէք կար ցցուած, որ ինքն իրան անդադար տարուքերեւելով քշում էր ճնճղուկներին: —Այս հրաշքի զարտնիքը պէտք է տան մէջը վինտրել, ասաց թագաւորն ու ներս գնաց տուն, և այնտեղ տեսաւ մի ջուհակ, որ կտաւ էր գործում:

Երբ որ թագաւորը ներս մտաւ, ողջունեց ջուհակին. ջուհակը նայեց նրա վրայ, իսկոյն ոտքի կանգնեց, խոր զլուխ տալով պատասխանեց նրա ողջունին, յետոյ սկսեց շարունակել իր գործը: Ջուհակի աջ ու ձախ կողմին մի-մի օրօրոց կար դրւած: Երբորնա սկսեց գործել, օրօրոցներն էլ սկսեցին օրօրւիլ տանիքի ինքնաշարժ եղէզնի պէս: Օրօրոցում եղած երեխանները ծերունու թոռներն էին, որոնց մայրերը տան մի անկիւնում նստած ճախարակով բամբակ էին մանում կտաւի համար: Իր հարսներին գործից չըգցելու համար հնարա-

գէտ ջուհակը տանիքի եղէզից մի թել էր կապել,  
թելի մէկ ծայրը փաթաթել կտաւի սանդրին, որ իր  
տարութերելովը շարժում էր եղէզը։ Օրօրոցներից  
նմանապէս թելեր ունէր կապած, որոնց հակառակ  
ծայրերը իր աջ ու ձախ մատներին էլ փաթաթել։  
Էջ ձեռքով մքուքը նետելիս, աջ կողմի օրօրոցն էր  
օրօրում, ձախով նետելիս, ձախ կողմինը։ Այլիսով  
նա մէկ անդամից երեք գործ էր կատարում։

Թագաւորն այդ ամենը նկատեց և զովեց իր մըտ-  
րումը նրա հնարապիտութիւնը, միայն նրա ոտքի կանգ-  
նելով խոր գլուխ տալը թագաւորի մէջ կասկած ձեց,  
թէ շըլինի իրան ճանաչեց։ Այս բանն ստուգելու հա-  
մար, թագաւորը մի մուլթ հարցմունք արաւ նրան։

— շըլինիմ, շըլինիմ...

— Միթէ, միթէ... պատասխանեց ջուհակը։

Թագաւորը «շըլինիմ, շըլինիմ» ասելով, ուզեց  
ասել ծերունուն. «Եթէ ինձ ճանաչեցիր, շըլինի թէ  
երևեցնես այդ բանը, թող մեր մէջը մնայ»։ Իսկ ծե-  
րունին պատասխանեց «միթէ, միթէ». այսինքն՝ «մի-  
թէ ես յիմար եմ և այդքանը շըլիտեմ»։

— Քանիսի մէջն ես, վարպետ, յետոյ հարցրեց  
թագաւորը։

— Երկուսը լրացել, երեքի մէջն եմ մտել, պա-  
տասխանեց ջուհակը։

Թագաւորի այս հարցմունքը ջուհակի հասակին էր  
վերաբերում։ Ջուհակը պատասխանեց, որ երկու ոտքով  
ման գալն արդէն վերջացրել է, հիմա զաւազան է գործ  
ածում, իբրև երեք ոտք, մէկ խօսքով ծերացել է։

Թագաւորն այսպիսի շատ մուլթ հարցմունքներ ա-

րաւ և բոլորի պատասխանն էլ ստացաւ դարձեալ մուլթ  
կերպով։ Տեսաւ որ ծերունի հայը մի հնարագէտ և հան-  
ճարի տէր մարդ է թէ գործով և թէ խօսքով, մտածեց,  
որ միայն սա կարող է դէրւիշի պատասխանը տալ։

— Դու որ այդչափ հնարագէտ ես, ասաց թագա-  
ւորը, եթէ մի քանի սագ ուղարկեմ քեզ մօտ, կարող  
ես փետրել նրանց։

— Դրա քաջ վարպետն եմ ես, պատասխանեց  
ջուհակը։

Այս պատասխանն ստանալուց յետոյ թագաւորը  
գնաց։ Ճատ չանցաւ, ջուհակի մօա եկան թագաւորի  
գիտնական նէղիր-վէզիրները։

«Ահա եկան թագաւորի սագերը. իրաւ որ լաւ  
փետրելու թոշուններ են», ասաց ջուհակի ինքն իրան։

Թագաւորը տուն գնալով սաստիկ բարկացել էր  
գիտնականների վրայ և սպառնացել էր, որ եթէ գոնէ  
մի մարդ շըլտնեն, որ դէրւիշին պատասխան տայ,  
նրանց բոլորին էլ կաքսորէ։ Այսպէս նեղի գալով՝ ո-  
րոշեցին դիմել հնարագէտ ջուհակին, որի համբաւը  
նրանցից մէկը լսել էր։

— Վարպետ եղբայր, կարող չես արդեօք մի պատաս-  
խան տալ մեր տարօրինակ հիւրին որ ժողովրդի վրայ  
սարսափ է տարածել, ասացին գիտնականները և պատ-  
մեցին դէրւիշի դէպքը, որ արդէն յայտնի էր ջուհակին։

— Ինչո՞ւ չէ... կարող եմ... բայց մեծ ծախք կը-  
պահանջւի դրա համար։ Պէտք է ձեռք բերել մի կա-  
խարդական գաւազան, մի անմահական սիստոր և մի  
ոսկի ձու ածող հաւ։

Գիտնականները մնացին ապշած։

— Դրա ծախքը մենք կրվճարենք, ասացին նրանք

ուշքի գալով, միայն մենք չենք կարող դտնել այդ  
բաները, ինչ-որ դու ես ասում:

Երեք բան է իմ ուզածը, և ես ինքս կըգտնեմ,  
միայն ամեն բանի համար մի գլխարկ լիքը ոսկի է  
պէտք: Դուք երեք հողի էք, ամենքդ ձեր գլխարկովը  
մէկ ոսկի կըբերէք, ես էլ կըդամ դէրւիշին պատաս-  
խան կըտամ:

Գիտնականները ճարահատած համաձայնեցին:  
Գնացին երեք գլխարկ ոսկի բերին տըւին ջուլհակին:  
Այսպէս փետրելով նրանց, ինչպէս պատւիրել էր թա-  
գաւորը, վեր կացաւ առաւ իր հոնի գաւազանը, մի  
գլուխ հոտած սխտոր, ոտի մէկը կոտրած մի հաւ, և  
զնաց սարսափ տարածող դէրւիշի մօտ:

Հաւաքւեցին բոլոր քաղաքացիք, ներկայ էր և  
թագաւորը իր բոլոր իշխաններով:

Ջուլհակը շխօսեց դէրւիշի հետ. նա լուռ ու մունջ  
իր գաւազանի ծայրով մի խոր ակօս քաշեց շրջանի  
մէջ տեղով ծայրէ ի ծայր և այսպիսով դէրւիշի շր-  
ջանը երկու հաւասար մասնի բաժանեց և նստեց նրա  
դէմ յանդիման:

Դերւիշը երկար մտածեց, գլուխը թափ տըւաւ.  
Վերջը մի գլուխ սոխ հանեց դրաւ առջեր:

Ջուլհակն, առանց երկար մտածելու, իսկոյն իր  
սխտորը հանեց դրաւ իր առջեր:

Բարկացաւ դէրւիշը և իր ջէրից հանեց մի բուռ  
կորեկ և շաղ տըւաւ ամրող շրջանի մէջ:

Ջուլհակը փեշի տակից հանեց իր հաւը, որ իս-  
կոյն կըտկըտալով կերաւ բոլոր կորեկը:

Դէրւիշն էլ մինչև վերջը շըսպասեց, իսկոյն վեր  
կացաւ և մումուլով հեռացաւ զնաց...

Թագաւորը մօտեցաւ ջուլհակին և խնդրեց, որ  
բացատրէ այդ հանելուկի նշանակութիւնը:

— Ողջ լինի թագաւորը, ասաց ջուլհակը: Այս  
մարդը մի խելագար դէրւիշ է: Երեակայել է, որ ինքը  
մի շատ գօրեղ խմաստուն մարդ է և կարող է մեր ամ-  
բողջ աշխարհին տիրել: Իր քաշած շըջանով ուզում  
էր մեզ հասկացնել, թէ իրանն է բոլոր մեր երկիրը:  
Ես չուզեցայ հասկացնել նրան, որ այդ խելագարու-  
թիւն է, այլ կէս արի մէջտեղից, որով ուզեցայ ասել,  
թէ կէսն էլ իմն է: Նա բարկացաւ և իր սոխով ինձ  
պատերազմ յայտնեց, կամ ուզեց ասել, մեր մէջ զառ-  
նութիւն կըծագի, կուր կըլինի: Ես էլ իմ սխտորով  
հասկացրի նրան, որ ես փախչող չեմ, թէկուզ կուրց  
էլ վատթար բան պատահի: Նա իր կորեկով ինձ  
սպառնաց, որ իր զօրքերն անհամար են: Ես էլ իմ  
հաւով ցոյց տըւի, որ ահա այսպէս կըջարդեմ ես բո  
անհամար զօրքը: Դրա վրայ նա տեսաւ, որ էլ չի  
կարող մեզ փախեցնել, փախաւ զնաց...

Քաղաքացիք շատ ուրախացան, որ վերջապէս ա-  
զատեցին դէրւիշի տակիք երեակայական սովից ու մա-  
հից և ամենքը միաբերան գոչեցին՝ «Կեցցէ ջուլհակը»:

Ճահ-Աբբասը որ շատ արհեստաէր թագաւոր  
էր, զովեց ջուլհակին և յետոյ հարցըց:

— Ի՞նչ արիր իմ սագերին, լաւ փետրեցիր, թէ ոչ...

— Ողջ լինի թագաւորը, այս, լաւ փետրեցի, ա-

հա նրանց փետուրները, ասաց ջուլհակը և թագա-  
ւորի առջեր դրաւ մի պարկ ոսկի:

— Քեզ են արժանի այդ ոսկիքը, ասաց թագաւորը,  
դու աւելի օդտակար գործադրութիւն կըգտնես դրանց

համար: Մի այլքան էլ իմ գանձարանից ստացիր և մի մեծ զործարան բաց արա. թող ծաղկի քո արհեստը իմ երկրիս մէջ: Այսուհետեւ իմ պալատի դռները միշտ բաց են քեզ համար. թող իմ հովանաւորութիւնը լիուլի տարածւի քո իմաստուն ժառանգների և քո աղգի վրայ:

### ՀԵՈՐՈՂԼԻՆ ԶԱՂԱՅՊԱՆ

(Մի արկած Քեօրօղլու կեանքից)

Մէկ անգամ Քեօրօղլու ծառաներից մէկը, Քաշալ-Համզան փախել էր: Քեօրօղլին հեծաւ Ղըռաթը, որ իր ընտիր ձիաներից ամենից լաւն էր, և ընկաւ Համզայի ետևից, որ բռնէ նրան և պատժէ:

Համզան գեռ շատ չէր հեռացել: Նա յետ մտիկ տրւաւ և տեսաւ, որ հեռւից փոշի է բարձրանում ամպի պէս, իսկոյն գլխի ընկաւ, որ Ղըռաթի բարձրացը թոգն է այն, ուրեմն ուր որ է՝ Քեօրօղլին պիտի հասնէ և բռնէ նրան: Հնար չկար փախչելու: Նրա բախտից՝ նոյն տեղ մի ջաղաց կար, վազեց մտաւ ջաղացը, երես-մերեսը ալրաթաթախ արաւ, շորերն էլ նոյնպէս, և այսպէս կերպարանափոխւած՝ դուրս եկաւ կանգնեց ջաղացի դռանը:

Քեօրօղլին ձին քշած եկաւ և Համզային պատահելով՝ հարցը թէ՝ «Այս ու այս նշանով մարդ շանցաւ արդեօր»:

— Ի՞նչպէս չէ, պատասխանեց Համզան, քո ասած նշաններով մի մարդ մտաւ այս բռնիս իմ ջաղացը:  
— Ուրեմն, բռնիր ձիս, ասաց Քեօրօղլին և իշաւ ձիուց:

Չին թողեց Համզայի ձեռքին, իսկ ինքը մտաւ ջաղացը, տեսաւ որ այնտեղ ոչ ոք չըկար, դուրս եկաւ, որ բարկանայ ջաղացպանի վրայ, բայց կեղծ ջաղացպանը՝ այսինքն Համզան՝ արդէն Ղըռաթի վրայ էր: — Անպիտան, ինձ խաբեցիր՝ բաւական չէ, համարձակեցար հեծնել նաև իմ Ղըռաթըս, ասաց Քեօրօղլին բարկութեամբ:

— Ճատ մի խօսիր, պատասխանեց Համզան, այժմ Քեօրօղլին ես եմ, իսկ դու զնա ջաղացպանութիւն արա, նայիր միայն որ լաւ աղաս, կորկոտ չանես: Այս ասելով՝ Ղըռաթի գլուխը շրջեց ստահակ ծառան և... և այսօր ես անյայտացել, թէ էգուց...

Քեօրօղլին նոր զլսի ընկաւ, որ փախչողը և իր սիրած ձին փախցնողը Համզան էր, բայց էլ ինչ կարող էր անել: Նա քահ քահ ծիծաղելով իր միամտութեան վրայ, գլուխը թափ տրւաւ և մտաւ ջաղացը:

Քեօրօղլին սովորութիւն չունէր յուսահատւելու. այս տեսակ գէպքերը նրա միշտ ուրախ ու զըւարթ տրամադրութիւնը չէին խանգարում: Նա տեսաւ որ ամբարը լիքն է ցորենով, բայց ջաղացպանն ուրիշ տեղ է զնացել, զուրը կապեց նաւի մէջ և բան ձկեց աղօրիքը: Երբ որ շանչախն սկսեց իր ներդաշնակ շըխչըխկոցը, Քեօրօղլին նրան սազի տեղ համարեց և սկսեց երգել հետեւեալ երգը.

Այ Քեօրօղի, ջան Քեօրօղի,

Այ Քեօրօղի, ջան Քեօրօղի,

Քեզ խաբեց Համզան, Քեօրօղի, հայ, հայ, հայ.

Բայց որ դառար դու ջաղացպան,

Կանչիր, թող գայ դան, Քեօրօղի, ջան,

Զան Քեօրօղի, զան,  
Զան Քեօրօղի:

Մարդուս բախտն էլ ահա այսպէս՝  
Պըտրտում է չաղացի պէս.  
Մէկ օր ահոելի վիշապ ես,  
Միւս օր չաղացպան, Քեօրօղի:

Բայց դու էլի Քեօրօղին ես,  
Ժողովրդի սիրելին ես.  
Թէկուզ չաղացպան էլ լինես,  
Քեզ պատիւ կրտան, Քեօրօղի:

Թէկ Դրոաթիցդ զըրկւած,  
Բայց թուր ոնիս վրադ կապած.  
Համզան ստրուկ, թուկից փախած,  
Խոկ դու ազատ խան, Քեօրօղի:

Մօտը կանչիր հսկաներիդ,  
Հաւատարիմ կտրիճներիդ,  
Թող գան գտնեն փախած գերիդ,  
Չըկորչի Համզան, Քեօրօղի:

Քեօրօղու ձայնը շատ ահեղ էր: Այս երգը եր-  
դելուց յետոյ բարձրացաւ չաղացի տանիքի վրայ և  
այնպէս որոտաց, որ նրա ձայնը սար ու ձոր դրմ-  
րացնելով՝ հասաւ մինչև շամլիբէլ սարը, ուր գտնուում էր  
Քեօրօղու անմատելի բերդը: Քեօրօղու կինը՝ նի-  
գեար խանումը, որ շատ սուր լսողութիւն ունէր, ա-  
մենից շուտ իմացաւ, որ իր ամուսինը մի անակնկալ  
փորձանքի է հանդիպել: Խոկոյն իմաց տուաւ քաջերին,

որոնը մի ակնթարթում դուրս թափւեցին բերդից և  
հասան իրանց խմբապետին: Դրանց մէջ նշանաւոր էին  
Դամուրջօղին, Խոար-Ալին և Գգիր-օղի Մուստաֆա-  
բէզը: Եթի որ զնացին տեսան Քեօրօղուն չաղացպա-  
նութիւն անելիս, Դրոաթը խլել արւած, շատ ծիծա-  
ղեցին: Դամուրջօղին մի երգով շնորհաւորեց Քեօրօղ-  
լու նոր արհեստը և նոր առուտուրը: (Որովհետեւ  
Համզան Դրոաթը փախցնելով՝ նրա փոխարէն իր  
ջորին թողել էր Քեօրօղու մօտ):

Ահա թէ ինչ է ասում Դամուրջօղին և ինչ ձեռով.

Նոր վաճառական ես զառել,

Առլտուրը շնորհաւոր,

Զին տըւել ես, չորին առել,

Առլտուրը շնորհաւոր:

Զին տըւել ես, չորին առել.

Առլտուրը շնորհաւոր, հողին,

Առլտուրը շնորհաւոր:

Սիւրը չորուն կըրարձես,

Բազար կըտանես կըծախես,

Դիղին ոսկիք կըհաւաքես,

Առլտուրը շնորհաւոր:

Քեզ կասեն՝ ուստա Ռուշան <sup>1)</sup>,

Եթի կըդառնաս լաւ չաղացպան,

Գլուխ-գլուխ շահադ <sup>2)</sup> կըտան,

Առլտուրը շնորհաւոր...

<sup>1)</sup> Քեօրօղու ուղիդ անունը Ռուշան է:

<sup>2)</sup> Զահադ է ասում ազալու համար տըւած փարձը, որ մէ  
յայտնի չափով տըւում է այն հատիկլց, ինչ որ ազացւում է:  
4

Դամուրջօղի, շատ լաւ կանես,  
Որ Քեօրօղլուն զովաբանես,  
Ասես՝ լաւ վաճառական ես,  
Առլառուրըդ շնորհաւոր...

Դամուրջօղին այսպէս երկար կըշարունակէր,  
բայց Քեօրօղին նրան միջահատում է, ասելով՝ կա-  
տակի ժամանակ չէ, և ինքն է սկսում երգել այլ ե-  
զանակով և ահեղ ձայնով.

Ծառաս փախել է մինչ Արաբստան,  
Ճռւտ արէր, ուր որ է, վնտըեցէր, բերէր.  
Ջընքին զարկելով՝ կապէր կռները,  
Արար ձիու վրայ բարձեցէր, բերէր:  
Ջընքին զարկելով՝ կապէր կռները,  
Արար ձիու վրայ բարձեցէր, բերէր:

Արի, հոգիս, արի,  
Արի, անուշիկ:

Իր զործած յանցանքը զրէր իր վրգին,  
Որ չասեն՝ անմեղ էր, ի զուր պատժեցին.  
Մորթեցէր եղան պէս, բերթեցէր կաշին,  
Միսը մաս-մաս արէր, ջարգեցէր, բերէր:

Քեօրօղին եմ, ես չեմ մնալ ջաղացպան,  
Եմ Ղըռաթին երբէք չի տիրիլ չամզան,  
Գետնի տակն էլ լինի, հանեցէք նրան,  
Զիու պոշից կապած՝ քաշ տրէր, բերէր:

Ել ինչ ասել կուզի, որ Քեօրօղուն հրամանը շու-

տափոյթ կատարւեց: Քեօրօղլուն պատահած այս  
արկածը պատմում է և ուրիշ ձևով \*):

ԽԱԶԼՀԻԱՅ Լիճը ԿԱՄ ՀԱԽԼՈՒՆԻ ԹՌԻՐԸ

(Աւանդութիւն)

Ճատ ու շատ գարեր մեզանից առաջ մի թաղա-  
ւոր կար, անունն էր Պոօշ, ինը զօրաւոր, ազնիւ-  
ու արդար: Նստում էր նա իր Լաթար քաղաքում: Նա  
չէր կուսանէր, թէպէտ կարող էր ամեն բան ուժով.  
Եթէ ուզենար, աշխարհիր կըքանդէր չալունի թրով.

Չալունի թուրը, չալունի թուրը,

Ամեն բան կանէ չալունի թուրը.

2ի լինի նրբան աշխարհում նման,

Կանէ ամեն բան չալունի թուրը:

0՝, նա չէ շինած հողեղին ձեռքով,

Անձեռագործ է չալունի թուրը.

2է նա Խորասան և ոչ ալմազից,

Ալմազ կըկտրէ չալունի թուրը:

Կրակոտ ամպերում, կայծակների հետ

Մխւել է, կոփել չալունի թուրը.

Կրակոտ ամպերում, կայծակների հետ

Աշխարհ է իջել չալունի թուրը:

Ով տիրէ նրան, աշխարհ կըտիրէ,

\* ) Քեօրօղլու բոլոր երգերը երեք եղանակ ունին միայն: Այստեղ բերած երեք երգերից ամենն մէկը ջոկ եղանակ ունի, որ ասել է՝ երեք եղանակներն ես կան: Երգերի ձևն ու տողերի չափը ցոյց են տալիս արդէն, թէ որն ինչ եղանակ ունի: Երգե-լիս առաջին տան կազմութիւնը պէտք է տալ և միւս տներին:

որ քեզ հետևիմ, շարի կործանիչ, բարու հաստատիչ  
հանապազ լինիմ»:

Այսպէս էլ արաւ: Քառասուն տարի Պոօշի ձեռ-  
քում Հաւլունի թուրը կայծակի նման փայլում էր  
վառում, բայց նրա ձեռքով մի անմեղ արին երեք  
շըթափից, կայքից ու կեանքից Հաւլունի թրով ոչ  
ոք չըգրկւեց: Ոչ մի թագաւոր կամ արդար իշխան  
շընկաւ իր գահից. ոչ մի ժողովուրդ չըգրկւեց իրա  
ազատութիւնից: Ինչ բան բարի էր, նա գօրացնում  
էր իր զօրեղ ձեռքով, ինչ բան որ շար էր, ջնջում,  
կործանում Հաւլունի թրով:

Եւ ինչ չէր անիլ. մեծ էր Հաւլունի թրի զօրու-  
թիւն, բայց Պոօշ թագաւորն այդ չէր ցանկանում,  
այլ ասում էր միշտ: «Թող մարդիկ ապրին ազատ ու  
խաղաղ: Լաթար քաղաքս լաւ կառավարեմ, այն էլ է  
հերիք» Եւ լիանում էր Լաթար քաղաքը ամեն բարի-  
րով, ձգում էր շենցած Խաչըլայ լճի կանաչ ափերով:

Բայց ինչ կայ արդեօք յաւիտենական այս աշ-  
խարհի մէջ: Պոօշ թագաւորի զլուխն էլ ծածկւեց  
սպիտակ մազերով. այն զօրեղ անձը, որից զողում էր  
ամբողջ աշխարհը, էլ չէր կարենում վեցնել Հաւլու-  
նի յաղթական թուրը:

Ընկաւ Պոօշը, ուժահատ ընկաւ մահիճը մահ-  
ւան: «Ահա մօտեցաւ իմ վերջին օրը», ասաց ինքն  
իրան. «իմ ժառանգն ով է, ում պիտի յանձնեմ Հաւ-  
լունի թուրը»:

Թագաւորն ունէր եօթը հատ որդի, իւրաքան-  
չիւրը մի սարի զլիսի, ամեն մէկն ունէր մի բերդ  
սեփական, ամենքն էլ ծարաւ մէկ մէկու արեան:

Աշխարհ կըգերէ Հաւլունի թրով. Վարաս  
Դէւերի մեծին գերի կըգերէ,  
Հստրուկ կըշինէ Հաւլունի թրով:  
Սըրայագնուճին 2ինումաշինի  
իր հարս կը բերէ Հաւլունի թրով,  
Եալբուզ սարն էլ որ նրա առաջ ելնի,  
Երկու կէս կանէ Հաւլունի թրով:  
Հաւլունի թրով, Հաւլունի թրով,  
Ամեն բան կանես Հաւլունի թրով,  
2ի լինիլ նբան աշխարհում նման,  
Ինչ ուզես, կանես Հաւլունի թրով:

Ահա թէ ինչու Պոօշ թագաւորից ամենն էին  
սարսում, թէպէտ նրա մտքով մի մարդու անդամ  
վնասել չէր անցնում: Եւ ով չէր սարսիլ. մեծ էր  
Հաւլունի թրի զօրութիւնը. բայց չէր ցանկանում  
Պոօշ թագաւորը փառը, իշխանութիւն:

Ոչ որ չըգիտէր, թէ քանի տարի Պոօշի պապե-  
րը կըում էին իբրև մի անդին աւանդ Հաւլունի թու-  
րը, թէ ինչ հրաշքով ընկել էր թուրը աշխարհի վը-  
րայ, թէ որը Պոօշի մեծ նախնիքներից ձեռք էր բե-  
րել այն, յայտնի չէ թրի սկզբնաւորութեան մուժ  
պատմութիւնը. լուռմ է այդ մասին աւանդութիւնը.  
զիտեն այս միայն, որ Պոօշի նախնիք այնքան տա-  
րիներ իրանց զօրութիւնը և ուժը երբէք ի զուր չեն  
գործ զըել:

Պոօշն էլ հետևեց իր նախնիքներին, ստացաւ  
թուրը հօր մահւան ժամին, առաւ աւանդը, խոստա-  
ցաւ հօրը. — «Հայրիկ, երդում եմ քո տըւած սրով,

Ո՞րին տար արդեօք Հաւլունի թուրը. նրանցից ոչ  
ոք սրին չէր արժան. վեց անգին եղբայրք զլխները  
կտրած պիտի թրաբրտան. Հաւլունի թուրը պիտի  
դէնք դառնայ մարդասպանութեան:

«Ո՛չ, այս չի լինիլ», ասաց Պոօշը, կանչեց մեծ  
որդուն Բլէջանու բերդից: Եկաւ մեծ որդին, որ լսէ  
իր հօր կտակը վերջին:

«Որդի, մեռնում եմ», ասաց Պոօշը. «վերջի կտա-  
կըս յայտնում եմ ես քեզ, բայց մահիցս առաջ պի-  
տի կատարես»:

— Հայրիկ, պատրաստ եմ. վերջին կտակը ես  
կըկատարեմ, տուր ինձ, թէ կուզես, Հաւլունի թուրը,  
աշխարհք կըքանդեմ:

«Այն, քեզ կրտամ Հաւլունի թուրը, բայց լսիր,  
որդիս, աշխարհք մի քանդիր, այլ տար, Խաչլրւայ  
ծովակը ձգիր»:

Մեծ որդին տարաւ Հաւլունի թուրը, բայց հօրը  
խարեց, ծովը շըձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ  
թաքցրեց:

«Որդի, ինչ արիր Հաւլունի թուրը, ձգեցիր ծո-  
վը», հարցրեց հայրը:

— Այն, այն, հայր, Հաւլունի թուրը տարայ ձգե-  
ցի Խաչլրւայ ծովը:

«Տեսար ինչ եղաւ Խաչլրւայ ծովը, երբոր ձգե-  
ցիր Հաւլունի թուրը»:

— Հայր, ոչինչ չեղաւ Խաչլրւայ ծովը, բայց ես  
ձգել եմ Հաւլունի թուրը:

— Ոչ, սուտ ես խօսում, անարժան որդի, խա-  
րում ես հօրդդ, գնա, բեր շուտով, թէ չ' կանիծեմ,  
զլխիդ կըճարի Հաւլունի թուրը»:

Որդին զողալով զնաց, յետ բերաւ Հաւլունի թու-  
րը: Պոօշը կանչեց իր երկրորդ որդուն և ասաց  
նրան «Որդի, մեռնում եմ. վերջին կտակը ես յանձ-  
նում եմ քեզ, բայց մահիցս առաջ պիտի կատարես:

Պատրաստ եմ, հայրիկ, վերջին կտակը ես կը-  
կատարեմ. տուր ինձ, թէ կուզես, Հաւլունի թուրը,  
աշխարհք կըքանդեմ:

«Այն, քեզ կրտամ Հաւլունի թուրը, բայց լսիր,  
որդիս, աշխարհք մի քանդիր, այլ տար, Խաչլրւայ  
ծովակը ձգիր»:

Երկրորդը տարաւ Հաւլունի թուրը, բայց հօրը խա-  
րեց, ծովը շըձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց:

«Որդի, ինչ արիր Հաւլունի թուրը, ձգեցիր ծո-  
վը», հարցրեց հայրը:

— Այն, այն, հայր, Հաւլունի թուրը տարայ ձգե-  
ցի Խաչլրւայ ծովը:

«Տեսար ինչ եղաւ Խաչլրւայ ծովը, երբոր ձգե-  
ցիր Հաւլունի թուրը»:

Հայր, ոչինչ չեղաւ Խաչլրւայ ծովը, բայց ես  
ձգել եմ Հաւլունի թուրը:

«Ո՛չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խարում  
ես հօրդդ. գնա, բեր շուտով, թէ չ' կանիծեմ, գըլ-  
էսիդ կըճարի Հաւլունի թուրը»:

Որդին զողալով զնաց, յետ բերաւ Հաւլունի թու-  
րը: Միւս որդկերանցն էլ կանչեց Պոօշը, բայց նրանք  
ամենքն էլ այնպէս վարւեցին, մինչև հերթը հասաւ  
ամենից փոքրին: Եկաւ և փոքրը: «Որդի, ասաց Պոօշը.  
զոնէ դու լսիր վերջին կտակս: Հաւլունի թուրը յանձ-  
նում եմ ես քեզ, կրտանես Խաչլրւայ ծովը կըձգես»:

— Հայր, ես պատրաստ եմ, կուզես ես ինքս էլ  
նրա հետ ընկնեմ:

«Ո՞չ, դու մի ընկնիր, այլ միայն թուբը ծովը  
կըձգես և ինչ որ տեսնես, կըզաս ինձ կասես»:

Ռւբաթ էր օրը, թուբն առաւ որդին ու ծովը  
ձգեց: Բայց թէ ինչ տեսաւ, ինչքան վախեցաւ, նա  
այսպէս պատմեց.

«Ճի մօտեցած դեռ ևս ծովին,  
Արևն երկնքում երեսը ծածկեց,  
Սև ամպից իջաւ սատանի քամին,  
Խաւար և մոայլ աշխարհս պատեց,  
Մօտեցայ ծովին. ախ, մեր սիրուն ծով,  
Իր նախակին գոյնը այլ ևս չունէր,  
Ժանտ դէւի նման պղտոր ջրերով  
Մի անմեղ որսի կարծես սպասում էր:  
Ծովը ձգեցի չաւլունի թուբը՝  
Յանկարծ մի զոռոց ծովի յատակից,  
Մեծ իրարանցում ծովի խորերում,  
Ահեղ արձագանք ձայնեց երկնքից.  
Ջրերը լեռնացան ու իրար անցան,  
Երկինք էր հասնում ծովի փրփուրը.  
Յանկարծ Խաչլըւան բացեց իր բերան,  
Դէւի պէս կլանեց չաւլունի թուբը:  
Ահեղ փոթորիկ, աղմուկ, որոտում,  
Թէ ծովին նայես և թէ երկնքին,  
Իրար են խառնւել. զողում է աշխարհ.  
Ես էլ վախեցայ և ընկայ վետնին:  
Կրկին նայեցի, ոչինչ չըտեսայ.  
Խաւար մոայլը աշխարհս էր պատել.  
Ամպեր, ալիքներ իրար վրայ դիզւած,  
Երկինքը երկի հետ էր միացել.

Եռվի խորերից բիւրաւոր ձայներ  
Խառնիխուռն և խուլ որոտում էին,  
Կարծես բիւրաւոր քաշերի գնդեր  
ծովի յատակում մարտնչում էին:  
Հայրիկ, զողում եմ, էլ մի յիշեցնիր,  
Չեմ կարող պատմել ես իմ լեզովը,  
Հայրիկ, սարսում եմ, էլ մի հարցնիր,  
Թէ ինչեր արաւ Խաչլըւայ ծովը»:  
— «Այն, այդպէս է, առ իմ օրհնութիւն,  
Լաթար քաղաքս էլ քեզ ժառանգութիւն.  
Ասաց Պուշը և աշըր խփեց,  
Եւ իսկոյն ևեթ հոգին աւանդեց:

Սնցան տարիներ ու դարեր անհետ,  
Աշխարհիս վրայ շատ բան փոխեցաւ,  
Պուշի աւանդն էլ նըրա մահից յետ  
Երկրիս երեսից շուտ անհետացաւ:  
Բայց ժողովրդի մտքից չի կորել  
Հաւլունի թրի վառ պատմութիւնը.  
Նա ոգերըւած պատմում է զեռ էլ  
Պուշ թագաւորի աւանդութիւնը:  
Նա ցոյց է տալիս մի աւեր աւան,  
Ասում է. «Այստեղ էր Պուշը կենում,  
Այս Լաթար քաղքից առիւծի նման  
Ջրչակայ ագգաց սարսափ էր ազգում»:  
Նա ցոյց է տալիս մի պղտոր լճակ,  
Ասում է. «Սա է Խաչլըւայ ծովը.  
Սա չէ, ասում է, մի ծով հասարակ,  
Այստեղ է թաղւած Հաւլունի թուբը»:  
Թէ հարցնես նրան իրեւ կարեկից,  
«Ինչու է պղտոր ձեր ծովի ջուրը».

Կասէ. «Այսպէս է եղած այն օրից,  
Երբ այստեղ ընկաւ Հաւունի թուրը»:  
Նա քեզ կըպատմէ, թէ ամեն ուրբաթ  
Խաչլւայ ծովը փրփրում է, կատղում,  
Իրար են զարկում ջրեր լեռնացած,  
Ծովի յատակից ձայներ են լսում...

Երբոր Պոօշի փոքրահաս որդին  
Տանում էր ծովը Հաւունի թուրը,  
Դեռ չէր մօտեցել նա ծովի ափին,  
Երբ իրար անցան ծովի քաշերը.  
Կոփւ, կոտորած ընկաւ նրանց մէջ,  
Սուրն ընկղմւեցաւ Խաչլւայ խորը.  
Ահեղ կոտորած, բայց ոչ ոք յաղթեց  
Եւ անտէր մնաց Հաւունի թուրը:  
Ահա այն օրից ամենայն ուրբաթ.  
Խաչլւայ ծովը փրփրում է, կատղում,  
Իրար են զարկում ջրեր լեռնացած,  
Ծովի յատակից ձայներ են լսում...  
Այդ հին կոփւն է կրկին նորոգւում,  
Կրկին ընկնում են իրար վրայ քաշեր.  
Անցնում են զարեր, կուում են, կուում,  
Բայց Հաւունի թրին չեն կարում տիրել:

Բայց Պոօշ արքան սուրը կախարդեց,  
Երբոր ցամաքի ծովակի ջուրը,  
Աստուծոյ կամքով մի քաջ կրծնի,  
Կրհանէ լըճից Հաւունի թուրը:

## ԵՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴՆ ՈՒ ՇԵՐԱՄՄՀ

Ճերամը մետաքս էր շինում և գոյնզգոյն կոկոն-ները կախախում կաղնու թարմ ոստերից կապած խուրձի վրայ, իսկ սարդը տան մի անկիւնը քաշւած՝ իր ցանցն էր հիւսում և ծիծաղում շերամի վրայ, ասելով.

—Ճերամ եղբայր, զու շատ գանգաղ ես տանում քո գործը և շինածդ էլ մի բանի նման չէ. բայց ես, նայիր, տես ինչ զեղեցիկ բան եմ շինել. և տես ինչը երկար են իմ թելերը.

Ճերամը պատասխանեց. — Սարդ եղբայր, զու զիտես ինչ կընշանակէ բարութիւն

—Ո՞չ, չըկիտեմ:

—Այդ նրանից է, որ զու չար ես, քո գործն էլ չարութեան գործ է: Գու քո երկայն թելերով մի չակարդ ես ցանցում, որ անմիտ ճանճերին որսաս և ծծես նրանց արիւնը, իսկ իմ գործը բոլորովին ուրիշ բան է, սարդի բնութիւնից և խելքից վեր է:

Ճերամն ու մեղուն են բարութեան նշան, իսկ սարդն ու բրէտը նշան չարութեան. Քնքոյշ շերամի պէս եղիր անարատ, թէկուզ շար սարդերը ծիծաղեն վըրադ:

ԱՐՁԸ ԵՒ ՄԵՂՈՒԽ

Անտառի խորքում մեզուն իր համար մի փուչ ծառի մէջ՝ ինչպէս փեթակում, մի բոյն էր շինել, մէջը ձագ հանել և անուշ մեղքով բնիճը լցըել:

2րդիտեմ ինչպէս, միօր արջուկը առաւ այդ մեղքի անուշիկ հոտը, մըրթմըրթաց, փընթփընթաց, ծառնիվեր կանգնեց և թանթուկները ծառի մէջ կոխեց.

Մեզուն տպտղաց, տպտղացին ձագեր, արջը շրաշեց իր բրդոտ թաթեր, ողջ բունը քանդեց, ձագերը ջարդեց, խորխսիլ հանեց, լափեց լափլրփեց:

Մեզուն որ տեսաւ իր ձագուկները այս անգուժ արջի ոտքի տակ ճգնած, դռուց, դրդռուց, խայթեց արջի աչք, և ինքն էլ անշունչ ընկաւ ծառի տակ:

ԱՉԻՀՄՆ ՌԻ ԱՉԱԽՆԻՆ

Աղէսլ մի աղաւնի տեսաւ ծառի վրայ, գնաց ծառի տակը և դունչը վեր ցըցելով՝ ասաց.

—Բարե քեզ, իմ աղաւնեակ, իմ սրտակից բարեկամ. ինչպէս ես, լաւ ես, առնդջ ես. ինչպէս են ձերոնք, լաւ են. ինչու ես մենակ մնացել: Զայնդ հեռւից լսեցի, իսկոյն իմացայ որ դու ես. ասեցի՝ մէկ գնամ տեսնեմ բարեկամիս, շատ ժամանակ է չեմ տեսել:

Աղաւնին պատասխանեց, —Ճնորհակալ եմ, աղէս պարոն, որ ինձ չես մոռացել, թէպէտ իմ միտս չէ. թէ մենք երբ ենք բարեկամ եղել. շատ ժամանակ է էլ այս կողմերումը չէիր երկում, ես էլ հէնց իմացայ, թէ դու մեռել ես արդէն:

Աղէսն այնպէս ձեացաւ, որ իբր թէ չի լսում աղաւնու ասածը, և ասաց նրան. —Ի՞նչ ես ասում, հոգիս, ձայնդ ականջս չի հասնում, չեմ իմանում: Ինչու չես ցած գալիս: Եկ այս սիրուն կանաչկոտ տեղը մենք կըզբօնենք, եթէ ոչ՝ դու ծառի վրայ, ես գետնին, ինչպէս իմանանք մէկմէկու:

Աղաւնին պատասխանեց, —2եմ կարող իշնել, վախենում եմ, թռչումների համար գետնի վրայ ման դալը երկիւղալի է:

2ըլինի՝ թէ ինձանից ես վախենում. ախ, ի՞նչ եմ ասում ես էլ, այդ ինչպէս կարելի է:

—Ո՛չ, միայն դու խօմ չես, մի՞թէ ուրիշ գաղաններ ըիշ կան:

—Ճշմարիտ է, կան, բայց հիմա հրաման է գուրս եկել, որ էլ այսուհետեւ ոչ մէկը միւսին մի վնաս շրտայ: Հիմա գաղանները էլ իրաւունք չունին չարութիւն անելու, և չեն անում:

—Մի—թէ... այդ ինչ լաւ է եղել: Ես էլ զարմացայ, թէ այս ինչիցն է, որ մեր աղէսը էլ չի վախենում շներից, որ ահա գալիս են վազելով:

Ճների անունը որ լսեց աղէսը, զանը դող ընկաւ. պոչը ներս քաշեց, ականջները սրեց և փախչելու պատրաստեց: Աղաւնին այս բանը նկատելով՝ ասաց. «Ի՞նչու ես շտապում, բարեկամ, սպասիր, զեռ խօսում ենք. փառք Աստուծոյ, հիմա խօմ հրաման կայ, շներիցն էլ ահ չունիս»:

—Ե՞՞հ, ով գիտէ, կարելի է թէ շները դեռ չեն լսել որ հրաման է դուրս եկել, որ էլ շնութիւն չանեն, ասաց աղէսն ու շուտով փախաւ, որ շների ճանկը չընկնի:

ԳԱՅԼԵՐԻ ԾԱԳՈՒԽՄԸ

(Առասպեկտ)

Մեզնից շատ ու շատ տարի առաջ բոլոր մարդիկը շատ բախտաւոր էին: Նրանք անարատ մանուկների պէս անմեղ էին և միշտ ուրախ ու զբւարժ: Այս այն ժամանակն էր, երբ, ինչպէս ասում են՝ զառն ու զայլը միասին էին արածում: Եւ ճշմարիտ որ՝ ամեհի գաղաններն ու խեղճ կենդանիքը գումչ դնչի, բերան բերնի զրած՝ իրար լիզում, լրպստում էին: Առիւծը կովի հորթին էր ծիծ տալիս, կատուն մըկներին փայփայում, կերակրում:

Հըճւում էին մարդիկ և խնդում,  
Ուրախ ու զբւարժ ամեն կողմ վազում,  
Ոչ մի կենդանի, ոչ մի արարած  
Վախ ամեննեին էլ չէին ըզգում...

Մինչդեռ ամենքն էլ ահա այսպէս ուրախ և երջանիկ էին, մէկ օր էլ շար ողին մտնում է երկու շների մէջ, որոնցից մէկը բած է լինում և միւսը որձ, և դրանք խօսք մէկ են անում և յարձակում մի անմեղ զառան վրայ, նրան պատառ-պատառ անում, լափում, և արիւնոտ կզակներով գնում են մեր նախահօր առջեր կանգնում, իբր թէ ոչ մի շար բան չեն արած: Մեր նախահայրը որ տեսնում է նրանց, իսկոյն իմանում է նրանց արած շարութիւնը, անծում է նրանց և ասում. «Թայլեր, ինչո՞ւ անմեղ արին թափեցիք»: Այս ասելն ու այն երկու շների զայլ դառնալը մէկ է լինում:

Այնուհետև նրանց աքսորում է դէպի անտառները և միւս շներին պատիրում, որ միշտ հալածեն նրանց:

Այս է պատճառը, որ գայլերը թէպէտ շան նման են, բայց շուն չեն, այլ վայրենի, անդուխ և ագահ դապաններ են:

### ԼՈՒՍՆԱՀԱՅ

— Հայրիկ, ինչո՞ւ մեր Բօղարը,  
Միշտ հաշում է լուսնի վըրան,  
Մի՞թէ պայծառ լուսնեակը,  
Մէկ վնաս է տալիս նըրան:  
— «Ո՛չ, որդեակ իմ, ոչ թէ վնաս,  
Այլ լոյս, միայն լոյս է տալիս,  
Իսկ շանն—իբրև զայլի ցեղի—  
Լոյս գիշերը զիւր չի զալիս.

Բայց լուսինը խօսմ չըգիտէ,  
Որ իր վրայ հաշողներ կան,  
Նա լուռ ու մունջ, բակ բոլորած,  
Ճարունակում է իր ճանպան.  
Մենք էլ, որդեակ, լուսնի նման  
Պէտք է լոյս տանք մութ աշխարհին,  
Եւ համարենք, թէ շենք լսում  
Մեր վրայ զուր հաշողներին»:

ԳԱՅԼ ԵՒ ՍԿԻՒՐ

Սկիւռը, ծառի վրայ թոշկոտելիս, յանկարծ վայլը ընկաւ մի զայլի վրայ, որ քնած էր ծառի տակին:

Գայլը վեր թռաւ, բռնեց սկիւռին և ուզեց ուտել։  
Սկիւռն աղաչանք արաւ, որ իրան բաց թռողնէ։ «Թող  
ինձ, ասաց, գայլ եղբայր, ինչ ուզենաս, քեզ կըտամ։

Գայլն ասաց.—Չատ լաւ, քեզ կըթողնեմ, եթէ  
ինձ կասես, թէ պատճառն ինչ է, որ ես միշտ տը-  
խուր եմ, միշտ դարզոտ, իսկ դուք, սկիւռներըդ,  
միշտ ուրախ էր, միշտ դւարժ, և շարունակ թոշկո-  
տում էր ծառերի վրայ և խաղում։ 

Սկիւռն ասաց.—Առաջ թող ինձ ելնեմ ծառը,  
այնտեղից կըտամ քո պատասխանը։

Գայլը բաց թռեց։ Սկիւռը վեր ելաւ ծառը և  
այնտեղից ասաց գայլին։—Քո տխրութիւնդ նրանից  
է, որ դու չար ես. չարերն ուրախութիւնն չունին։  
Իսկ մենք ուրախ ենք միշտ նրա համար որ բարի  
ենք, ոչ ոքի վատութիւնն չենք անում։

Գայլը շատ բարկացաւ և չարութիւնիցն ուզում  
էր կատաղել. բայց էլ ի՞նչ կարող էր անել. սկիւռը  
ծառի վրայ էր և դայլից շատ բարձր։ 

### ԳԱՐԵՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Հնուց մացած մի լաւ առակ կայ, և շատ ուղիդ  
է, Աստւած է վկայ, որ հզօրի դէմ, թէն մեղաւոր,  
անզօր արդարն է լինում յանցաւոր։

Այսպէս մէկ անգամ շոգից նեղացած, հօտից մո-  
լորած, մի ծարաւ դառնուկ խայտալով վազեց դէպի-  
առւակը, որ թիշ ջուր խմի, ծարաւը կոտրի, փոքր  
ինչ զովանայ, վազէ տուն գնայ։

Այդ իսկ բոպէին, որտեղից որտեղ, մի գայլ դուրս  
պըրծաւ և կամաց-կամաց, սուս փուս, դողի պէս, շան

կերպարանքով, դառին մօտեցաւ։ Ի՞նչ ասել կուզի,  
թէ ինչու համար, քաղցած զազան, վափլիկ գառ-  
նուկ, կառնէր կըտանէր և անուշ կանէր։

Բայց մէկնիմէկ նա այզպէս չարաւ, իսկոյն չը-  
տարաւ։ Զըգիտեմ որտեղ՝ մեր ծաղկաթաւալն ու-  
սում էր առել, օրէնք սովորել. ուզեց իր դործը խեղճ  
գառնուկի հետ օրէնքով տեսնել. որպէզի շասեն, թէ  
գառն արդար էր, գայլը՝ մեղաւոր։ Բայց ինչ էլ լի-  
նէր, դարձեալ զազան էր, կոպիտ բաւական, հետք  
շըկար վրան ուսման, կըթութեան, ինչպէս կըտես-  
նէր նրա խօսելից, վարւելու ձեից։

—Այ դու անպիտան, կենդանի անբան,—ասում  
է զառին գայլն ուսումնական,—ի՞նչ իրաւոնքով և որ  
օրէնքով համարձակւել ես իմ մաքուր ջուրըս, պարզ  
խմելիքս քո պիղծ բերանով այսպէս պղտորել աւա-  
զով, ցեխով և հազար տեսակ աղբ ու զիբիլով։ Քո  
այդ յանդուզն չարութեան համար զիտես ինչպիսի  
պատիժ կայ դրւած։

—Վսեմափայլ տէր, ասում է զառը, ես գիր չը-  
գիտեմ, բայց թէ թոյլ կըտաս, այսքանը կասեմ, որ  
ջուրը ցածից վերև չի գնալ, դու էլ կիմանաս։

—Ի՞նչ ես դուրս տալիս, ես չեմ հասկանում.  
ջուրը ներքեմից վերև չի գնալ, այդ ով չըգիտէ, էլ  
ասիկդ ի՞նչ է։

—Իմ ասելն այն է, Վսեմափայլ տէր, որ դու վե-  
րեկից եկար դէպի ինձ։ Այդ էլ որ շասենք, հէնց ջըին  
նայենք, շատ լաւ կըտեսնենք, թէ ինչքան պարզ է,  
ինչքան մաքուր է։ Զուր է, նշմարիտ, քո բարկութիւնը։

—Տեսէք, մէկ տեսէր այս բատահակին, սրա ա-  
սածին։ Համարձակում ես, կենդանի անբան, տալ ինձ  
5

պատասխան։ Քո խելքով՝ ուրեմն ես սուտ եմ խօսում, շառ եմ հնարում։ Ես լաւ եմ յիշում և չեմ մոռացել, որ մէկէլ տարին էլի դու էր, որ յանդզնեցար, ինձ ընդդիմացար, և հայհոյելով այստեղից փախար, ձեռքիցըս պլծար։

—Ախ, ինչ ես ասում, տէր իմ պատական, դեռ ես շրկամ ես մէկ տարեկան,

—Ուրեմն եղբայրդ էր. Էլ ով կըլինէր այնքան քեզ նման, քեզ պէս անպիտան։

—Ողորմած տէր իմ, ես եղբայր չունիմ։

—Ինձ համար մէկ է, ով կուզի լինի. միթէ դու չունիս քաւոր, խնամի։ Մէկ խօսքով նա ձեր յիմար ցեղիցն էր։ Դուք, ձեր շները, ձեր հովիւները, ինձ շփրելով, իմ չարն ուզելով, երբ որ կարենաք, միշտ մնաս կըտաք։ Այդ մեղքի համար, ես հիմա գիտեմ, թէ քեզ ինչ կանեմ։

—Ախ, Աստւած իմ, Աստւած,—զառն ազաղակեց—ի՞նչ է իմ մեղքըս, սա շըհաստատեց... Վսեմափայլ տէր, ողորմած եղիր, ես մեղաւոր չեմ...։

—Լոիր, անպիտան, ոչխարի լակոտ, իմ բանն ու դործը խօմ չի կտրւել, որ քո մեղքերդ ըսկսեմ քննել։ Եկ գնանք անտառ, ես այնտեղ կանեմ քո զատաստանը։ ասաց զաղանը, և մեր զառնուկին դրաւ շալակին...։

ԲԱԶԼՆ ԵԽ ԱՇԱԽՆԻՆ

Գիշատիչ բագէն իր սուր ճանկերում Բոնած՝ աղաւնուն պատառուում էր.

«Հ՝ ճանկը ընկար. զուր ես աշխատում Պրծնիլ իմ ձեռքից, զուր այդ հնարքներ։ Խարեբայ, ես ձեզ լաւ եմ ճանաչում,

Հայհոյիչներ էք, խորամանկ օձեր.

Զեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում, Դուք էք մշտական մեր թշնամիները։

Բայց կան աստւածներ վրէժխնդրութեան, Նրանք ամենքին կանեն զատաստան։

—Ախ, ուր էր, թէ այդպէս լինէր՝

Զարագործներին խստութեամբ պատժէր»։ Հազիւ հառաջեց աղաւնին մարած,

Սուր-սուր ճանկերում սաստիկ սխմըւած։ «Ի՞նչպէս, ինչպէս, այդ ինչ ասացիր,

Ախ դու ուրացնող, մի մէկ էլ կրկնիր, Գու չես հաւատում, համ, աստւածներին,

Նախախնամութեան այն հզօր ուժին։ Է՞հ, ուզում էի ազատել ես քեզ,

Բայց, չէ, տեսնում եմ, դու արժանի չես, Ուրեմն մեռիր, զուր է փրկութիւն, Սնաստւածներին շրկայ թողութիւն»։

ԱՆՄԻԾ ԵԶՆԵՐ

Երեք եղը միասին դաշտում արածում էին։ Եղներից մէկն սպիտակ էր, մէկը կարմիր և մէկը սև։

Մէկ օր մի քաղցած գայլ մօտեցաւ սրանց և ուզում էր մէկին կամ միւսին վիրաւորել, բայց եղները քամակ քամակի տըլին, ցոյց տըլին գայլին իրանց սրածայր պօզերը։ Գայլը տեսաւ որ եղներին ոչ մի վնաս չի կարող տալ, քանի որ նրանց մէջ միութիւն կայ, մտածեց երկապակութիւն ձգել մէջները, միմեանցից բաժանել, որ կարողանայ ամեն մէկինցով յաղթել։

—Բարով ձեզ, բարեկամներ, ասաց գայլը, ես չեմ եկել ձեզ մի վնաս տալու, ձեր պողերն ինչու էք իմ դէմ բռնում։ Ես էլ ձեզ պէս չորս ոտն ունիմ, երկու ականջ, երկու աշք, մի պոչ, մի բերան, մի զլուխ. միթէ կարելի բան է, որ նմանը նմանին մի վնաս տայ։ Բայց սրանից, դուք սուր սուր պօղեր ունիք, ես չունիմ. ձեզանից ամեն մէկը մի դէւ է ահագին, իսկ ես ձեր հորթի չափ էլ չըկամ։ Համարեցէր թէ ես ձեր պահապան շունն եմ, թողէր ձեզ մօտ կենամ, ձեզ հետ արածեմ, երեք չըլինինք՝ չորս լինինք, ի՞նչ վնաս ունի։

Գայլի այս խօսքերի վրայ եղները միամտեցան և մի քիչ էլ փրեցան իրանց պօղերովը, մանաւանդ երբ տեսան, որ գայլն էլ է արածում։ Բայց գայլի փորը ցաւում էր, նրա համար էր արածում, և այն էլ ոչ թէ արածում էր, այլ խոտերը պոկում, էլ ետ վեր էր ածում, և եղներին խաբելու համար ցոյց էր տալիս, որ իբր թէ նրանց նման արածում է։

Վերջը, երբ սպիտակ եղը մի կողմ քաշւեց և սև առ կարմիրը միւս կողմը, գայլը մօտեցաւ ջուխտ եղներին և փսփսաց նրանց ականջին։ —Բարեկամներ, դուք երկար չէք կարող այս կանաչ խոտումն արածել, սպիտակ եղը իր գոյնովը ձեզ փորձանքի մէջ կըձգի։ Գուք ձեր գոյնովը ցերեկն էլ չէք երևում, իսկ սպիտակը գիշերն էլ է լոյս տալիս ճրագի նման։ Ծաղկակոխները (ուզում է ասել գայլերը) շուտ կըտեսնեն նրան և կըգան։ Նրա պատճառով դուք էլ կընկնիք փորձանքի մէջ և կըպատժւիք։

—Բօ—բօ—բա—բա, գոշեցին եղները, միաբերան, որով ուզում էին ասել միթէ ճշմարիտ ես ասում։

—Ի հարկէ, ասաց գայլը, ես ի՞նչ օգուտ ունիս սուտ ասելու, ես ձեր լաւութիւնն եմ ուզում, երդուոմ եմ ձեր ամենազօր պօղերովը, որ սուտ չեմ ասում։ —Մա—մա—մու—մու, ասացին եղները. այսինքն ինչ անենք ուրեմ, որ աղատւինք այդ փորձանքից։ —Ոչինչ հարկաւոր չէ, ասաց գայլը, դուք ձեզ համար արածեցէր այստեղ, ես կազատեմ ձեզ նրանից։ Եղները կամք տըւին, և գայլը գնաց սպիտակի բկիցը բռնեց։ Սպիտակն իր օրհասական գոռոցով և բղբղոցով միւսներին օգնութեան կանչեց, թէ եկէք, եղբայրք, օգնեցէր, սա գայլ է մէկ օր էլ ձեր բկին կըշոքի իսկ սևն ու կարմիրը նրան չօգնեցին այլ ուրախանակով ասացին։ —Քո հախն է, անպիտան, ինչու դու սպիտակ ես և ոչ մեզ պէս կարմիր կամ սև. դու բունպիտան գոյնովդ մեզ էլ պիտի կրակի մէջ զցէիր։

Գայլը երբոր հատացրեց Սպիտակի միսը և նորից քաղցեց, մէկ օր էլ մօտեցաւ Սևին և փսփսաց ականջին։ —Գիտես ի՞նչ կայ. ես անցեալ անգամ քեզ ոչինչ շասացի, որովհետև Կարմիրը մօտըդ էր. բայց հիմա պարտք եմ համարում ասել, որ կարմիր գոյնը նոյքան վնասակար է, ինչքան և սպիտակը։ Միայն քո գոյնն է շահաւէտ, որ ոչ ցերեկն է երեսում և ոչ գիշերը։ Եկ ինձ լսիք և թող կարմրիցն ազատեմ քեզ։ Այնուհետև դու մենակ կարածես, նրա բաժին խոտն էլ քեզ կըմնայ։ Սևուկը կամք տըւաւ. գայլը գնաց կարմրի բըկիցը բռեց, Կարմիրն աղաղակեց և Սևուկին օգնութեան կանչեց՝ ասելով։

—Արի, օգնիր ինձ, սպանենք այս կեղծաւորին, թէ չէ՝ մէկ օր էլ քո բկին կըչոքի։

Սեռուկը հեռու կանգնած, փորն ուռցրած, պօզե-  
րը շարդախ արած, տեսնում է իր ընկերոջ մահը և  
ուրախանալով՝ ասում.—Քո հախն է. ինչու դու էլ  
ինձ պէս սև չես. քո անպիտան կարմիր գոյնովը  
ինձ էլ պիտի կրակի մէջ գցէիր. Այսուհետև քո բա-  
ժին խոտն էլ ինձ կըմայ, ես մենակ կուտեմ և ա-  
ւելի կըգիրանամ:

Մի քանի օրից յետոյ անկուշտ գայլը Կարմրի  
միսը հատացըել էր և կըկին քաղցել. Մօտեցաւ սեռ-  
կին և ասաց.

—Բարեկամ, ախորժակս բացւել է. էլի միս է  
ուզում սիրաբա: Ասում են՝ եթէ ատամներդ սև եղան  
կաշւին քսես, իսկոյն կըկշտանաս, էլ քո օրումը չես  
քաղցիլ. Մտածեցի, որ սրանից լաւ բան էլ ինչ կը-  
լինի: Կերթամ, ասացի, ատամներս մեր Սեռուկի կաշ-  
ւին կըքսեմ և կըկշտանամ, նա էլ այնուհետեւ էլ եր-  
կիւղ չի ունենալ ինձանից, և մենք աւելի սիրով  
կապրենք:

—Բօ, հօմ—հօմ, ասաց Սեռուկը, որ կընշանակէ,  
թէ—այդ ինչլաւ բան են ասել: Ճշմարիտ որ միշտ կաս-  
կածով եմ նայում քեզ վրայ, բայց որ կուշտ կըինիս,  
ինչ ասել կուզի, որ էլ ինձ մի վնաս չես տալ: Ահա իմ  
կաշին, ատամներդ վրան քսիր, ինչքան կամենում ես:

—Ճնորհակալ եմ, բարեկամ, շատ շնորհակալ, որ  
այդքան բարի ես. միայն խնդրում եմ որ մի ըոպէ աշ-  
քերդ վակես, եթէ ոչ կաշիդ չի ազդիլ ատամներիս  
վրայ. այսպէս են ասում, ես ինքս էլ չըգիտեմթէ ինչու:

Սեռուկն աշքերը վակեց և մինչև այսօր դեռ  
վակւած են:

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ  
Երկու ընկերներ իրիկնապահին  
Հրացան առած՝ անտառ գնացին:  
Որ մէկ բան որսան,  
Ճուտով յետ դառնան:

Յանկարծ անտառից մի արջ դուրս պրծաւ  
Ու կատաղութեամբ նրանց վրայ վազեց.  
Մէկն շտապելով ծառը բարձրացաւ,  
Միւսն անճարացած զետնի վրայ պառկեց,  
Ճունչն իրան բաշեց  
Ու անշարժ մնաց,  
Որ արջը կարծէ,  
Թէ նա մեռած է:

Արջը մըռռալով՝ մօտեցաւ նըրան,  
Ականջը կամաց զրաւ բերնի վրան,  
Ականջ զրեց,  
Հոտ բաշեց:

Վերջապէս նրան մեռած կարծելով,  
Հեռացաւ գնաց՝ դունչը լիպելով.  
Փախած ընկերը ծառիցն իջաւ ցած,  
Ընկերին հարցրեց, թէ արջն ինչ ասաց:  
—Արջն ինձ պատվիրեց, որ ես միւս անգամ  
Քեզ պէս մարդու հետ որսի շըգնամ,  
Որ մեզ մի վտանգ, բան պատահելիս՝  
Մենակ շըթողնես ու ինքդ վախչիս...

ԺԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Ճառերն անտառում երբ շատ նեղացան կացնի  
Ճեռիցը, ու էլ չիմացան, թէ ինչ անեն, որ իրանց

զլուխը պահեն, խորհուրդ արին, որ մի հնար գտնեն:  
 «Կացինն ովկ է, կամ ի՞նչ է, որ մեղ կարենայ  
 զօռ անել, յաղթել, ի՞նչ մեծ բան է նա». այսպէս  
 ձայն տւառ ծառերից մէկը «մենիք որ կոթ շրտանք,  
 կացինն ի՞նչ է որ յանդգնի անել մեղ կտոր-կտոր»:  
 Ով որ կոթ կրտայ պողւատէ կացնին,  
 Թող «հոգւոցն» ասէ առաջ իր անձին:

ՅԱ ԽՍՀԵԼ

(ՀԵՔԻՄ)

Ճատ հին ժամանակ մի թագաւոր կար,  
 Զօրեղ, իմաստուն ու շատ էլ արդար:  
 Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահւան,  
 Չըդիտէր, թէ ովկ կըյաջորդէ իրան:  
 Թէպէտ նա ունէր տասներկու որդի,  
 Բայց չէր իմանում, թէ որին ընտրի:  
 Մեծը ուժով էր, բայց անդութ ու չար,  
 Նըրանից փոքրը՝ թոյլ և ցաւագար,  
 Երրորդը՝ անհոգ ու խելքից պակաս,  
 Չորրորդը՝ անմիտ, թէև անվնաս:  
 Այսպէս՝ ոչ մէկը հօր սրտովը չէր,  
 Ոչ մէկը նրա բնոյթը չունէր:  
 Միայն մի քիչ յոյս կրտսերն էր տալիս  
 Բայց նա էլ հօր մօտ չէր գնում, գալիս.  
 Այդ պատճառով էլ հայրը շրգիտէր,  
 Թէ արդեօր նա ի՞նչ շնորհի տէր էր:  
 Թագաւորն այսպէս շատ որ մտածեց,  
 Հանելուկի պէս մի բան հնարեց.

Մի թարմ ցախաւել իր առջե դրած՝  
 Որդոցը կանչեց և նրանց ասաց.  
 «Միրելիք, այսօր ես ձեզ կանչել եմ,  
 Որ վերջին կամքս ամենքիդ յայտնեմ.  
 Ինչպէս տեսնում էք, ես ծերացել եմ,  
 Եւ բաւական է որքան ապրել եմ.  
 Չուտով իմ նախնեաց ճանպովը կերթամ,  
 Նրանց պէս ես էլ սև հող կըդառնամ.  
 Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումը.  
 Կուզեմ ձեզ յայտնել ի՞նչ կայ մտքումը:  
 Ահա ձեր առջև մի նոր ցախաւել,  
 Որ ես հէնց այսօր կապել եմ տըւել.  
 Չեզանից ով որ կըկոտրէ սրան,  
 Իմ թագն ու գահը ես նրան կըտամ.  
 Գէհ, առաջ եկէք, ուժերդ փորձեցէք,  
 Տեսնեմ ձեզանից որըդ կըկոտրէք»...

— Հայր, ես կըկոտրեմ, ասաց մեծ որդին,  
 Եւ վստահութեամբ մօտեցաւ աւլին.  
 Վերցըեց աւելն ու ծունկը կալաւ,  
 Քաշեց, բաշքշեց, ոչինչ չի եղաւ.  
 Ճատ քըտինը թափեց, շատ շարչարւեցաւ,  
 Դեղնեց, սփրթնեց և յետ բաշւեցաւ:  
 Յետոյ երկրորդը եկաւ, վեր առաւ,  
 Նա էլ իր եղբօր դառն օրին հասաւ.  
 Երրորդն էլ եկաւ, իր ուժը փորձեց,  
 Բաւական տանշանք չորրորդն էլ կըեց.  
 Միւսներն էլ իրանց բախտը փորձեցին,  
 Բայց ցախաւելը չի էլ ծոեցին:

Ամենից վերջը փոքրը մօտեցաւ  
եւ իր հօր առաջև այսպէս խօսեցաւ.

—Հայր, ես չեմ ուզում իմ ուժը փորձել,  
իմ եղբարց նման իզուր շարշարւել,  
ես երեխայ չեմ, որ ձեռքս մեկնեմ  
Դէպի լուսինը, որ նրան բռնեմ.  
Զուրը կըխեղգէ, կրակը կայրէ,  
Ով այս շըդիտէ՝ թող ինքը փորձէ:  
ես ոյժ տեսնում եմ ամենայն բանում  
Թէ երկրիս վրայ և թէ երկնքում:  
Առ մի բարակ ծեղ, մի մազ կամ մի թել,  
Մեծ ուժ կըդտնես ամենի մէջ էլ.  
Թէ փոքրիկ՝ միջատ, թէ ուզտ ահազին,  
Ամենըն էլ ուժից մեծ բաժին ունին:  
Կայ և խելքի ուժ, ինչպէս և սրտի,  
Աշքի, ականջի, ձեռքի և ոտքի.  
Ուսերն ու մէջըն էլ պակաս ուժով չեն,  
Բայց զբանք թոյլ են, թէ միացած չեն.  
Ուժով չի լինիլ ոչ մի առարկայ,  
Եթէ մասներում միութին շըկայ.  
Մասերն իրար հետ երբ սերտ կապ ունին,  
Այդպիսով միայն ուժով կըլինին.  
Այսպէս շատ անհատ երբ որ միանան,  
Մեծ և շափազանց մեծ ոյժ կըստանան,  
Մեզ լաւ օրինակ մըջիմ ու մեղուն,  
Թէ նրանք խմբով ինչեր են անում,  
Նրանց պէս եթէ մարդիկ միանան,  
Լեռներ կըշընեն՝ եթէ կամենան.

Եւ ինչքան լճեր, ինչքան ջրանցքներ  
Միացած ուժով կարող են շինել:  
Ես քո տէրութեան ցըւած ուժերը,  
Ամուր կապերով կապած կըպահեմ.  
Եյս է քո միտքըդ, ես ինչքան գիտեմ.  
Բայց որ ասածըս լաւ հասկացնեմ,  
Տեսէք՝ աւելը ինչպէս կըկոտրեմ։  
Եւ այս ասելով՝ նա վեր է առնում,  
Աւի կապերը քանդում, արձակում.  
Ճկուն ճղները վերցնում է հատ-հատ,  
Ամենի առջև կոտրատում, զարդում։

—Ապրիս, իմ որդի, ասում է հայրը.  
Քեզ է արժանի իմ թագն ու գահը։  
Գրկում է որդուն, ճակատից պաշում,  
Եւ թագն իր ձեռքով գլխին է զնում։  
«Տեսէք, ասում է միւս եղբայրներին,  
Դուք շընախանձիք ձեր եղբօր փառքին.  
Եթէ սրա հետ սերտ սիրով մնաք,  
Աւելի մեծ ոյժ և փառք կըստանաք,  
Իսկ եթէ զատւիք և զոկ-չոկ լինիք,  
Քանդւած աւլի պէս շուտ կըկոտրատիք։  
—Մենք հնազանդ ենք, ասում են նրանք՝  
Տալրի եղբօրը պատիւ և յարգանք։  
Իմաստուն որդին հասաւ մուրազին,  
Դուք նոյնպէս համնիք ձեր մուրազներին։

ՑԱԽԵԼԻՒԹ

# ԱՐԵԳՆԱԶԱՆ

4 U U

## ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՌՀ

## Երեք հայ մանուկներին

ԻՆՔՆՈՒՐՈՅԵՆ ԵՒ ԱԶԱՏ ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ

*Cypripedium*  *luteum*

ԳԱՅԱՆԱԳ  
ԾԱԳԱՄ ՔՐԵԺԴՊԱ

Ա Ա Գ

ՀՂԱՄԻՄ ՀԱԲԱՐՊԱՌՈՒՄ

Ամպամիտման ըամ դեյք՝

Ամպամիտման ասք և ժամանակական  
ԴՐԱՄԱ

յու ոչ ճանապարհ ուղարկ առանձ ու այս  
պարագաներ ու լինական առաջնական պահպան առաջ  
սկզբ ամփակած բար պատճեն առանձնութեք ունեցուի  
և համար ու վայ ու ու այս ու պա առանձ ու  
ու անահարիւն ուղարկ այս ու ըստ ու զանձ ու

**Պատ հին ժամանակ,** երբ աշխարհը լիքն էր հրա-  
շքներով և երբ բարի ու չար Ողիներն անընդհատ պա-  
տերազմ էին մղում իրար դէմ, այդ ժամանակ Մա-  
սիսի ստորոտում կենում էր մի ծերունի իշխան՝ Ար-  
ման անունով։

Արմանն ունէր երեր զաւակ, մօրից որբ մնացած։  
Նրանցից երկուսն աղջիկ էին մինը բան զմիւսը գե-  
ղեցիկ, իսկ երրորդն աւելի ևս չընաղ և չնաշխարհիկ,  
միայն բարի Ողիները նրա ինչ լինելը թագցը էր էին  
հողեղէններից։ Այդպէս էին կամնեցել բարի Ողիներն  
իրանց համար յայտնի նպատակով և մի որոշ ժա-  
մանակով։ Երբոր ժամանակը լրանար, նրա տղայ  
կամ աղջիկ լինելն այն ժամանակ պիտի յայտնւէր։  
Բայց Արմանը նրան չէր որոշում աղջիկներից, և ե-  
րեքին էլ միաձև աղջկայ հազուստով էր պահում, —  
«Թող սա էլ աղջիկ համարւի, ասաց նա, մինչև բարի  
Ողիների կամքը կատարւի», և անունն էլ դրաւ Ա-  
րեգնազան՝ միատեսակութեան համար, որովհետև մեծի  
անունը դրել էր Զամազան, իսկ միջնակինը Զարմա-  
նազան։

Երեգնազանը մեծացաւ աղջկայ պէս. և թէպէտ  
հաւատացած էր, որ ինքն աղջիկ է և աղջիկներից էլ  
ամենից գեղեցիկը, բայց ատում էր աղջկան վայել  
բաները։ Նա չէր սիրում բուրդ զգել, թել մանել, կար  
ու ձե անել, և դրա հակառակ՝ երբ մի լաւ ձի կամ մի

զէնք էր տեսնում, խելքը գնում էր: Մայր շունէր, որ  
նրան ստիպէր տնարարութիւն սովորեցնէր, իսկ հայրը,  
կարծես գիտութեամբ, ոչ միայն այդ մասին ոչինչ հոգս  
չէր անում, այլ և նրան իր հետ որսի էր տանում և  
ձի հեծնել ու զէնք գործածել էր սովորեցնում

Այսպէս անցաւ մի ժամանակ. մէկ օր Արմանը  
կանչեց իր զաւակներին և ասաց.

—Ես ծառայում էի մեր բարի թագաւորին և նա  
ինձ շատ էր սիրում: Ահա այս զաշտերն ու անտառները,  
այս սարերն ու ձորերը, որ հիմա մեր ձեռին է, բոլորը  
թագաւորն է ընծայել ինձ, հաւատարիմ ծառայութեա-  
նըս համար: Երբոր ձեր մայրը վախճանւեց, սաստիկ  
տիրութիւն եկաւ վրաս: Վեր առայ ձեզ, քաշւեցի այս  
խաղաղ վայրերը և, տիրութիւնս փարատելու համար,  
զլուխս որսորդութեան տւի: Դուք հիմա մեծացել էք, իսկ  
ես՝ ծերացել: Դուք այստեղ մեծանում էք ինչպէս վայրի  
եղջերուներ. ինչ կըլինի ձեր վերջը, եթէ այստեղ մնաք.  
ի հարկէ, շատ վատ: Ապագայ թշւառութիւնից ձեզ ա-  
զատելու համար ես մտածել եմ, որ ձեզանից մէկին  
տղայի հագուստով ուղարկեմ թագաւորի մօտ ծառայե-  
լու: Թագաւորը սիրով կընդունի և իմ տեղը ժամանակով  
նրան կըտայ: Այսպիսով ձեզանից մէկը կարող է միւսնե-  
րիդ էլ տանել իրան մօտ: Հիմա մըըդ կուզենաք գնալ:

—Ես կերթամ, հայրիկ, ասաց մեծ ազիկը:

—Ես էլ, հայրիկ, ես էլ, մէջ ընկաւ միջնակը.

Արեգնազանը լուս էր:

—Իսկ դժւ, նազանիկ, դու չես կամենալ, հարց-  
ըեց հայրը Արեգնազանին, կարծես ուզում էր, որ  
գնացողը նա լինէր անպատճառ:

—Ինչո՞ւ չէ, հայրիկ. բայց երբոր իմ մեծ քոյրն  
ուզում է, ես ինչո՞ւ արգելք լինիմ նրան:

—Այստեղ արգելքի բան չըկայ, հոգիս. ինձ հա-  
մար գուք երեքդ էլ մէկ էք, միայն դեռ չըգիտեմ,  
թէ ձեզանից ո՞րն աւելի յարմար կըլինի:

—Ես ամենից յարմարն եմ, հայրիկ, ասաց մե-  
ծը, որովհետեւ ես ամենից մեծն եմ:

—Ճատ լաւ, բայց ես առանց պայմանի ոչ մէ-  
կիդ չեմ ուղարկելու: Եթէ դու կամենում ես, կերթաս  
ուրեմն կըփոխես հագուստդ, կընտրես զէնք ու զրահ,  
և առաւօտը շատ վաղ քո ձին կըհեծնես, կերթաս  
որսորդութեան. Եթէ դատարկ չըփերադառնաս, քեզ  
կուղարկեմ թագաւորի մօտ:

Միւս առաւօտը մեծ ազիկը, ինչպէս պատւիրել  
էր հայրը, ճանապարհ ընկաւ դէպի դաշտ՝ մի բան որ-  
սալու համար: Երբոր մտաւ մի խոր ձորի մէջ և ու-  
զում էր անցնել միւս կողմը, նրա առաջը կտրեց մի  
զիմակաւորւած ձիաւոր՝ ոտից մինչև զլուխ զինաւոր-  
ւած: Աղջիկը նրան որ տեսաւ, այնպէս վախեցաւ, որ  
քիչ մնաց լեզուն կապւի. սաստիկ երկիւղից մնաց  
կաշկանդւած, վախչել անդամ չըկարողացաւ: Զիա-  
ւորը մօտեցաւ նրան ու ասաց.

—Ե տղայ, սիրուն տղայ,  
Ուր ես զնում այդպէս մենակ.  
Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ  
Դուրս ես եկել անժամանակ:

Աղջիկը պատասխանեց կմկըմալով.

—Ես... ես... զնում եմ...

Ոչ... ոչ... չեմ գնում,  
Հա... հա... պիտի գնամ...  
Ի՞նչ երեսով յետ դառնամ...

Չիաւորը սպառնալով ասաց.

— Գու գնում ես. ուր ես գնում.  
Ուր ես փախչում դու ձեր զեղից.  
Յետ դառ խկոյն, թէ չես ուզում  
Որ գլուխդ թռչի տեղից...

Այս ասելով ձիաւորը հանեց թուրը և բարձրաց-  
րեց, որ զարկէ աղջկան, բայց նա բղաւեց. «Վայ, վայ,  
մի զարկիր, մի զարկիր, ես աղջիկ եմ, ես աղջիկ եմ,  
ահա, ահա, յետ եմ դառնում»:

— Որ աղջիկ ես, ուրեմն դնա ձեր տուն, ձեր հա-  
ւերին կրւտ տուր: Տղամարդի հագուստ ունենալը բա-  
ւական չէ, պէտք է տղամարդի սիրտ էլ ունենալ: Ել  
լաւ էր որ ինձ պատահեցիր և ոչ մի ուրիշին,  
ասաց ձիաւորը և անյայտացաւ:

Աղջիկը դողողալով վերադարձաւ տուն:

— Ե... ուր է բերած որսը, հարցըց հայրը,  
ինչո՞ւ այդպէս շուտ վերադարձար:  
— Ճանապարհին չերմս բռնեց, հայրիկ. գլուխս  
ցաւում է...

Միւս օրը միջնակին ուղարկեց: Նա էլ մեծին  
պատահած փորձանքին հանդիպեց—նրա պէս վա-  
խեցած վերադարձաւ տուն:

Երրորդ օրը Արեգնազանին ուղարկեց: Նրան ևս  
հանդիպեց միենոյն ձիաւորը և ասաց.

— Այ տղայ, սիրուն տղայ«  
Ուր ես գնում այդպէս մենակ,

Ինչո՞ւ փափուկ անկողնիցդ  
Դուրս ես եկել անժամանակ:

Արեգնազանը պատասխանեց բարկանալով.

«Քեզ ի՞նչ, թէ ես ուր եմ գնում.

Ուր գնում եմ, այդ ես գիտեմ.

Ես չեմ գնում, որ քեզ նման  
Խաղաղ մարդոց ճանպէն կտրեմ»:

— Ուրեմն ես աւագակ եմ.

Դու ես ասում ինձ այդ բանը,

Այս ըովէիս զու կրստանաս

Քո այդ խօսքիդ պատասխանը:

— «Այն, թէ զու աւագակ ես,

Ցոյց է տալիս քո զիմակը,

Բայց թէ ինչպէս տղամարդ ես,

Այդ թող տեսնէ իմ նիզակը...

Այս ասելով՝ Արեգնազանը յարձակւեց նրա վրա  
ասելով.

— Դէն ձգիր դիմակդ, տեսնեմ զու ինչ մարդ ես,  
եթէ ոչ այս ըովէիս կը թոցնեմ գլուխդ:

Չիաւորն ընդդիմացաւ, վահանով պաշտպանեց և  
թրով յարձակւեց Արեգնազանի վրայ: Արեգնազանը  
նոյնպէս պաշտպանում էր վահանով և յարձակւում  
թրով: Մի ժամ շարունակ տեսեց նրանց կռիւր, և ոչ  
մէկը չըկարողացաւ զարկել միւսին, զարկերը վահաննե-  
րին էին գիպչում: Միայն Արեգնազանը հետզհետէ զօ-  
րանում էր, իսկ նրա հակառակորդը թուլանում: Վերջը  
Արեգնազանը մի ճարպիկ ոստիւնով թռաւ ձիուցը. իր  
հակառակորդի վողպատից բռնելով վայրգլորեց ձիուց,  
և հէնց այն է, ուզում էր, որ մի հարւածով գլուխը

թոցնէր, նա իսկոյն վեր առաւ դիմակը...

— Ա՛խ, հայրիկ, հայրիկ, բացականչեց Արեգնազանը. այս ինչ փորձանքի մէջ էիր զցում դու ինձ... եթէ մի փոքր ուշ վեր առնէիր դիմակդ, ինձ հայրասպան պիտի շինէիր:

Հայրը մօտը նստեցը Արեգնազանին և նրա վրան նայելուց չէր կշտանում: Մի փոքր շունչ առնելուց յետոյ՝ ասաց.

— Ապրիս, ապրիս, Արեգնազան,  
ծլիս, ծաղկիս, գօրանաս,  
չիմա զիտեմ, որ իմ տեղը  
Դու անպատճառ կստանաս:

Իգուլ չեմ քեզ սովորեցրել  
Զինք ու զրահ գործ ածել,  
Խրբու զիտես, որ ամենքից  
Քեզ եմ սիրել առաւել:

Թող սա լինի, ասացի ես,  
Արու զաւակ ինձ համար.  
Սորա անվախ, անահ սիրտը  
Քաջ տղամարդի է յարմար:

Ել աղջիկ չես այսուհետեւ,  
Չըմոռանաս այդ բնաւ  
Դու աշխատիր, որ ստանաս  
Բարի անուն մեծ համբաւ:

Արքայական ապարանքը  
Մի մեծ բոյն է փորձութեան,  
Եթէ սիսալ մի քայլ անես,  
Դու կորած ես յաւիտեան:

Այժմ գնա դու իմ հոգեակ,  
Օրհնութիւնս քեզ հետ տար,  
Եղիր բարի, մեծահոգի,  
Եղիր անմեղ ու արդար...

2.

Երբոր Արեգնազանը ներկայացաւ թագաւորին և յայտնեց, որ ինքը Արմանի որդին է, թագաւորը շատ ուրախացաւ:

— Ես այնպէս էի կարծում, ասաց թագաւորը,  
որ մեր Արմանը հասած տղայ չունի: Անունը ինչ է տղաս:

— Տէրութեանդ ծառայ Արէգ:

— Արէգ... շատ լաւ անուն է և քեզ բոլորովին յարմար: Ուրախ կաց, տղաս, քեզ այստեղ լաւ կըպահեն: Եթէ մի նեղութիւն, մի կարիք ունենաս, մեզ յայտնիք: Վաղը պիտի որսի երթանք, դու էլ կըգաս մեզ հետ:

Թագաւորը մինուճար մէկ աղջիկ ունէր նունուֆար անունով: Այնքան զեղեցիկ էր նունուֆարը, որ արեգակին ասում էր՝ «Դու մի զուրս զալ, ես եմ լոյս տալու»:

Երբոր թագաւորը խօսում էր Արեգնազանի հետ, նունուֆարը վարագոյը ետեից թարուն նայում էր նրա վրայ և զմայլում:

«Սա իսկ և իսկ այն պատկերն է, որին քանի անգամ տեսել եմ ես երազումս, ասում էր նունուֆարն ինքն իրան:»

Միւս առաւօտը որսական փողերը հնչեցին:

Հազարից աւելի ձիաւորներ դուրս եկան, բոլորն էլ զինւորած լայնակամար նետաղեղներով, երկայնակոթ նիզակներով և այլ զէնքերով։ Իրանց հետ ունէին բազմաթիւ գամփոններ, բարակներ, բազէններ... մի խօսքով որսի ամեն պատրաստութիւնով...

Անցան գնացին, հասան մի լայնատարած դաշտ, չորս կողմից ահագին անտառներով շրջապատւած։ Որսական շներով անտառներից դուրս փախցըին բոլոր էրէներին դէպի դաշտ, շղթայաձև շրջապատեցին ամբողջ դաշտը, և բոլոր որսերին կալմէջ արած՝ սկսեցին անխնայ կոտորել։

Արեգնազանը թագաւորի մօտից չէր հեռանում և նրանից էլ ըիշ չէր կոտորում։ Որսասպանութեան այդ միջոցին թագաւորը մի եղչերւի ետևից ձին չափ զըցելիս, ինչպէս պատահեց, վայր ընկաւ ձիուց, թէն անվնաս, միայն ձին խրտնեց, փախաւ, թագաւորը մնաց հետի-ոտ և իսկոյն ընկաւ մի արջի առաջ։ Արջը ետևի ոտների վրայ կանգնեց, բերանը բաց արաւ և հէնց որ ուզում էր թագաւորին իր գիրկն առնել, ջարդել, Արեգնազանը մի ակնթարթի մէջ նետի պէս սլացաւ իր ձիով և թըրի մի հարւածով կէս արաւ արջի գլուխը և վայր գլորեց ամենի դազանին։ Թագաւորն ազատւեց և Արէգը դարձաւ նոյն օրւան հերոսը։

—Այ քեզ բախտ... ինչու ես չէի մօտիկ թագաւորին, ասում էին որսորդներից շատերը.

Թագաւորին սոյն օրւան պատահած դէպքի լուրը շուտով քաղաք հասաւ և պատանի որսորդի արած

քաջութեան համբաւը մի ըոպէում տարածւեց ամբողջ քաղաքի մէջ։

Տեսնելու բան էր, թէ ինչպիսի աղաղակ էին բարձրացնում քաղաքացիք որսորդների վերադարձին։ —Կեցցէ թագաւորը, կեցցէ քաջ Արէգը, գոռում էին միաբերան և երգում։

—Ո՞վ է ազատել մեր թագաւորին  
Արջի ճանկերից, հայ, արջի ճանկերից.  
Մեր քաջ Արէգը, սիրուն պատանին,  
նա է ազատել արջի ճանկերից,  
Արջի ճանկերից, հայ, արջի ճանկերից...

Երկայն նիզակը բերանն է կոխել,  
Գլուխը թրով մէջտեղից կիսել,  
Ամեհի զազանին գետին կործանել,  
Մեր թագաւորին անվնաս պահել  
Արջի ճանկերից, հայ, արջի ճանկերից...

Արէգն է սիրուն արեգակի պէս,  
նոր է դուրս եկել որսական հանդէս,  
Արջի գլուխը արաւ երկու կէս,  
Մեր թագաւորին ազատեց այսպէս  
Արջի ճանկերից, հայ, արջի ճանկերից. .

Արէգն է դիցազն, քաջ ու անվեհեր,  
Կեցցէ յաւիտեան, կեցցէ շատ օրեր,  
Եթէ նա այսօր այնտեղ չըլինէր,  
Մեր թագաւորին էլ ով կազատէր  
Արջի ճանկերից, հայ, արջի ճանկերից...

Արեգնազանը այս ցոյցերը տեսնելով, ասում էր

ինքն իրան. «Ախ, ինչ լաւ բան է տղայ լինելը, երանի ես ճշմարիտ տղայ լինէի. Աղջիկը ո՞րտեղից կարող էր այս պատրին արժանանալ»...

—Դու այսօր ցոյց տւիր ինձ քո շնորհքդ, Արէգ, ասաց թագաւորը, այսուհետեւ դու ինձնից անբաժան կը մնաս: Ապրիս, տղաս, ապրիս: Դու մի հազւադիւտ էակ ես. գեղեցկութեան և ջաճելութեան հետ շատ հաշտ չէ քաջութիւնը, բայց Երկինքն ուզեցել է քեզ մի բացառութիւն համարել: Վաղը դու իմ ձիաներից կը մնա քեզ համար ամենալաւը, իմ զէնք ու զրահներից ամենից ընտիրները, դու ժամանակով գիւցապանց կար կը կընկնիս, և հէնց այժմ էլ մի փոքրիկ դիւցազն ես... գը կընկնիս, և հէնց այժմ էլ մի փոքրիկ դիւցազն ես...

Թագաւորը շատ ուրախ էր, որ մի փոքրիկ դիւցազն է գտել, բայց նունուֆարի ուրախութիւնը սահմանից անց էր կացել:

—Սրան Երկինքն է ուզարկել ինձ համար, ասում էր նունուֆարը ինքն իրան. ամեն բան այնպէս է գնում, ինչպէս որ պէտք էր ցանկանալ: Բայց Երբ պիտի տեսնեմ նրան երես առ երես, կամ նա ինձ նըր պիտի տեսնի: Ախ, ինչքան ցանկանում եմ, որ հէնց այս բոպէիս նա ինձ մօտ լինի, մենք միասին կըխօսենք. ես նրան կասեմ... նա ինձ կասէ... Եւ կըխօսենք. ես նրան կասեմ... նա ինձ կասէ... Եւ ինչու չըկանչեմ, ինչու չըխօսեմ: Հայրս նրան որդու պէս է սիրում, որովհետեւ իր բարեկամի որդին է, նա պղատ ել ու մուտք ունի բոլոր պալատում: Այո, այո, աղատ ել ու մուտք ունի բոլոր պալատում: Այո, այո, պէտք է կանչել: Էյ, ով կաք այդտեղ, կանչեց նունուֆարը: Ներս մտաւ մի աղախին:

—Այս բոպէիս կերթաս Արեգի մօտ և կասես որ գայ ինձ մօտ. ասա՞— «Եկ, ինձ տես»...

Աղախինը գնաց և կանչեց Արէգին:

— 2եմ կարող գալ, պատասխանեց Արէգը: Ինչու չէք կարող, պարոն. նա հրամայել է, պնդեց աղախինը:

— Ես նրա մօտ գործ չունիմ, հասկանո՞ւմ ես: Պարոն, նա ասում է. — «Եկ ինձ տես»... հասկանո՞ւմ ես...

— Գնա, ասա. «Ոչ կըզամ և ոչ կըտեսնեմ քեզ»... Աղախինը գնաց:

Նունուֆարը Արէգի մերժումը լսելով՝ այնպէս սառաւ ու տաքացաւ, այնպէս կարմրեց ու սփրթնեց փոփոխակի, որ աղախինն այդ տեսնելով՝ սարսափի մէջ ընկաւ.

Նունուֆարի սիրտն ուզում էր տրաքել, գլխի սկաւառակն ուզում էր բարձրանալ: Նա անդադար այս ու այն կողմն էր ընկնում, մերթ գուռն էր բաց անում, մերթ պատուհանը. Նրա սենեակը դարձաւ մի հնոց, և նրան այրում, խորովում էր:

— Մերժում... արհամարհնք... ինձ, ինձ, ոհ, զլուխս, զլուխս տրաքում է, տրաքում...

Աղախինը, վստահացաւ աշել.

— Տիրուհի, ես զարմանում եմ, որ դու մի այդ-պիտի դատարկ բանի համար սիրտ շուռ ես բերում: Նա գուցէ սաստիկ ամաշում է, և զրա համար է, որ չեկաւ: Երբսը լսեց որ դու կանչում ես իրան, ամօթից կարմրեց, վարդ կտրեց, և ինչքան գեղեցիկ էր.

— Սսա, ասա, խօսիր, շարունակիր, ես չըլսեցի քո բոլոր ասածները... ոհ, որքան ստոր եմ ես հիմա նրա աչքումը, որքան ստոր... բայց նա սխալում է, այնպէս չէ, նա սխալում է...

Նունուֆարը երկար ժամանակ հոգեպէս տանջ-  
ւելով թուլացաւ և ընկաւ անկողին։ Թագաւորին ի-  
մաց տւին։ Նա գնաց տեսաւ. բժիշկներ կանչեց։ Հա-  
ւաքւեցին բոլոր բժիշկները, յոյս տւին թագաւորին,  
թէ հիւանդութիւնը վտանգաւոր չէ և շուտով կրթշկեն։  
բայց, զրա հակառակ, քանի գնաց՝ նունուֆարի տը-  
կարութիւնը վտանգաւոր դարձաւ. բժիշկները յու-  
սահատեցին և ուղղակի յայտնեցին, որ չեն կարո-  
ղանում իմանալ ոչ ցաւի պատճառը և ոչ նրա բը-  
ժշկելու հնարը։

Ճատ տխրեց թագաւորը։ Նունուֆարը նրա միակ  
զաւակն էր, միակ միսիթարութիւնը, իր թագաւորու-  
թեան միակ ժառանգուհին։ Ամբողջ պալատը և հա-  
մարեա ամբողջ քաղաքը տխրութեան մէջ ընկաւ։ Ա-  
րեգնազանն էր միայն անտարեր մնացողը։ Նրա հո-  
գը չէր ամեննին և չէր էլ երեսակայում, որ ինքն է  
նրա տխրութեան միակ պատճառը։

Նունուֆարին շատ թէ քիչ սփոփողը և ուրախ  
տրամադրութիւն տւողը թագաւորի ծաղրածուն էր,  
իսկ նրա վրա հակողն ու խնամք տանողը վէզիրի կինը։

Վէզիրի այրի կինը մի հասած տղայ ունէր։ Նա  
կարծում էր, որ թագաւորին արժանաւոր վեսացու  
միայն իր տղան կարող է լինել և ոչ մի ուրիշը։  
Այդ պատճառով նա դիշեր ցերեկ չէր հեռանում նու-  
նուֆարի մօտից. աշխատում էր նրան առողջացնել  
և միևնույն ժամանակ նրա սէրը զրաւել։

Մի երեկոյ ծաղրածուն ներս մտաւ ու ակսեց երգել.

Մէկ, — ըէգ, մեր Արէգ.  
Զորս, — մորս, գնաց որս,

Վեց, — նեց, ըսպանեց  
Մի արջիկ, մի աղջիկ...  
Ես հաշեցի և գտայ  
Մեր պալատում մի տղայ,  
Նրան տեսնող աղջիկը  
Խելը հացով կու կրտայ։

Ես յիմար եմ, միշտ յիմար,  
Ինձ ով կասի, թէ գտար  
Քո սիրելի տիրուհու  
Ցաւի համար գեղ ու ճար։  
Եարալլալի շարալլալի,  
Հայզէ, յիմար, զուրս արի...»

Երգեց յիմարը և, մի քանի ոստիւններ անելով,  
դուրս փախաւ։

Վէզիրի կինը «մատը կծեց», և ընկաւ մտատան-  
ջութեան մէջ։ — Ես հիմա հասկացայ ամեն բան, ա-  
սաց մտքումք։ Յիմարն իմ հաշիւը տակնուվրայ ա-  
րաւ։ Ճատ լաւ. քո Արէգին ես մի այնպիսի տեղ ու-  
ղարկեմ, որ «գնալն ըլի, գալը շըլի»...

— Մեր յիմարն այնքան յիմար չէ, ինչքան կարծ-  
ուում է, ասաց տիկինը նունուֆարին։

— Այն, բայց այս անզամ շատ յիմարացաւ, պա-  
տասխանեց նունուֆարը։

Միւս առաւօտուն ամենից կանուխ վէզիրի կի-  
նը գնաց թագաւորի մօտ։

— Ինչ կայ, ինչպէս է աղջկանս առողջութիւնը,  
հարցըց թագաւորը։

— Ելի այնպէս է, տէր թագաւոր, ինչպէս տեսել ես, բայց ես եկել եմ մի ուրախառիթ լուր հաղորդելու:

— Ի՞նչ լուր, ասա շուտով, գուցէ իմ աղջկանն է վերաբերում, ուրիշ ոչ մի լուր ինձ չի կարող ուրախացնել:

— Այս, այդ: Այս զիշեր երազումս երևաց մեր թագուհին և ասաց ինձ, որ նունուֆարի միակ զեղը «անմահական ջուրն է»:

— Ան-մա-հա-կան ջուր... բացականչեց թագաւոր. բայց ովք կարող է բերել այդ անմահական ջուրը, որի միայն անունն ենք լսած, իսկ իրան չենք տեսած:

— Ես հարցրի այդ մասին թագուհուն և նա ասաց, որ միայն Արէգը կարող է բերել...

— Արէգը... լաւ. ես կուզարկեմ նրան, թող երթայ իր բախտը փորձէ...

— Թագաւորը կանչեց Արէգին և առաջարկեց նրան գնալ անմահական ջրի:

— Գնա, տղաս, եթէ կարողանաս այդ ջրից բերել և իմ աղջկանս առողջացնել, ես նրան քեզ կը տամ և նրա հետ իմ թագաւորութիւնը:

— Այդ խոստումն էլ որ չըլինի, տէր արքայ, ես պատրաստ եմ հնազանդիլ քո հրամանին, զու ինձ ասա միայն, որտեղ է գտնուում այդ անմահական ջուրը:

— Նրա տեղն ովք կիմանայ, որդի: Նա մի առանձին պարզէ է, մի առանձին ողորմութիւն և շնորհք, որ բարի Ռդիները միայն իրանց ընտրածին են տալիս: Թէպէտ լսած ենք, որ նա մի աղքիւր է, որ նրա վըրայ հսկում են աներեւյթ ոգիները, որ նա երբեմն բղխում և երբեմն անյայտանում է, բայց այդ ովք զի-

տէ: Դու երեսդ կըդարձնես դէպի արևելք, կընկնիս երկրէ երկիր, աշխարհքէ աշխարհք, ամեն տեղ հարց ու փորձ կանես, կամ կըդտնես, կամ չես գտնիլ, այդ քո ճակատագրիցը, քո բախտիցն է կախւած. բայց ինչ էլ որ լինի՝ յաջողութիւն, թէ անյաջողութիւն, զու շատ բան կըտեսնես և շատ բան կըսովերես: Իմ գանձարանը բաց է քեզ համար. որքան կարող ես, հետդ ոսկի և ակնեղին վերցրու, շատ տեղ հարկաւոր կըդայ...

### 3.

Արեգնազանը գնաց:

Զարմանալի մի էակ էր Արեգնազանը. միշտ աշխոյժ ու զւարթ, միշտ անահ ու անհոգ. նեղութեան մէջ ընկած ժամանակն էլ իր ուրախ տրամադրութիւնը չէր փոխում: Նա գնաց իր Բազիկ ձիով, որ երեք-չորս օրւա ճանապարհը մէկ օրումն էր անցնում: Նա պտտեց մի քանի թագաւորութիւն. շատ տեղ հարց ու փորձ արաւ, շատ բան տեսաւ, շատ նեղութիւններից ազատւեց, մինչև հասաւ Կախարդական աշխարհը, ուր ամեն մի քայլափոխում մի նոր հրաշք էր տեսնում, մի նոր զարմանալիք:

Մէկ օր սաստիկ արև էր: Ճողը որ շատ նեղեց Բազիկին, Արեգնազանը իշաւ մի լճի մօտ, Բազիկին բաշեց կապեց մի խիտ ստւերի մէջ, ինքն էլ մօտը նստեց, հանեց իր ճանպի պաշարը և սկսեց ճաշել: Հէնց այդ միջոցին մէկ էլ տեսաւ, որ ահա մի խումբ աղաւնիներ թռած եկան և իջան լճի ափին՝ իրանից շատ մօտիկ: Նետաղեղը լարեց, որ մի որս անէ, մէկ էլ

տեսաւ, որ բոլոր աղաւնիները հանեցին փետուրները  
և աղջիկ դառնալով՝ թափւեցին ջուրը լողալու:

Արեգնազանը մնաց ապշած մի բոպէ, յետոյ մը-  
տածեց նրանց հետ մի խաղ խաղալ և տեսնել ինչ  
կըլինի հետևանքը: Կուզէ-կուզ մօտեցաւ ափին, այն-  
պէս որ իրան շըտեսան, վերցրեց նրանց մէկի փե-  
տուրները: Երկու մեծ թէ էր աղաւնու, մնացած փե-  
տուրներն էլ վըան:

Զանցաւ մի բանի բոպէ, բոլոր աղջիկները դուրս  
եկան, հագան իրանց թեներն ու թռան, բայց մէկը,  
որ իր թեները շրդտաւ, ամաչեց մերկ կանգնել ջրի  
ափին, իսկոյն իրան զցեց ջուրը: Արեգնազանը այդ  
նկատելով՝ թեները ձեռին մօտեցաւ աղջկան: Աղջիկը  
ջրում ընկղմած, միայն գլուխը դուրս հահած, մօ-  
տեցաւ Արեգնազանին ու սկսեց երգել:

Այ տղայ, սիրուն տղայ,  
Թեներըս տուր, թեներըս,  
Թեներըս տուր, թոշիմ գնամ,  
Ինչ կամենաս, քեզ կըտամ:

Իմ օրումս չեմ տեսած  
Քեզ պէս սիրուն մի տղայ,  
Այդքան զեղեցկութեան մէջ  
Սիրտ չի լինիլ անզգայ:

Խնայիր ինձ, աղաչում եմ,  
Թեներըս տուր, թեներըս,  
Թեներըս տուր, թոշիմ գնամ,  
Ինչ կամենաս, քեզ կըտամ:

Եթէ իրաւ տղայ ես,  
Կուզեմ դառնաս դու աղջիկ,  
Որ քո սեռում չըլինի  
Քեզ հաւասար զեղեցիկ:  
Տես, ահա ես քեզ օրհնում եմ.  
Թեներըս տուր, թեներըս,  
Թեներըս տուր, թոշիմ գնամ,  
Ինչ կամենաս, քեզ կըտամ:

Աղաւնի աղջիկը լոեց, և վիզը ծոած, իր ամեն-  
արնեռուշ ժպիտը բերանին՝ նայում էր Արեգնազա-  
նին և սպասում, որ իր թեներն ստանայ:

Արեգնազանին այնքան դիւր եկաւ աղաւնի աղ-  
ջկայ երգի եղանակը, որ ասում էր «ոչ ուտեմ, ոչ  
խմեմ, սա երգի, ես լսեմ...»

— Ճարունակիր, շարունակիր, մի քիչ էլ երգիր,  
խնդրեց Արեգնազանը: Քո երգն ինձ շատ է դիւր  
զալիս. դեռ այլպէս բան լսած շըկամ կեանքումս:  
Միայն մի բան ես շըհասկացայ, սիրուն աղջիկ: Դու  
ասում ես. «Եթէ տղայ ես, աղջիկ դառնաս», այդ  
ինչպէս կարելի է.

Աղջիկը շարունակեց երգել.  
Ամենայն ինչ կարելի է,  
Ոչ մի դժւար բան չըկայ,  
Եթէ իրաւ աղջիկ դառար,  
Հիմա դարձիր քաջ տղայ:  
Թող երեսիդ մօրուք բուսնի  
Թուխ ու երկայն բեխերով,  
Թող կոշտանայ սիրուն զէմքը  
Հաստ ջիլերի զծերով:  
Ո՞հ, տեսնում եմ, զու փոխում ես...

ԹԱԵՐԸ ՄՈՒՐ, ԹԱԵՐԸ,  
ԹԱԵՐԸ ՄՈՒՐ, ԹՈՉԻՄ ԳՆԱՄ,  
ԻՆՉ ԿԱՄԵՆԱՍ, ՔԵՍ ԿՐՈՎԱՄ:

Մի վայրկենական ուշագնացութիւն եկաւ Արեգ-  
նազանի վրայ, և նա զգաց մի անսովոր բան, բայց  
շատ հաճոյական: Նայեց ջրի երեսին, ուր ինչպէս  
հայելու մէջ, պատկերացաւ մի դէմք, բոլորովին Ա-  
րեգնազանի նման, միայն նորածիլ բեխերով ու մօ-  
րուքով: Այդ պատկերն առաջ մի քիչ խորթ թըւաց  
Արեգնազանին, բայց յետոյ այնքան զմայլելի եղաւ,  
որ վրան նայելուց չէր կշտանում: «Ես ես կըլինիմ  
անպատճառ, ասաց ինքն իրան: Ես հիմա ճշմարիտ  
որ Արէգ եմ»:

— Սիրուն աղջիկ, դու տւիր ինձ այն, ինչոր իմ  
միակ ցանկութիւնն էր, այժմ դու ազատ ես: Ես չէի  
սպասում բեզանից այսպէս բան. ուրեմն դու ինձ  
կասես, դու անպատճառ կիմանաս, թէ որտեղ է  
գտնւում անմահական ջուրը, որի համար ես ահա  
քանի ժամանակ է թափառում եմ:

Աղջիկն սկսեց երգել.

Թող նունուֆարդ ուրախանայ,  
Որ ճանկ գցեց քեզ պէս փեսայ,  
Հիմա հասար քո մուրազին,  
Եկար աղջիկ, կերթուս տղայ:  
Անմահական ջուր ես ուզում...  
ԹԱԵՐԸ ՄՈՒՐ, ԹԱԵՐԸ,  
ԹԱԵՐԸ ՄՈՒՐ, ԹՈՉԻՄ ԳՆԱՄ,  
Եւ իմ կտցով բերեմ տամ:  
Գնա, օգնիր տկարնե բին,

Հոգի ու շունչ տուր քարերին,  
Թէ որ կուզես ինչպէս հիմա  
Մնալ վոխւած ինչպէս տղայ.  
Իսկ եթէ ոչ, լաւ զիտենաս,  
Որ տղայից քար կրղառնաս,  
Երբ քարացած քաղաքի մէջ  
Կախարդ կընկան կըմօտենաս:  
ԹԱԵՐԸ ՄՈՒՐ, ԹԱԵՐԸ,  
ԹԱԵՐԸ ՄՈՒՐ, շուտ հազնեմ,  
ԹՈՉԻՄ ԳՆԱՄ ու քեզ համար  
Անմահական ջուր բերեմ...

Աղջկայ վերջին խօսքերից շատ բան շըհասկա-  
ցաւ Արէգը, բայց չուզենալով այլևս ուշացնել նրան,  
թերեր տըւաւ իրան: Աղջիկը թերեր հազնելուն պէս  
դարձաւ աղաւնեակ և թուաւ զնաց: Մի քանի ըոպէ  
շանցած՝ մի փոքրիկ շիշ կտցին, անմահական ջրով  
լիքը՝ բերաւ Արէգին տըւաւ ու ինքը կըկին թուաւ  
զնաց:

Արէգը ձին հեծաւ և ճանապարհ ընկաւ՝ ձիու  
հետ խօսելով.

— Բաղիկ, ես հիմա տղայ եմ, գիտես, էլ աղջիկ  
չեմ: Առաջ աղջիկ էի. այդ ոչ ոք շըգիտէր. զուցէ դու  
էլ շըգիտէիր. հայրս պատկիրել էր, որ ոչ ոքի չասեմ,  
թէ ես աղջիկ եմ. բայց հիմա տղայ զառայ: 0՝, որ  
զիտենաս, Բաղիկ, ինչքան ուրախ եմ հիմա: Դու չես  
խմանում. թէպէտ աղջիկն էլ լաւ է, բայց տղային  
որտեղ կըհանի: Ես հիմա շըգիտեմ՝ ուր եմ զնում,  
Բաղիկ, դու ինքդ զնա որ կողմ կուզես. այսուհետեւ  
ինձ համար միենոյն է... Բայց սպասիր, ես մի աշ-  
տարակի ծայր եմ նշմարում, նա անպատճառ մէ

քաղաք կըլինի, զնանք դէպի այն կողմը։ Զարմանալի անհոգ եմ ես, Բաղիկ. մէկ չես ասում թէ, ինչու այդ իմաստուն աղջկան շընարցըիր, թէ՛ ով դու գեղեցիկ և իմաստուն տղջիկ, որ կողմով պիտի յետ դառնամ ես իմ աշխարհքը։ Դեռ լաւ էր որ նա առանց իմ ասելուն՝ ինձ տղայ դարձրեց. որ բանն ինձ մնար, ես դեռ էլի աղջիկ կըլինէի. ի՞նչ կարող էի մտածել, որ այդպէս բան կարող է պատահել։ Բայց երբոք տեսայ, թէ այդպէս բան լինում է, ինչու շասացի՝ սիրուն աղջիկ, ինձ որ տղայ դարձրիր, մեր Բաղիկին էլ մարդ դարձրու, եթէ ոչ՝ գոնէ խօսելու ձիրք տուր, հը, ինչ կասես, Բաղիկ։ — Ոչինչ, դու տղայ դառար, ես էլի մնացի ձի։ — Երաւ, իրաւ, այդ լաւ չեղաւ։ Մի բան տեսնելիս այնպէս յափըշտակում եմ որ բոլոր մնացած բաները մոռանում եմ, յետոյ միտս է գալիս, բայց ուշ է լինում...

Այսպէս ձիու հետ խօսելով և նրա վոխանակ ինքը պատասխանելով՝ մեր վերանորոգւած Արէգը դիմեց դէպի երկացող աշտարակը։

Հ.

Երբոք Արէգը մօտեցաւ բարձր աշտարակին, հետըդհետէ երկացին և ուրիշ շատ տներ, և նրա առջել բացւեց մի մեծ քաղաք։ Մօտեցաւ քաղաքաղուանը, տեսաւ մի բանի մարդիկ կանգնած, հարցրեց նրանց։

— Տղէք, ինչ քաղաք է սա, և որտեղ են իջնում օտարականները։

Մարդիկ ձայն շընանեցին։

— Զեղ եմ ասում, տղէք, չէք հասկանում։ Զայն շըկայ։ Երկի խուլ են, մտածեց Արէգը և գնաց ձեռք դիպցը նրանց։

— Ով երկինք, բացականչեց Արէգը, այս ինչ եմ տեսնում. այս ի՞նչ հիանալի արձաններ են, իսկ ես կարծեցի, թէ ուղիղ մարդիկ են։ Այս ինչքան ճարտար քանդակողործ է եղել սրանց շինողը...

Արէգը կարծելով թէ իր տեսածներն ուղիղ շինովի արձաններ են, ներս մտաւ քաղաքը և առջեր բացւեցան նորանոր տեսարաններ՝ բոլորն էլ քարեղէն։

Անազին շուկա, կարգին խանութներ, թէ կրպակ, թէ տուն, թէ կատու, թէ շում, ուտելիք ու հազնելիք, գեղեցիկ գորգեր և ուրիշ զարդեր... բոլորը, բոլորը բարացած։ Ոչ ծուխ, ոչ կրակ, ոչ ձայն, ոչ շունչ... կեանքի հետք ու նշոյլ շըկայ...

— Ես հիմա հասկացայ. սա է ազանի աղջկայ ասած քարէ քաղաքը, ասաց Արէգը և սկսեց շըշել քաղաքի մէջ, ուր ամեն մի քայլափոխում մի նոր տեսարանի էր հանգիպում։

Մի տեղ մի խումբ մարդիկ կանգնած՝ որպէս թէ իրար հետ խօսում են. մէկի դէմքը բարկացած է և բերանը բաց. կարծես միւսին հայհոյում լինի. մէկը ծիծաղում է, միւսը լաց է լինում. մի կին՝ երեխան զրկած, ողորմութիւն է ուղում. մի տեղ հարսանիքի հանդէս է, իր ամեն սարը ու կարգով. հարսին տանում են վիսայի տուն։ Մէկ խօսքով, եթէ շարժման մէջ եղած մի քաղաք մի վայրկեանում տեղնուտեղը բարանայ, ինչ պատկեր կըստանայ, ահա այդպիսի մի պատկեր էր ներկայացնում քարացած քաղաքը։ Մըր-

դավաճառը միրգը քաշել է և կիսով չափ ածել առնողի զամբիւղը, մինչև միւս կէսն ածելը՝ քարացել են՝ ինքն էլ, կշեռքն էլ, առնողն էլ, միրգն էլ. ահա այսշափ արագ էր եղել քարանալը:

— Խեղճ մարդիկ, ասաց Արէգը, հող դառնալու էլ չէք արժանացել, այլ դառել էք ծախու ապրանք։ Ճշմարիտ, եթէ մէկն այս անթիւ արձանները կարողանար տանել հեռու աշխարհներ վաճառելու, անշափ հարստութիւն կըդիզէր։ Ահա այս նորապսակ աղջկայ արձանին՝ ով գիտէ իր քաշովը-մէկ ոսկի կըտային։ Բայց ինչ եմ մտածում ես էլ. այս թշւառութիւնն աշ-կարա տեսնողը՝ էլ ինչ կարող է հարստութեան վրայ մտածել։ Ահա հարստութիւն՝ մեր առցե պատկերացած իր իսկական կերպարանքով… Ախ, երանի թէ սրանցից մէկը լեզւաւորէր և ինձ պատմէր իրանց զըլ-խի անցրը։ Արի մէկ կըբդաւմ, ինչ կըլինի։

— Ո՞վ քաղաքացիք, ինչու էք քարացել… կան-չեց Արէգը,

— Քարացել… արձագանդ արւին բոլոր քարերը։

— Ք…ա…ը… յանկարծ մի նոր ձայն լսւեց։

— Ահա ձայն լսեցի, ասաց Արէգը և մէկ էլ բդաւց։ — Ո՞վ կաք կենդանի…

— Ե…ս… պատասխանեց ձայնը։

Արէգը որոշ կերպով լսեց, թէ որտեղից է գալիս ձայնը. զնաց դէպի այն կողմը։ Մի գեղեցիկ ապա-րանք էր. առջին ընդարձակ պարտէզ, բոլորն էլ քա-րացած. փոքրիկ մի ծաղկոցում նա գտաւ մի քարա-ցած մարդու կենդանի գլուխ։

— Ո՞վ ես դու, ո՞վ մարդ, հարցրեց Արէգը։

— Զուր… զուր… պատասխանեց գլուխը՝ հազիւ կարողանալով խօսել։

— Զուր ես ուզում։

— Զուր… զուր… տուր… տուր…

— Հայրիկ, ձեր քաղաքի ջուրն էլ է քարացել, ջուր չըկայ։

— Մի… մի… կաթ… կաթ…

— Մի կաթիլ ջուրը բեզ ինչ կօգնէ, քո ծարաւը մի կարաս ջրով չի յագենալ։ Ես ունիմ ինձ մօտ մի բանի կաթիլ ջուր, եթէ կըբաւականանաս, չեմ իննա-յիլ քեզանից։

— Հա… հա… հա…

Արէգը հանեց անմահական ջրի շիշը և նրանից մի քանի կաթիլ կաթեցը լսեց կիսարձանի բերանը։ Կենդանի գլուխը ոչ միայն կատարելապէս զովացաւ, այլև զգաց մի վերակենդանութեան ցնցում իր բոլոր մարմնի մէջ և սկսեց պարզապէս ասել.

Դու՝ բարի հրեշտակ,

Ո՞րտեղից եկար,

Փախիր, հեռացիր

Մի առ ժամանակ,

Բայց ոչ, սպասիր,

Ես էլ եմ զալիս…

Այն, զալիս եմ.

Նայիր, մէկ նայիր…

Կիսարձանը կենդանացաւ և սկսեց քայլել, ա-ռաջ մի փոքր զանդաղ, յետոյ աւելի շուտ-շուտ և սկսեց փախչիլ, իր ետկից կանչելով Արէգին — Փա-խիր, փախիր, որդիս, եկ իմ ետկիցս, մեզ հարկա-

ւոր է թարշիլ, հիմա ուր որ է, պիտի գայ քարացնող պառաւ հրէշը: Արի, արի, մտնենք իմ ապարանքը, գոնէ քեզ շըգտնէ:

Արէզը մնացել էր շփոթւած, չէր իմանում, թէ ինչ անէր, բայց վերջը հետևեց փախչող մարդուն: Զինքաշեց ներս, վարի յարկումը մի մուժ անկիւնում կապեց, իսկ ինքը վերև բարձրացաւ այն մարդու մօտ: — Ես չեմ հասկանում, այդ ինչ հրէշ է, որից այդքան փախենում ես դու, ասաց Արէզը:

— Եյդ հրէշը մի պառաւ է, որդի, նա է քարացը մեր քաղաքը. ամեն օր այս ժամանակին գալիս է նայում և գլարճանում իր չարութեան վրա. հիմա ուր որ է՝ պիտի գայ, և եթէ մեզ տեսնէ կենդանի, իսկոյն կըքարացնէ:

— Հիմա հասկացայ: Բայց ինչպէս է եղել, որ քեզ բոլորովին չէր քարացը ել:

— Աւելի տանջելու համար: Ես այս քաղաքի թագաւորն եմ. ինձ կասեն Անդաս թագաւոր: Քաւթառ հրէշը գլուխս կենդանի թողեց ասելով. — «Աչքերդ բաց եմ թողնում, Անդաս, որ տեսնես քո թագաւորութեան ոչնչութիւնը իմ զօրութեան, իմ ուժի առջե»:

— Ինչումն է նրա զօրութիւնը, կամ ինչով է նա ուժեղ, շըգիտե՞ս:

— Նրա զօրութիւնն իր գաւազանների մէջն է, նրա գաւազանները մահ են սփոռում ամեն տեղ: Նա մի գործիք է չար ոգիների ձեռքում և նրանցով է անում, ինչ որ անում է: Կամ, ով դիտէ, գուցէ հինց ինքը մի չար ոգի է, պառաւի կերպարանը առած:

— Ի՞նչ ես կարծում, եթէ զրա ձեռքից լսենք իր գաւազանները...

— Բայց ինչպէս կարելի է մօտենալ նրան. միայն բարի Ոգիքը կարող են այդպիսի բան անել, կամ այնպիսի մի մարդ, որ բարի Ոգիների պաշտպանութիւնն իր կողմն ունի:

— Ինձ թւում է, որ բարի Ոգիները կըպաշտպանեն մեզ, ասաց Արէզը, և պատմեց աղաւնի աղջկայ հետ հանդիպելը, նրա արածն ու ասածը...

— Օ՛... եթէ այդպէս է, ապա ուրեմն դու մի բարի Ոգի ես, երկնքից ուղարկւած, բացականչեց թագաւորը: Ես կարող եմ այժմ համարձակ դուրս գալ նրա առաջը, իսկ դու ինձ մօտ թար կըկենաս, որ երբ յարձակի ինձ վրայ, դու իսկոյն կըբռնես նրան և զինաթափ կանես: Ահա, ահա երեսում է նա. տես, ամպերի մէջ, խնոցու վրայ հեծած, օձէ մտրակը ձեռին, զալիս է:

— Տեսնում եմ, տեսնում.. դու սիրտդ պինդ պահիր, չըփախենաս, ես նրա հոգին կըհանեմ: Այս սելով՝ իշան պարտէզ: Արէզը թաք կացաւ մի քարացած ծերունու քամակում:

Պառաւը վայր իջաւ թագաւորի դիմացը, ձեռքն առաւ իր երեք գաւուզաններից մէկը և սպառնալով ասաց.

Այս ինչ եմ տեսնում,

Այստեղ ով եկաւ,

Այս կեանըն, այս հոգին

Մըրան ով տըւաւ:

Հասէք, ոգիներ,

Հասէք, շուտ հասէք,

Զեր լսեղն պառաւին

Եկէք, օգնեցէք:

Կակ զու, գաւազան,  
Ի՞նչպէս ես զարկւել,  
Որ սա նոր-մէկանց  
Ոտքի է կանդնել:

Հապա, գաւազան,  
Հապա, մէկ տեսնենք,  
Քո զօրութիւնը  
Մէկ այժմ էլ փորձենք:

Գաւազանը ձեռին յարձակւում է պառաւը, որ  
զարկէ թագաւորին, ասելով՝

Քար էիր, Անդաս,  
Էլի բար գառնաս...

Այդ միջոցին Արէգը բռնեց նրա մազերից և այն-  
պէս գետին փռեց, որ պառաւը կիսաշունչ եղաւ։  
Թագաւորը, որ առանց ուղիղ քարանալու, այլ մի-  
այն երկիւղից մնացել էր քարացած, նոր սրտապըն-  
դեց և մօտեցաւ պառաւին։ Գաւազանները խլեցին,  
և պառաւի ձեռքը ու ոտքը կապեցին։

— Հիմա ինչ պատժով պատժենք քեզ, գարշելի  
պառաւ, ասաց թագաւորը։

Պառաւը պատասխանեց.

Ինչ պատիժ կուզէք, մէկ է ինձ համար,  
Թող ձեր պատիժը ձեզ լինի յարմար։  
Բայց այդ դու չէիր, Անդաս թագաւոր,  
Այլ տղայացած աղջիկ զօրաւոր...  
Գրւած է արդէն իմ ճակատազրում,  
Եւ ողիների մատենազրում,

Թէ երբ մի աղջիկ կըդառնայ տղայ,  
Քո թշւառ կեանքին նա վախճան կըտայ։  
— Օ՛... եթէ այդպէս է, ես պատրաստ եմ, ա-  
սաց Արէգը, միայն դու առաջ պէտք է կենդանաց-  
նես այս քաղաքը։

— Թող այդպէս լինի, թող կենդանանայ,  
Թող ամեն մէկը իր գործին կենայ։  
Ուրիշ շարութիւն շատ ունիմ արած,  
Թող Բէլիարը նրանցով շատանայ...  
Ամպեր, գոռացէք,  
Կայծակներ, զարկէք,  
Աղբիւրք, բղխեցէք,  
Դետեր, վազեցէք։

Մարդ և անասուն,  
Գազան և թոշուն,  
Հասաւ ձեր ժամը,  
Հիմա վեր կացէք...

Պառաւն իր խօսքն աւարտած, շաւարտած՝ խո-  
րին լուսթիւնը յանկարծ դղրդաց, քաղաքը մտքի ա-  
րագութեամբ կենդանացաւ։ Ամենըն էլ այնպէս շա-  
րունակեցին իրանց կիսատ թողած գործերը, որ  
կարծես ոչ քարացած են եղել երբ և իցէ, ոչ բան։  
Աքաղաղը, որ իր կանչի կիսումն էր քարացել, միւս  
կէսը հիմա աւարտեց. զուռնաշին, որ զուռնան բե-  
րանումն էր քարացել, շարունակեց ածելը. պար ե-  
կողն էլ, որ ձեռները բարձրացրած էր մնացել, շա-  
րունակեց իր պարը. խոհարարը շարունակեց մսի  
քափ քաշելը, և բոլորն այսպէս. Ոչ մի մարդ, քա-  
ցի թագաւորից, շիմացաւ՝ որ նա երբ և իցէ քար  
է եղել.

— Հիմա ի՞նչ անենք այս չար պառաւին, ասաց  
թագաւորը:

— Գաւազանները ձգենք ծովը, պատասխանեց  
Արէզը, իսկ պառաւին թողնենք երթայ. սրա զօրու-  
թիւնը վերացած է այսուհետեւ:

Պառաւը շուղեց կենդանի մնալ և ասաց նրանց.

— Ո՛չ, ինձ էլ, ինձ էլ ծովը ձգեցէք,  
Այնտեղից մօտ է Սանտարամետը,  
Մահացու կեանքից ինձ ազատեցէք,  
Թող ինձ ընդունի Սատանապետը:

Լրացաւ արդէն մի հազար տարին,  
Որ ես գործիք եմ մեծ Բէլիարի,  
Միշտ չար գործեցի, չիմացայ բարին,  
Թող այժըմ նըրա կամքը կատարի:

Դեռ պառաւն իր խօսքը չէր աւաբտել, որ թա-  
գաւորի մեծ վէզիրն ու սպարապետը եկան և խոր  
զլուխ տալով թագաւորին՝ ասացին.

— Տէր արքայ, բոլոր զօրքը պատրաստ է, քո  
մեծութեան հրամանին ենք սպասում:

— Ինչու համար էք պատրաստել զօրքը, հարց-  
րեց թագաւորը զարմանալով:

— Մենք կատարեցինք քո հրամանը. թշնամու  
զօրքը մօտենում է, պէտք է նրա առաջն առնել:

— Սպասեցէք, սպասեցէք... այն, այն, ես հիմա  
յիշում եմ... այդ մեզանից ուղիղ քառասուն տարի  
առաջ էք, ինչ որ ասում էք. մեր բարանալու օրն  
էք... թշնամու զօրքերը եկան և մեզ բարացած զըտ-  
նելով սարսափած փախան...

Վէզիրն ու սպարապետը իրար երեսի նայեցին  
և շշնչացին միմեանց. «Թագաւորը խելագարւել է...»  
Այն, այն, զարմանալի փոփոխութիւն. երէկ չէք, որ  
մօտն էինք, մէկ օրւայ մէջ ծերացել է...»

— Տեսնում էք զուր այս պառաւին, ասաց թա-  
գաւորը. սա է մեր քաղաքի քարացնողը: Քառասուն  
տարի շարունակ սա մեր քաղաքը քարացած պահեց...

Վէզիրն ու սպարապետը թագաւորին զլուխ տա-  
լով՝ համաձայնութիւն ցոյց տւին, որ իրը թէ հաւա-  
տում են նրա ասածին, բայց իրար հետ շընչալով՝  
«հաստատ խելագարւած է սա», ասացին:

— Եթէ սա չըլինէք, շարունակեց թագաւորը՝  
ցոյց տալով Արէզին, — Եթէ սա չըլինէք, մենք յաւի-  
տեան բարացած կըմնայինք: Սա, որ մի հրաշքով  
աղջկանից տղայ էր դառել, և աղաւնի դարձող աղ-  
ջկանից անմահական ջուր էր ձեռք բերել, պատահ-  
մամբ ասեմ, թէ երկնքի տնօրէնութիւնով, եկաւ և  
ինձ կենդանութիւն տւաւ իր ջրով: Այս չար պառա-  
ւին էլ բռնեց ու զինաթափ արաւ: Այժմ այս պա-  
ռաւին ձեզ եմ յանձնում. տարէք սրան ծովը ձգեցէք. ահա այս գաւազաններն ես ծովը ձգեցէք...

Վէզիրն ու սպարապետը դարձեալ սկսեցին շը-  
նչալ, դէպի մի կողմ քաշւելով:

— Հաստատ, հաստատ խելագարւել է, պնդեց  
վէզիրը:

— Դրան ինչ կասկած, կըկնեց սպարապետը: «Սա,  
մօտն է, աղջիկ է եղել, տղայ է դարձել, մի աղջիկ  
էլ աղաւնի է դառել, ինքն էլ անմահական ջուր է  
խմել, իսկ մենք՝ որպէս թէ՝ բառասուն տարի է, որ

քարացած ենք եղել...—Խելքը զլիսին մարդը միթէ  
այսպիսի բաներ կըխօսի:

Այս մարդոց կասկածը շատ բնական էր. Վէղիբը  
քարանալուց առաջ ճաշի էր նստած և գդալը ձեռին՝  
բերանը տանելիս՝ քարացել էր, իսկ այսօր գդալը  
տարել էր բերանը և իր ճաշը վերջացրել, եկել. Սպա-  
րապետը ոտքի մէկը ձիու ասպանդակում դրած հեծ-  
նել ուզելիս էր քարացել, և այսօր էր ոտը միւս  
կողմն անցկացրել և հեծել ձին ու եկել. Էլ ուրեմն  
ինչպէս կարող էին երևակայել, որ երբ և իցէ քա-  
րացած են եղել:

Գիտես ինչ կայ, թագաւոր, ասաց Արէգը  
ծածուկ: Այս մարդիկը քո խօսքերին չեն հաւատում  
և քեզ խելազար են համարում: Եյս շատ վտանգա-  
ւոր բան է. կարող են քեզ ճշմարիտ խելազար հա-  
մարել և թագաւորութիւնից զրկել: Հիմա դու սպա-  
սիր, տես ես ինչ եմ անում և ինձ հետեւիր: Յետոյ  
դառնալով վէղիբին ու սպարապետին՝ ասաց.

Եկէք, պարոններ, եկէք,  
Մի կասկածէք բնաւին,  
Տեսէք՝ ինչպէս եմ պատժում  
Եյս անըզգամ պառաւին:

Այս ասելուց յետոյ կախարդական գաւազաննե-  
րից մէկը ձեռին՝ մօտեցաւ պառաւին և տասց.

Հրամանով  
Քէլիարի,  
Ուրիէլի,  
Սպայէլի,  
Քար դառ, պառաւ, քար...

Ասեց ու զարկեց գաւազանը: Պառաւը դարձաւ  
մի քած էշ և սկսեց խառանչել:

—ԵՇ քեզ բա՛ն, բացականչեց Արէգը, երկի այս  
գաւազաններից ամեն մէկը մի ջոկ զօրութիւն ունի,  
կամ զուցէ իմ անէծքս էր իշավարի և պառաւն իր  
խառանչիւնով ծիծաղում է ինձ վրայ: Փորձենք երկ-  
րորդ գաւազանը:

Սպայէլի ահեղ սրով,  
Տարտարոսի մեծ զնդանով  
Քեզ զարկում եմ, անիծում եմ,  
Քար դառ, պառաւ, քար...

Պառաւը դարձաւ մի սկ ագուաւ և ուզեց թռչիլ,  
բայց ոտները կապած էին, չըկարողացաւ:

—Սպասեցէք, երրորդ գաւազանը փորձենք:  
Առաւ երրորդ գաւազանը և սկսեց աւելի թունդ  
անիծել, կարծելով որ իր անէծքի թուլութիւնիցն է,  
որ պառաւը քար չի դառնում.

Քարեկարկուտ,  
Արիւնանձրեւ,  
Մէզ, մառախուղ,  
Թանձը մոայլ,  
Խիտ աղջամնւղ,  
Թունդ երկրաշարժ,  
Մահատարաժամ,  
Որժտ, կայծակ,  
Հըլեհ, կրակ,  
Նաւթահեղեղ  
Դժոխային  
Թափւի զլիսիդ,

Ո՞վ սև ազուաւ,  
Դահիճ պառաւ...  
Քեզ զարկում եմ  
Չար մահակով, մնան ընդհանուրա  
Դագանակով, ող նման նոյ խոր նայ  
Որոտմունքի  
Թունդ մտրակով,  
Կայծակների  
Ահեղ զարկով,  
Անէծքս առ,  
Դարձիր լեռ քար...

Սսեց ու զարկեց գաւազանը և պառաւը զար-  
ձաւ մի դաժանատեսիլ քարէ արձան։ Յետոյ դառ-  
նալով վէզիբին ու սպարապետին, ասաց Արէզը.

Հիմա ամսոն է, բայց դուք չըգիտէք,  
Այս շող կրակին մուշտակ էք հագել.  
Չմեռն է եղել, երբ քարացել էք.  
Էնդուք էք հիմա այդ ձեռվ եկել։  
Մարդ ուղարկեցէք մի ուրիշ քաղաք,  
Որ գնայ բերէ ձեր տարեթիւք,  
Նրանով կիմանաք ձեր գլխի անցրը,  
Կուղղէք ձեր այժմեան սխալ հաշիւը։  
Եթէ ոչ ես ձեզ էշեր կըշինեմ,  
Կամ սև ազուաներ, երթար կոկոար,  
Որ այնուհետեւ ձեր թագաւորը  
Ինչ որ ձեզ ասէ՝ իսկոյն հաւատաք...

— 0 ... ես հիմա հաւատում եմ, հաւատում, ա-  
սաց վէզիբը, այս բոլորն աշքովս տեսնելուց յետոյ՝  
Ել չեմ կարող չըհաւատալ... Ճշմարիտ որ ձմեռն է ե-

ղել, իսկ հիմա... ամսոն է... այս, ամսոն է...  
— ես էլ եմ հաւատում, ես էլ... ես չեմ ուղում  
ոչ էշ և ոչ ազուաւ դառնալ, իսկ քարանալու ախոր-  
ժակ բնաւ չունիմ... իրաւ, ինչ շոգ է այսօր, քիչ է  
մնում, որ այրւիմ...

— Տէր արքայ, ճաշը պատրաստ է, թագուհին  
ձեզ է սպասում, ասաց մի պալատական, խոր գլուխ  
տալով թագաւորին։

— Երթանք, երթանք, մի կտոր հաց ուտենք, ա-  
սաց թագաւորը։ Ահա քառասուն տարի է, որ պատառ  
չեմ դրել բերանս, բայց ուղիղն ասեմ, չեմ էլ քաղ-  
ցել։ Միայն ծարաւ շատ էր տանջում ինձ երեմն,  
և աւելի ևս սաստկացաւ, երբ լսեցի Արէզի ձայնը։  
Երեկի իմ ծարաւիլն էլ երկնքի կամքովն էր, նրանով  
պիտի գանէի իմ փրկութիւնը... Երթանք, երթանք  
մի կտոր հաց ուտենք...

Անդաս թագաւորը լաւ կշտացրեց թէ Արէզին և  
թէ նրա հազիկին։ Թագաւորն Արէզին պահեց մինչեւ  
քսան օր. այդ քսան օրւան մէջ շատ թագաւորներից  
դեսպաններ եկան և շնորհաւորեցին Անդասի և նրա  
քաղաքի վերակենդանութիւնը։ Նոյն քաղաքից հա-  
զարաւոր մարդիկ կային հեռաւոր երկիրներ գնացած,  
որոնք իրանց քաղաքին պատահած պատուհասից վա-  
խենալով՝ չին վերադառնում։ այժմ եկան աւելի  
քազմացած թւով՝ որդոց ու թոռանց տէրեր դար-  
ձած, մինչդեռ քաղաքի աճելութիւնը քարանալու  
պատճառով զաղաքել էր։

Նորեկներն իմանալով՝ որ Արէզն է այն քարի  
հրեշտակը, որ յաղթել է չարին և կեանք տարածել

շարի մահ սփռած տեղը՝ նրան աստւածավայել պատիւներ տըւին ճոխ խնջոյքներով։ Թագաւորն ինքը մի մեծ խնջոյք տւաւ, ուր ներկայ էին հազարաւոր անձինք։ Ինքն էր բոլոր զւարճութիւններին ընթացք տւողը, ինքն էր առաջարկում կենաց թասերը։ Երբ Արէգի կենաց բաժակը ձեռքն առաւ, սկսեց խօսիլ թագաւորը և ասաց.

— Ի՞նչ էինք երեկ, և ինչ ենք այսօր,  
Դու պատասխանիր, Անդաս թագաւոր.  
— Քար էինք երեկ, քա՛ր անշունչ, կանգուն,  
Խոկ այսօր՝ մարդիկ, կինդանի, շարժուն...  
Ի՞նչ հեշտ պատասխան... բայց ով կըմբոնէ,  
Ո՞վ կըզգայ, թէ ինչ սոսկալի բան է—  
Ճարունակ տանջիլ քա՛-ոա՛-սուն տարի,  
Փշալից ձեռքում մի անգութ չարի...  
Եւ ահա այդ խիստ, չա՛ր կապանքներից,  
Անխորտակելի այդ շղթաներից  
Մեզ ազատում է մի չքնաղ ողի,  
Ամեն տեղ սփռում և կեանք, և հոգի...  
Ո՞վ է այդ Քաջը, այդ առաքինին.  
— Ահաւասիկ նա—Արէգ պատանին.  
Սա է, որ սրբեց իմ սուզն ու լացը.  
Խմենք Արէգի անգին կենացը...

Թագաւորի այս առաջարկութեան վրայ հազարաւոր ձայներ միասին «կեցցէ Արէգ» գոչելով՝ թընդացըրին ամբողջ ապարանքը։ Աշըներն էլ՝ որ թագաւորի ակնարկելուն էին սպասում, խմբովին հնչեցին յիսնաղի քնարները և երգեցին միաձայն։

Արի, բիւլբիւլ, ուրախացիր,  
Քո վարդն ահա բացւել է,  
Վերադարձիր, էլ մի վախիր,  
Քո թագուհին բացւել է։

Արէգն իջաւ երկնքիցը,  
Ամենայն տեղ կեանք սփռեց,  
Քարերն ամեն հոգի առան,  
Քո կարմիր վարդն էլ բացւեց։

Արի, բիւլբիւլ, ուրախացիր,  
Քո վարդուհին բացւել է.  
Արի, երդիր, էլ մի վախիր,  
Քո թագուհին բացւել է։

Արէգը մէկ Արեգակ է,  
Քաջ պատանու կերպ առած.  
Սա բարի է, առաքինի,  
Արեկ պէս ողորմած։

Արի, բիւլբիւլ, ուրախացիր,  
Քո վարդուհին բացւել է.  
Արի երդիր, էլ մի վախիր,  
Քո թագուհին բացւել է...

Աշըները գեռ երկար կըշարունակէին Արէգին  
գովասանել, եթէ Արէգը՝ համեստութիւնից ստիպւած՝  
ընդհատէր նրանց իր հետեւալ պատասխանող ճառով.

— Ես մի թոյլ էակ, չնչին արարած,  
Հրդիտեմ արդեօք ինչ ունիմ արած,

Յը ինձ տալիս էք այսքան փառք, պատիւ,  
Այսքան գովասամնք, մաղթանք անհաշիւ.  
Ի՞նչ գտաւ արդեօք Երկինքն ինձանում,  
Ես այդ չըդիտեմ և չեմ իմանում,  
Որ ցոյց է տալիս այսշափ սէք և զութ,  
Հարթում է առջևս ամեն խոչ ու խութ.—  
Առիւծն իմ առջև քծնում է շան պէս,  
Վիշապը դառնում մի վախկոտ մողէս,  
Աղբիւը է բղիսում ապառաժ տեղում,  
Դարաւոր ճահիճն առաջիս ցամքում...  
Եթէ բոլորը, ինչ որ տեսել եմ,  
Այժմ մի առ մի ձեր առջև պատմեմ,  
Կըտեսնէք որ սա մի բախտ է միայն  
Եւ շնորհք Երկնքի միջամտութեան...  
Ուստի մենք Նըրան և միայն Նըրան  
Պիտի համարենք պաշտելու արժան,  
Նա վերացրեց շարի զօրութիւն,  
Նըրան պիտի տանք փառք և զոհութիւն...

Հընայած Արէզի համեստութեանը՝ քաղաքացիք  
Նըրան դիւցազանց կարգը ձդեցին, որ Երախտապարտ  
շրման Երկնքի առջև: Եւ ահա ինչպէս: Տեսան որ պա-  
ռաւի սոսկալի արձանից վախենում են բոլոր Երեխա-  
ները և շատ մեծեր էլ, Նըրան տարան ծովը նետեցին:  
Նա ընկաւ ուղղակի դժոխքի վրայ և իր ուժգին զար-  
կովն ամբողջ դժոխքը իր միջի շար ոգիների անթիւ  
լեզուններով մի հազար մղոն էլ ցած զլորեց... Դը-  
քանից յետոյ հաւաքւեցան քաղաքի բոլոր ճարտա-  
րապետներն ու նկարիչները, քաշեցին Արէզի պատ-

կերը, Բազիկի վրայ հեծած. Նըրա ձեռվ ձուլեցին մի  
ուկեծոյլ արձան: Այդ արձանը կանզնեցրին քաղաքի  
կենտրոնում եղած մեծ պարտէզումը, որ զբօսավայը  
էք ամենի համար, մանաւանդ երեխայոց, որոնք այ-  
նուհետև միշտ նըրա չորս կողմումն էին խաղում և  
վրան նայելով, զմայլում: Արէզը շրտեսաւ իր արձա-  
նը. Նա այդ ժամանակ արդէն գնացած էք: Նա երա-  
զումը տեսաւ, որ նունուֆարը վերջին շնչումն է,  
շտապեց վերադառնալ, որ դուցէ կարողանայ օդնու-  
թիւն հասցնել:

5.

Նունուֆարը վերջին շնչումն է:  
Էլ ոչ ծաղրածուի կատակները, ոչ վէզիրի կնոջ  
հոգատարութիւնը, ոչ հօր աղաչանըն ու հառաչան-  
քը չեն ազգում նըրա վրայ:  
Լեզու չունի, որ խօսի, ուժ չունի, որ ձեռքը  
շարժէ:

Եկնապիշ նայում է դէպի վեր, կարծես Երկըն-  
քիցը լինի սպասում իր փրկութիւնը, կամ ուզում  
լինի շուտով թռչիլ դէպի Երկինը:

Թագաւորը և բոլոր պալատականները ձեռները  
խաչ արած, վիզները ծուած՝ նայում էին նունուֆա-  
րի երեսին և ախ ու ոհ քաշելով, խոստովանում ի-  
րանց անզօրութիւնը Ամենակարողի կամքի առջև:

Այս աղէկտուր բոպէին մէկ էլ լսեց որ Արէզը  
եկել է:

Նունուֆարի աղախինն ամենից շուտ վաղեց Ա-  
րէզի մօտ և շտապեցրեց նըրան, ասելով՝

— զուտ արա, «եկ տես», վերջին շնչումն է, աչքը քեզ է մնում...

— Ահա դալիս եմ, պատասխանեց Արէգը. հիմա «կըդամ և կըտեսնեմ» ըստ նունուֆարին...

Լուռ հանդիսականների միջով լուռ ու մուսչ անցաւ Արէգը, մօտեցաւ նունուֆարի մահճին, հանեց Անմահական ջրի շիշը, մի կաթիլ կաթեցրեց բամբակի վրա և քսեց նունուֆարի մեռելատիպ շրթունքներին:

Նունուֆարի աշքերը պարզեցան:

Արէգն այդ նկատեց և մի քանի կաթիլ կաթեցրեց ուղղակի բերանի մէջ:

Նունուֆարը երկու ձեռքով ծածկեց երեսը...

Նա տեսաւ Արէգին և... ճանաչեց...

Նա մի նոր կեանք զգաց կեանք՝ աշխուժով լի, երևակայութեամբ ճոխացած...

Զեռներով ծածկեց երեսը, որ երևակայութիւնն ամփոփէ: Ամփոփէ երևակայութիւնը, որ այդ բոսէի երկնային գւարճութիւնն ու զմայլմունքը լի-ու-լի վայելէ:

«Արէգը եկել է», ասում է նա ինքն իրան, երեսը ծածկած երկու ձեռքով, իբրև երկու վահանով, որ ուրիշ տպաւը ութիւնների տեղի չըտան: «Արէգը եկել է», կրկնում է նունուֆարը, և ես առողջ եմ, բոլորվին առողջ, շատ առողջ: Ես զգում եմ, զգում եմ, որ շատ առողջ եմ, և... Արէգն էլ եկել է... ես զգում եմ նրա ներկայութեան անմահական հոտը: Անմահական էր նրա տւած դեղը: Հինգ ինքն էլ մի անմահ Ռդի է: Ի՞նչպէս մեծացել է, ինչպէս առոյգացել, ինչ նորածիլ բեխեր ունի, ի՞նչ գանդուր մօրուք... Բայ անեմ երեսս, մէկ էլ նայեմ»...

Նունուֆարը բաց արաւ երեսը և նայեց Արէգի երեսին այնպիսի հայեացքով, որ միայն մօր հայեացքն է լինում իր երեխին «հաղա» կամ «ճիտա» ասելիս... և կրկին փակեց երեսը:

Այդ հայեացքը, որի մէջ ամփոփւած էր կենդանութեան հրափայլ ոգին, ամենքը տեսան, և ամենքն էլ, կարծես, խօսք-մէկ արած, միաձայն քրքիջ բարձրացրին՝ փառ-փառ ծիծաղելով: Այդ ծիծաղից անմասն չըմնաց և ինքը նունուֆարը: Նա էլ ծիծաղեց, կարծես ուրիշների տեղիք տալուն էր սպասում, որ մի կուշտ ծիծաղի:

Այս էլ որ տեսան մի վայրկեան առաջ սպաւոր հանդիսականները, բոլորովին միամտւեցան, էլ ուշադրութիւն չըդարձրին նունուֆարի վրայ, և սկսեցին փոխ առ փոխ գգւել ու համբուրել Արէգին: Թագաւորն իր գիրկն առաւ Արէգին և սկսեց երեխայի նման հեկեկալ: Թագաւորի ուրախութեան զգացումը անսահման էր: Նա մի վայրկեանում երկու որդի էր գտել՝ մինը կորած տեղից, միւսը մեռած տեղից: Ամենքի աշքերից ուրախութեան և զմայլմունքի արտասուր հոսեց:

Հանդիսականների այս տեսակ իրարանցումից օգուտ քաղելով՝ նունուֆարը ծտի պէս վեր թռաւ տեղիցը, փախաւ մտաւ մի այլ սենեակ, այնտեղ շուտով հաղնւեց, զուգւեց թագուհու վայել զարդարանքներով և դուրս եկաւ հանդիսականների մէջ այնպէս ուրախ ու զւարթ և այնպէս առողջ, որ հիացան ամենքը, բայց մանաւանդ Արէգը, որի համար մի բոլորվին նոր արև ծագեց:

Եթէ Արէգը մի վայրկեանում վերակենդանացրեց

Նունուֆարին, հիմա էլ նունուֆարը՝ իր գեղեցկութեան ազդեցութեամբ Արէգի այնպիսի երակները շարժեց, որոնց միջով կարծես մինչև նոյն բոպէն դեռ արիւն չէր խաղացած։ Արէգը մի նոր կեանք զգաց իր մէջ, մի նոր զգացմունք անսահման հաճոյական, բայց ինքն իրան հաշիւ տալ չըկարողանալով և միւնոյն ժամանակ այդ իրան համար տարօրինակ զգացմունքը զսպել ուզենալով՝ սկսեց խօսիլ խելքը թռցըրածի պէս։

— Հիմա եմ զգում, որ ես՝ էլ ես չեմ...  
Բայց թէ ես ով եմ, — այդ էլ չըդիտեմ.  
Ինձ յափշտակեց աղջկ Աղաւնին,  
Եւ տեղըս դրաւ այժմեան Արէգին.  
Անիրաւ աղջկն իմ ուշքս տարաւ,  
Արեգնազանիս լճի մէջ առաւ,  
Իր քաղցը երգով ինձ քնացընց  
Եւ իմ տեղըս նա մի ուրիշ զրեց...  
...

Հանդիսականները բերանաբաց նայում էին և ոչ  
մի բան չէին հասկանում Արէգի ասածներից։  
— Ափսոս տղայ, երսի խելքը կորցրեց, ասում  
էին շատերը  
Վերջը նունուֆարը մօտեցաւ Արէգին և խղճա-  
լի կերպով ասաց.

— Արէգ, իմ հոգեակ, ի՞նչ է այդ, ի՞նչ կայ,  
Գուցէ իմ տեսքով քեզ գիւր չի եկայ,  
Դու հանգիստ եղիր. ես կերթամ, կերթամ,  
Որ ինձ շըտեսնես էլ ոչ մի անդամ...  
...

Ես սիրում եմ քեզ, դիտէ երկինքը,  
Բայց այդ չի ուզում գուցէ նա ինքը,  
Որ չի թոյլ տալիս քեզ ինձ ճանաչել,  
Եւ ինչպէս որ կամ, ինձ այնպէս տեսնել.  
Երթամ ուրեմն իմ սև օրըս լամ,  
Քանի որ էլ քեզ պիտի չերեամ...

— Ո՞ւր, ո՞ւր, սպասիր, ես քեզ չեմ թողնիլ,  
Առանց քեզ մի օր՝ էլ ես չեմ ապրիլ.  
Թող երկինք դետինք իրար խառնըւին,  
Դու կըպատկանիս միայն Արէգին.  
Թող ամբողջ աշխարհ տակն ու վրայ ըմի,  
Էլ քեզ ինձանից ոչ ոք չի խըլի։

Արարած աշխարհ ես պըտրտեցայ,  
Գեղեցիկ, սիրուն, շատերին տեսայ,  
Բայց քեզ պէս չընալ, անհատ, աննման,  
Քեզ է ստեղծել երկինքը միայն։

Դու իմն ես, իմն ես, սիրուն նունուֆար,  
Իմ բոլոր կեանքս կըտամ քեզ համար,  
Ինչ սիրտըդ ուզի, ինչ որ կամենաս,  
Հրամայիր ինձ, իսկոյն կըստանաս։

Իմ ասածներըս զու չըհասկացար,  
Էնդուր ես կարծում, թէ ինձ դիւր չեկար,  
Ես այն չեմ, այն չեմ, ում որ տեսել ես,  
Նա գնա՛ց, կորա՛ւ երեսութի պէս։

Ես էլ եմ Արէգ, բայց ոչ առաջին,  
Նրան զողացաւ աղջկ աղաւնին...  
...

— Եթէ այդպէս է, ինձնից հեռացիր,  
Դու ինձ կեանք տըւիր, վարձդ ստացիր:  
— Ե՞ս չեմ կեանք տւել, ինչ վարձ կամ ինչ զին.  
Դու ինքդ ես իմ կեանքն, իմ սիրտն, իմ հոգին:  
— Էլ ես կեանք չունիմ և պիտի մեռնիմ,  
Երբ չըկայ Արէզ, էլ ինչու ապրիմ...  
— Իզուր մի մեռնիլ, ես էլ եմ Արէզ...  
Միթէ ես չունիմ նրա չափ արժէր...  
— Բայց դու ուրիշ ես, ինքըդ ես ասում...  
— Այդ ես ինքս էլ լաւ չեմ հասկանում...

— Սպասեցէք, սպասեցէք, ես վերջ կըտամ ձեր  
վէճին, ասաց թագաւորը: Արէզ, ասա ինձ, հոգիս  
դու ում որդին ես:  
— Արման իշխանի որդին էի մի ժամանակ, բայց  
հիմա չըկիտեմ՝ էլի նրա որդին եմ, թէ մի ուրիշի:  
— Քո այդ պատասխանն է ահա, որ մենք չենք  
հասկանում, բայց քեզ լաւ ենք ճանաչում: Դու մեր  
Արէզն ես, միևնոյն գեղեցիկ Արէզը, միայն մօրուքդ  
է աւելացել ու բեխերդ...

— Սպասիր, սպասիր, ինսամի թագաւոր, մէջ ըն-  
կաւ ծաղրածուն: Աչքդ լոյս, փեսագ եկել է, բայց  
ուրախութիւնից ինքն իրան կորցրել է, հիմա ման է  
գալիս՝ չի գտնում: Արէզ եղայր, եկ՝ ես ու դու մի  
սպայման անենք. ես դառնամ «դու», իսկ դու դառ  
«ես». այնուհետեւ նունուֆարը կըդառնայ «իմ» իսկ  
ոչինչը՝ «քեզ», համաձայն ես, ասաց ծաղրածուն և  
սկսեց երգել.

Ախ, ես յիմար եմ անչափ,  
Բայց ոչ այս տղայի չափ.  
Ես սըրա տեղ կամաչեմ,  
Եթէ ասեմ՝ «ես՝ ես չեմ»...  
Եարալլալի, շարալլալի,  
Հայդէ յիմար, պար արի...

Մինչզեռ ծաղրածուն երգով ու պարով զըւար-  
ճացնում էր հանդիսականներին ներս մտաւ Արմանը:

Արէզն, իր հօրը տսմնելուն պէս, վագեց, գիրկն  
ընկաւ և մի քանի ուրախութիւն բացականչութիւ-  
նից յետոյ՝ վափսաց ականջումը.

— Գիտես, հայրիկ, ես հիմա տղայ եմ, տղայ, իսկ  
և իսկ տղայ, ճշմարիտ տղայ, կարող ես երեակայել...

— Ի հարկէ, տղայ ես, հոգիս, հապա ինչ պէտք  
է լինէիր...

— Բայց չէ որ, հայրիկ, բայց չէ որ... ախըր...

— Դու առաջ էլ տղայ էիր, հոգիս, բայց այդ  
չըգիտէիր զու. նոր ես սկսել ճանաչել քեզ. առաջ  
անմեղ էիր ինչպէս հրեղէն, հիմա մարդ ես դառել  
հոգեղէն, բայց այդ վնաս չունի, հոգիս...

— Օ՛... եթէ այդպէս է, ուրեմն ես՝ ես եմ եղել,  
վաղեմ, նունուֆարին ասեմ...

Արմանը մօտեցաւ թագաւորին և սկսեց շշնչալ  
նրա ականջին բանի էութիւնը, իսկ Արէզը վագեց  
նունուֆարի մօտ:

Երբոր Արէզը նորից մօտեցաւ նունուֆարին ա-  
մելի ուրախ և զըւարթ դէմքով, նունուֆարը բոնեց  
Արէզի ձեռքից մի այնպիսի քնքուշ ժպիտով, որ Ա-  
րէզը քիչ մնաց նորից թոցնէր իւելը:

— Դու մեր Արէգն ես, այնպէս չէ, ասաց Նունուֆարը:

— Ի հարկէ, հոգիս, հապա ով պէտք է լինիմ, պատասխանեց Արէգը:

— Ուրեմն մենք էլ չենք բաժանւիլ միմեանցից ։ Եթէ գիտենաս, ինչքան մաշւել եմ քո կարօտով... Հիմա եկել ես, և յանկարծ ատում ես՝ «Ես՝ ես չեմ, հապա ով ես, որ դու չես»։

— Ո՞չ, ո՞չ, հիմա ես՝ ես եմ. յիմարն ինձանից ինելօք է... Արի չոքենք թաղաւորի առջե, և նա օրհնէ մնզ... Բայց, սպասիր, հայրիկիս շըհարցրի, թէ ուր են իմ քոյրերը։

— Նրանք այստեղ են: Քո գնալուց յետոյ ես ձերոնց բերել տրւի, որ քո կարօտը նրանցից առնեմ։ Ես արդէն ուղարկեցի իմաց տալու, հիմա կրգան ուր որ է...

— Ինչքա՞ն բախտաւոր եմ ես ուրեմն, որ այդքան բարի ես եղել դու... Ուրեմն դեռ չըշտապենք. զնանիք մեր հագուստը փոխենք. հիմա միտս ընկաւ. Անդաս թաղաւորից ես քեզ համար էլ, ինձ համար էլ հարսանեկան հագուստ եմ բերել։ Նա ընծայեց այդ հագուստները և իննդրեց, որ անպատճառ այդ ունենանք հազներիս մեր հարսանիքին, որին, իր ասելով, ինքը հոգուով ներկայ կըլինի։ Ես չէի ընդունում, որովհետև այս բոպէի քաղցրութիւնն այն ժամանակը երեսակայել չէի կարող։ Զատ բաներ եմ տեսել, յետոյ կըպատճեմ քեզ։ Չեմ տեսել միայն քեզ պէս մի չքնաղ էակ... Ինչքան գեղեցիկ ես դու, նունիկ...

Այսպէս խօսելով, ձեռք-ձեռքի տրւած, դուրս ե-

կան Արէգն ու Նունուֆարը, բայց երկար սպասեցնել չըտւին։

Մի բանի բոպէից յետոյ տեսարանը մի կախարդական ասեմ թէ երկնային կերպարանը ստացաւ։

Պալատի ընդարձակ դահլիճը լցւեցան թէ տղամարդիկ և թէ կանայք, զբար հագուստներով դարդարւած։ Այստեղ էին և Արէգի քոյրերը։

Երբոր Արէգն ու Նունուֆարը ներս մտան Անդասի ընծայած հագուստովը զարդարւած, անթիւ անդին բարերի ճառագայթները, ծիրանի ծովից ծագող արեգակի պէս, զոյնզոյն լուսով լուսաւորեցին ամբողջ դահլիճը։ 2ոգեցին թաղաւորի առջե, որ օրհնէ իրանց։

Թաղաւորը մի քանի բոպէ շըկարաց խօսիլ, հազիւ էր կարողանում բռնել ուրախութեան արտասուրը։ Վերջապէս սկսեց օրհնել մեր նոր նշանւածներին, ասելով.

— Ո՞վ երկինք,  
Ես մի հոգեղին,  
Մի թոյլ արարած,  
Որ չարն ու բարին  
Գեռ լաւ չըգիտէ,  
Իմ սրտին նայիր,  
Եւ ոչ իմ լեզւին,  
Եւ քո իսկ ձեռքով  
Ինչ որ բարի է,  
Դու այն տուր սըանց։

Ի՞նչ ունիս բարի  
Քո ծոցում պահած,

ՈՌ մինչև այսօր  
 ՈՉ մի հողեղէն  
 Դեռ չի ստացած,  
 Դու այն տուր սրանց:  
 Դու մինչ այսօր էլ  
 Չատ բան ես տըւել—  
 Արե վառվուն,  
 Աստղեր շողշողուն,  
 Այեր քաղցրաշունչ,  
 Զեփիւռ անշըշունչ,  
 Անձրև յորդառատ,  
 Յօդ մարդարտահատ,  
 Աղբիւրք զովարար,  
 Վտակներ վարար,  
 Գոյն-գոյն ծաղիկներ,  
 Ծառեր մրգաբեր,  
 Անտառներ մարմանդ,  
 Դաշտեր արգաւանդ,  
 Լեռներ հովասուն,  
 Գետեր գալարուն,  
 Լճակներ վճիտ,  
 Սար, ձոր և հովիտ.  
 Այս ամեն բարիք,  
 Ո՞վ պայծառ երկինք,  
 Թոյլ տուր վայելեն,  
 Քեզ փառաբանեն...

Թագաւորն իր օրհնութիւնն աւարտած չաւարտած, մի նոր լուսով լուսաւորեց դահլիճը: Մի ծիա-

ծան կապւեց, ծիածան անտես, աննման, հըաշալի այնքան, որ ամպերում կապւող աղեղը նրա մօտ մի մոայլ ամպ կարելի էր համարել... Ի՞նչ լեզու կարող է պատմել, ի՞նչ գրիչ կարող է գրել, կամ ի՞նչ վըրձին կարող է նկարել...

Ամենըն էլ նրան էին նայում և տեսնում, թէ ինչպէս էին կազմում նրա գոյները հետզհետէ. կարծես աներեսոյթ ողիք՝ արագ-արագ վագելով՝ երկնային մատներով մի նոր ծիածան լինէին հինում, և երկնքումը լինին կապելիս Արէգի ու նունուֆարի հարսանեկան Կանաչ-Կարմիրը: Յիրաւի, այդ Կանաչ-Կարմիրը թւում էր, թէ դահլիճի առաստաղից շատ և շատ բարձր է և շատ հեռու:

Եւ ահա, երբ ծիածանն ամբողջապէս պատրաստ էր, նրա վրայով, իրեն մի լուսեղէն սանդուխքով, ցած իջան մի խումբ երկնային թագուհիք՝ աստղերի ճառագայթներից ու ձիւնափայլ ամպերից գործած հազուստով մի-մի արեգակ... Բայց ի՞նչ արեգակ... Եթէ ցերեկ լինէր՝ և արեգակը նրանց տեսնէր, ամպեղէն մի քող կըքաշէր երեսին, որ իր տեղը տար նրանց լոյսին:

Բոլոր երկնային օրիորդները, որոնք թւով մինչև իննը հողի էին, երկ-երկու պսակաձև վիճեր ունէին ձեռներին, որը ցողից բաղած, որը ծաղիկների գոյնից ու հօտից վիճած, որը վճիտ աղբիւրների բիւրեղացած գոհարներից հաւաքած, որը քաղցրաշունչ զեփիւռից ու զովարար հովերից հիւսած, որն արևի շամանդաղի մէջ եղած գոյնզգոյն հիւէներից կաղմած... մի խօսքով լուսեղէն մատներով բնութեան բոլոր զարդերի բուն ողի էին քաղել ու փնջել: Այդ փընչերից անմահական բուրմունքով լցւեց բոլոր դահլիճը:

Ամենից առաջ մօտեցան Աղբիւրիկը, Յօղիկը և  
ծաղկիկը և իրանց պսակները տալով Արէգին ու  
նույնութարին՝ ասացին.

ԱՂԲԻՆՐԻԿ

Ես կարկաչունն եմ Աղբիւրիկ,  
Եկել եմ ձեզ աշքալուսիկ,  
Բերել եմ ձեզ բիւրեղահիւս  
Ականակիտ, վճիտ վնջիկ:

ՅՕՂԻԿ

Ես գոհարիկն եմ բոյսերի,  
Ես մարզրիտն եմ հովիտների,  
Ահա իմ փունջ ցողից քաղած  
Հաղարաւոր կանաչների:

ԺԱՂԻԿԻ

Ես ծաղկիկն եմ մշտադալը,  
Ես անթառամն եմ բեղմնարար,  
Բոլոր ծաղկանց գոյնն ու հոտը  
Ահա բերել եմ ձեզ համար...

Այսպէս մօտեցան և միւսները և մի-մի բան տ-  
սելով՝ իրանց պսակները նըլիրեցին Արէգին ու նու-  
յնութարին...

Այս տեսարանը մի տխրութիւն և թմրութիւն  
քերաւ հանդիսականների վրայ։ Զատերը բոլորովին  
վերացան ապշութիւնից։ Ամենից շատ տխրեցան աղ-  
ջըկէրը։ Նրանց գեղեցկութիւնն աղօտացաւ, թխացաւ  
ու մգացաւ հրեղէնների գեղեցկութեան մօտ։ Երիտա-  
սսրդները գարձան մի տեսակ ապուշ վայրենիք,  
նրանց վստահութիւնը բոլորովին անհետացաւ...

Միայն Արէգն էր ուրախ, միայն նա էր աղատ  
այդ ընդհանուր ապշութիւնից։ Այս հոգեկան թմրու-  
թիւնից հանդիսականներին սթափելու համար՝ Արէ-  
գը դարձաւ լուսեղին հիւրեցին և ասաց.

— Ո՛վ երկնային թագուհիք, գուք ձեր շնորհա-  
րեր այցելութիւնովն ինձ չափազանց ուրախացրիք։  
Բայց նայեցէք, այս ինչ ապշութիւն է, այս ինչ տըլս-  
րութիւն, որի մէջ ընկղմւել են ամեններ։ Մի գարմա-  
նաք։ Այսպէս ենք մենք տկար հոգեղէններս։ ինչ որ  
չափազանց բարի է, չափազանց գեղեցիկ, նոյնը վա-  
յելելու կարողութիւնը չունինք մենք մահկանացու-  
ներս։ Ճշմարիտ բարու և գեղեցիկ ճաշակից գուրք  
արարածներ ենք մենք։ Ներշնչեցէք մեր սրտերի մէջ  
վսեմ զգացմունք և բարձրագոյն կարողութիւն, որ  
ձեր երկնային շնորհաբերութիւնը լիապէս վայելել  
կարողանանք։ Խնդրում եմ՝ ուրախանաք, խնդաք և  
զըւարձանաք իմ հարսանեաց հանդիսին և ուրախաց-  
նէք ամենքին երկնային ուրախութեամբ...

Բանից երևաց, որ մեր լուսեղին օրիորդները,  
թէկ մարմնացած՝ բայց չափազանց համեստ, չափա-  
զանց ամօթխած և երկիւղած են եղել. պէտք է եղել  
որ նըանց ստիպէն։ Արէգի խօսքերից խրախուսե-  
լով՝ առաջ անցաւ ծաղկիկը և իրեկ կարգադրիչ՝ մի

պար սարքեց։ Ծխածանի կամարը՝ իբրև մի երկնային բիւրազի քնար, թուժուացրեց իր հազարերանդ թելերը և այնպիսի եղանակներ հնչեց, որ թէ հողեղինների և թէ նոյն իսկ հրեղինների մէջ ձգեց հրաբորքոք մի աշխայց։ Ամեն որ սկսաւ թե առնել թոչիւ չափազանց ուրախութիւնից։ Ֆերերն անգամ թոչկոտում էին և ջանիլների դանդաղկոտութեան վրայ ծիծաղում։ Հետզհետէ այնքան տարացան, որ էլ գւարճութիւն շրմնաց, որ չանեն։ Յօղիկն ու Աղբիւրիկն այնքան զըւարճացրին, որ էլ ոչ որի մէջ ուժ չըմբնաց շատ ծիծաղելուց։ Մերթ Արէգի մօրուքիցն էին բռնում, մերթ նունուֆարի թշերը կսմբթում, և զանազան հաճոյական բաներ փափսում նրանց ականջին։

Արէգը Յօղիկի հետ պարելիս՝ մի խոր հայեացը ձգեց նրա երեսին և փափսաց ականջին։

— Ով համեստափայլ օրիորդ, ես կարծես ճանաչում եմ քեզ... այն, ճանաչս ես զալիս, բայց չեմ փստահանում ասել, փախենում եմ, թէ մի՛ զուցէ սխալւած լինիմ։

— Սխալւած չես, Արէգ, պատասխանեց Յօղիկը, ես նա ինքն եմ։

— Աղաւի աղջիկը։

— Այն։ Արանք էլ բոլորն իմ քոյրերս են...

— Օ՛... զու իմ Աստածուհին ես... զու ինձ նորից տեղծեցիր...

— Ոչ, Արէգ։ Ես զիտէի միայն, որ զու ոչինչ շրգիտես քո մասին։ Այդ իմ մօրս՝ Բարենանի կամը բովն էր եղած։ Նա ուրիշ հնար շունէր այն չար պատին վերացնել աշխարհից։ Պէտք էր քեզ պէս մի

անմեղ և արդար անձն, որ մինչև անգամ չիմանար իր ինչ լինելը և աւելի աղջիկ, քան տղայ համարէք։ Դու երբոր ինձ մօտ տեսար քո կերպարանքը, տեսար որ տղայ ես, այսուամենայնիւ զա քեզ համար մի խաղ էր որ ես խաղացի, ինչպէս որ զու իմ թեկերս վերցնելով՝ ուզեցար մի խաղ խաղալ։ Միայն այս երեկոյին զգացիք, որ տղամարդ ես։ Դու որ մեղաղբում էիր ինձ, մենք թաքուն նայում էինք քեզ վրայ և ծիծաղում...

Յօղիկի այս ակնարկութիւնից ամօթի զգացմունը առաջին անգամ զգաց Արէգը, բայց այնքան սաստիկ էր, ոք նա կարմրեց վարդի պէս և ուզեց խօսակցութեան առարկան ուրիշ բանի վրայ դարձնել, յանկարծ միւս կողմից մի այնպիսի ծիծաղ բարձրացաւ, որ ամենքն էլ այն կողմը դարձրին իրանց ուշաղրութիւնը։

— Զանազանն ու Զարմանազանը պարում էին՝ մէկը վէղիրի տղայի հետ, միւսը սպարապետի։ Ծաղկիկը լսել էր նրանց փափսոցը, նկատել էր, որ նրանք վաղուց աշքաղը են միմեանց և այժմ էլ պսակւելու ցանկութիւն ունին, բայց ամաշում են ասելու։

— Նոր սէր, նոր ուրախութիւն, զոչեց ծաղկիկը մի բարձրածայն ծիծաղով և նորահասներին քաշ տալով՝ տարաւ թագաւորի մօտ և ասաց։ «Մի պսակով ինչ պէտք է լինի, երեքը միասին կատարեցէր»։

Թագաւորն ու Արմանը նրանց էլ օրհնեցին և սկսեց պսակների հանգէսը։ Յօղիկը դարձաւ իբր պսակաղիը նունուֆարի, ծաղկիկը՝ Զանազանի, իսկ Աղբիւրիկը՝ Զարմանազանի։ Պսակի օրհնութիւնը կատարեց թագաւորը ծիծաղանի կամարի տակ, որ այդ

փառաւոր հանդիսին աւելի ևս շքեղութիւն էր տալիս: Թագաւորն էլ իր թագը զբաւ Արէգի պլխին, որով պսակեց նրան և թագաւոր միանգամայն:

Դրանից յետոյ հրեղէն օրիորդները շնորհաւորեցին նորապսակներին և պատրաստեցին երթալու: Հազար տեսակ քաղցրեղէններ և մեղքաջրեր մօտ բերին, բայց հրեղէնք նրանց համը չառան: Նրանք ուրիշ խմելիքներ ունէին իրանց հետ բերած, նրանից խմեցին և խմեցրին նաև նորապսակներին, որոնք ակամայ խմեցին, առանց նրա համն զգալու, բացի Արէգից, որին միայն էր տւած նրա երկնային ճաշակն առնելու շնորհը: Վերջը մի շրջան կազմեցին երկնայինք և, մինչդեռ հրեղէնք վերանում էին ծիածանի սանդուխքով, ասելով՝ «մնացէք բարեհաւ, բարեհաւ... հողեղէնքն էլ նրանց բարի ճանապարհ էին մաղթում երգելով»

Գնացէք բարեաւ, սիրուն աղջիկներ,  
Դուք մեր դաշտերի անմահ Ոգիներ...  
Այս ինչ շնորհք էր, ինչքան մեծ բարիք,  
Որ զուք մարմնացած մեզ երևացիք...  
Այս, երանի թէ միշտ մեզ մօտ մնաք,  
Որ ձեր տեսութեան կարօտը շըզգանք...  
Գնացէք բարեաւ, բարեաւ, բարեաւ...

---

Հրեղէն աղջկէրը վերացան թէ չէ, մէջտեղ եկաւ ծաղրածուն և սկսեց մի նոր զլւարձութիւն:  
— Խնամի թագաւոր, շէն կենայ ըո հօր օջախը, կերանք խմեցինք, լիացանք, ասաց ծաղրածուն ու սկսեց երգել.

Այս թագաւոր, թագաւոր,  
Ինչով ասեմ շնորհաւոր,  
Ոչ հաց ունիս, ոչ գինի,  
Էսպէս հարսնիք կըլինի...  
Եարալլալի, շարալլալի,  
Էսպէս հարսնիք կըլինի...

— Իրաւ, միթէ հաց չըպիտի ուտենք, ասաց թագաւորը: Մենք ամենքս էլ ամեն բան մոռացել ենք, որովհետեւ խելքներս կորցրել ենք, բացի յիմարից, որ խելք չի ունեցել կորցնելու...

— Դու սխալում ես, թագաւոր, պատասխանեց յիմարը, — ես տեսնելով որ զուք իմ հացը կտրել էր, զնացի մի ճոխ սեղան պատրաստել տփի, որ քաղցած շըմնամ: Այս ասելով ծաղրածուն վազեց, բաց արաւ սեղանատան դռները, ուր, յիրաւի, ճոխ ընթրիք կար պատրաստած: Հիւրերը սկսեցին թագաւորի ետեից զուխտ զուխտ մտնել սեղանատուն: Ծաղրածուն տեսնելով, որ ինքը մենակ պիտի մնայ, վազեց մեզ ծանօթ վէղիքի կնոշ մօտ և զլուխ տալով երգեց.

Ով խելք ունի, սէր չունի,  
Ով սէր ունի, տէր չունի,  
Խեղճն ամենից յիմարն է,  
Որ ոչ մի ընկեր չունի:  
Աըի, տիկին, ես ու զու  
Շիտակ խօսք տանք մէկ մէկու,  
Թէ «զու իմն ես, ես՝ քոնը»  
Համաձայն ես, ձեռքըդ տնւր...

Ասաց ծաղրածուն և տիկնոց ձեռքից բռնելով,  
միւսների հետ մոտաւ սեղանատուն...

Միւս առաւօտուն սկսւեց հարսանիքի տօնախըմբ-  
բութիւնը քաղաքացոց ու գիւղացոց համար և տեսեց  
մինչև քառասուն օր և քառասուն գիշեր։ Ամեն մէկ  
օրը մի ըսպէի պէս էր անցնում, այնքան զըւարճա-  
լի էին. ինչ խաղեր, ինչ ծաղրածութիւններ, մըցու-  
թիւններ և հազար ու մի տեսակ օյիններ...

Կերովսումին բնաւ հաշիւ շրկար։ Տասը հազար  
միայն եղ ու կով մորթեցին, քսան հազար ոչխար.  
թող վայրի կենդանիները—եղջերուները, եղնիկները,  
վարագները, թող և թաշուննեզը թէ տանու և թէ  
վայրենի։ Քառասուն հազար սոմար միայն բրինձ  
զնաց վլաւի համար, ինչքան եղ կերթար նըան,  
ինչքան չամիչ... յիսուն հազար կարաս միայն գինի  
խմեց, շըհաշւած միւս քաղցրահամ և դառնահիւթ  
խմիչքները...

Քառասուն օրից յետոյ Արէզը մի թեթև ճանա-  
պարհորդութիւն արաւ Նունուֆարի հետ Վանայ ծո-  
վի վրայ։ Երբոր ծովի ամենախոր տեղն էին հասել,  
Արէզը հանեց չար պառաւի կախարդական գաւաղան-  
ները, որոնք անյայտ մետաղից էին, գժոխքի կրա-  
կով միւտած, և ասաց.

Ո՞վ գաւաղաններ, գնացէք անդունդ,  
Որ էլ չերևաք աշխարհիս վրայ,  
Իշխանութիւնը չար ողիների  
Թողէք մեղանից իսպառ վերանայ։  
Ո՞վ գաւաղաններ, գնացէք անդունդ,  
Որ ոչ մի մարդու էլ չիշացնէք։

Կորէք յաւիտեան որ, էլ ոչ ոքի  
Ազնաւ չըշինէք կամ քարացընէք։  
Թող թագաւորէ բնուլթեան կարզը,  
էլ այսուհետեւ նա չըխանգարէի.  
Թող միայն Երկինքն իշխէ ամեն տեղ,  
Ամեն արարած նըրան խոնարհի...

Այս ասելուց յետոյ գաւաղանները նետեց ծովի  
խորքը և չար ողիների ու նըանց արբանեակների իշ-  
խանութիւնն ու զօրութիւնը վերացրեց աշխարհից։  
Եհա այս ժամանակն էր, որ Երկնքից իշաւ

ԵՌԵՋ ԽՆ ՉՌ

Արէզի ձայնը Երկինքը լսեց  
Եւ իսկոյն Երեք խնձոր վայր զցեց  
Մէկը կանաչ էր այդ խնձորներից,  
Կարծես նոր քաղած գարանան ոստերից.  
Երկրորդը կարմիք՝ վարդի հանգունակ,  
Երրորդն սպիտակ՝ ձիմենի նմանակ։  
Նունուֆարն ասաց. Արէզ, ինչ կասես,  
Այս խնձորներն ինչո՞ւ են պէսպէս.  
— Ես էլ չըդիտեմ, ճշմարիտն ասած,  
Գուցէ մեր կեանքն է ճիշտ օրինակւած.  
Տես, սա կանաչ է, իբր խակ, մանուկ,  
իսկ այս՝ սպիտակ, ինչպէս մի ծերուկ.  
Ամենից սիրուն կարմիքն է միայն,  
Գա է նշանը մեր հասունութեան։  
— Բեր այդ կարմիքը հինց հիմա կտրենք,  
Եւ այսակեղ ևեթ միասին ուտենք...

Նունուֆարն ուզեց,  
Արէգն էլ կտրեց.  
Կարմիր խնձորը միասին կերան,  
Եւ իրանց սրտի փափաղին հասան:

Զեզ էլ կըցանկամ, սիրուն պատահիք,  
Որ մուրազներիդ նրանց պէս հասնիք,  
Կըխնդրեմ միայն որ ինձ էլ ներէք,  
Եթէ պատմածս ձանձրալի գտնէք.  
Զեզ սիրոյ համար ես աշխատեցի,  
Պատմեցի այնքան, ինչքան կարացի.  
Կարծելով՝ որ դուք սիրով կըկարդաք,  
Եւ խեղճ շայիրիս ողօրմի կըտաք...



## Ց Ա Ն Կ

1.	Ծիծեռնակ.	Ղ.	Ա.	.	.	.	.	3
2.	Մաղթանք մանկական.	Ղ.	Ա.	.	.	.	.	4
3.	Գիւլնազ տատի թռոները.	Ղ.	Ա.	.	.	.	.	—
4.	Մանկական խաղ.	Մ.	Մամիկոնեան	.	.	.	.	6
5.	Վիճակի երգեր. (ժողովրդական)	.	.	.	.	.	.	7
6.	Տաւարածի ծաշը.	Ղ.	Ա.	.	.	.	.	8
7.	Հովհի անկողինը.	Ղ.	Ա.	.	.	.	.	—
8.	Ջաղացպանի ննջարանը.	.	.	.	.	.	.	9
9.	Պարզամիտ հովիւ.	Ղ.	Ա.	.	.	.	.	—
10.	Չորս եղանակ.	Մ.	Մամիկոնեան.	.	.	.	.	10
11.	Երկրագործ.	Կ.	Մելիք-Շահնազարեան	.	.	.	.	11
12.	Հատիկ.	Յ.	Յովհաննիսեան.	.	.	.	.	12
13.	Ամպեր.	Կ.	Մ.	Շ.	.	.	.	13
14.	Եղիայի հանարը.	Ղ.	Ա.	.	.	.	.	14
15.	Հնձւորներ.	Ղ.	Ա.	.	.	.	.	15
16.	Ոսկի ձկնիկ.	Ղ.	Ա.	(Փուշկինից փոխառած)	.	.	.	16
17.	Սոխակներ.	Ղ.	Ա.	.	.	.	.	28
18.	Թոշուն. Բարկաս («Աղբիւրից»)	.	.	.	.	.	.	29
19.	Դժւար ընտրութիւն.	Կ.	Մ.	Շ.	.	.	.	30
20.	Երկու քոյր. Գամառ—Քաթիսա	.	.	.	.	.	.	37

21.	Հնարագէտ ջուլհակը. Ղ. Ա.	.	.	39
22.	Քեօրօղին ջաղացան Ղ. Ա.	.	.	46
23.	Հաւլունի թուրը. Գ. Աստուածատրեանց	.		51
24.	Սարդն ու շերամը Ղ. Ա. (փոխաղբութիւն)	59		
25.	Արջը եւ Մեղրուն Կ. Մ. Շ.	.	.	60
26.	Աղւէս եւ Աղաւնի. Ղ. Ա. (փոխաղբութիւն)	—		
27.	Գայլերի ծագումը Ա. Մեհրաբեան (փոփոխած)	62		
28.	Լուսնահաշ. Ղ. Ա.	.	.	63
29.	Գայլ եւ Սիկո. Ղ. Ա. (փոխաղբութիւն).	—		
30.	Գառն ու գայլը. Ղ. Ա. (փոխաղբութիւն).	64		
31.	Բազէն եւ Աղաւնին. Նժղեհ (Ժուկովսկուց)	66		
32.	Անմիտ Ազնիեր. ՔամալեանՍ. (փոփոխած)	67		
33.	Երկու ընկեր. Խ. Արովեան.	.	.	71
34.	Ծառերն ու կացինը. Խ. Արովեան.	.		—
35.	Ցախաւն Ղ. Ա.	.	.	72

ՅԱԻՆ ԵԼԻ Ա Ճ

Արեգնազան կամ Կախարդական Աշխարհ. Ղ. Ա. 79

Հերքիքնակա

21. Անոնչու տունը. 1. Ա. 10  
22. Թիզութիւն նազարեան 2. Ա. 17  
23. Տարրին թուր. 1. Վահագանական 51  
24. Գումա ու շերտ 2. Ա. (փառարթիւն) 59  
25. Խոյս ա. Սպան ա. Բ. Ե. 63  
26. Առեւ և Բալան. Ա. Ա. (փառարթիւն) 63  
27. Տարրին ծաղկութ Ա. Մելուսակ (փառարթ) 63  
28. Լուսաւոր. 1. Ա. 63  
29. Գոյց և Միկո. 2. Ա. (փառարթիւն) 64  
30. Գումա ու գոյց. 2. Ա. (փառարթիւն) 64  
31. Աշետ և Աղասին աշետ (Փուլուսուն) 66  
32. Ալեքս և Վահ. Բանավան (փառարթ) 67  
33. Երկու բազեր. Ա. Աղմական 73  
34. Ծակեր ու խաղու. Բ. Աղմական 73  
35. Տափակ 1. Ա. 73

ՅԱՀԻՆ ՀԱՅՈՒՅՈՒՆ

Աղմական կոմ տունարդական Աշխարհ. 2. Ա. 70

Յ  
Հ  
Ղ  
Գ

ՀՀ Ազգային գրադարան



NL0242009

7743